# Էթնոսոցիալական փոփոխությունները հայկական սփյուռքում

ԼՈՒՍԻՆԵ ՏԱՆԱՋՅԱՆ

ИНСТИТУТ АХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ НАН РА

ЛУСИНЕ ТАНАДЖЯН

# ЭТНОСОЦИАЛЬНЫЕ ИЗМЕНЕНИЯ В АРМЯНСКОЙ ДИАСПОРЕ

INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY NAS RA

LUSINE TANAJYAN

# ETHNO-SOCIAL CHANGES IN THE ARMENIAN DIASPORA

ИЗДАТЕЛЬСТВО ИАЭ
ЕРЕВАН 2023

PUBLISHING HOUSE IAE
YEREVAN 2023

ՀՀ ԳԱԱ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԼՈՒՍԻՆԵ ՏԱՆԱՋՅԱՆ

# ԷԹՆՈՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ՀԱՅ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2023

*Տպագրվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ*

Պատասխանատու խմբագիր՝
պատմական գիտությունների դոկտոր *Ռուբեն Կարապետյան*

Գրախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
*Սամվել Մկրտչյան*
պատմական գիտությունների դոկտոր
*Միհրան Գալստյան*

ՀՏԴ 316.34:39:93/94:008
ԳՄԴ 60.54+63.5+63+71
Տ 200

Տանաջյան Լ. Ա.

Տ 200 Էթնոսոցիալական փոփոխությունները հայկական սփյուռքում / Լ. Ա. Տանաջյան. – Եր.: ՀՀ ԳԱԱ ՀԱԻ հրատ.ն, 2023. – 137 էջ:

Մենագրությունը նվիրված է ժամանակակից հայկական սփյուռքում տեղի ունեցող էթնոսոցիալական գործընթացների համեմատական վերլուծությանը: Լոս Անջելես, Թեհրան և Բեյրութ քաղաքներում հեղինակի իրականացրած հետազոտությունները թույլ են տվել բացահայտել հայկական սփյուռքի նշված համայնքներում էթնոմշակութային գործընթացների, սոցիալական տեղաշարժերի առանձնահատկությունները, միտումները, ինչպես նաև այդ փոփոխությունները պայմանավորող գործոնները ու դրանցից բխող նոր զարգացումները: Գիրքը նախատեսված է պատմաբանների, ազգագրագետների, սոցիոլոգների, Սփյուռքի հարցերով զբաղվող հետազոտողների և ընթերցողների լայն շրջանակի համար:

ՀՏԴ 316.34:39:93/94:008
ԳՄԴ 60.54+63.5+63+71

ISBN 978–9939–886–50–3

© Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2023

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 7

ՄԱՍ 1.
Սոցիալական փոփոխությունների
էթնիկական բաղադրիչը.
տեսական-մեթոդաբանական մոտեցումներ 15

ՄԱՍ 2.
Էթնոմշակութային միջավայրի և սոցիալական
փոփոխությունների փոխկապվածությունը Լոս Անջելեսի,
Թեհրանի և Բեյրութի հայկական համայնքներում 44

ՄԱՍ 3.
Սոցիալական տեղաշարժերի ընդհանուր
և առանձնահատուկ կողմերը Լոս Անջելեսի,
Թեհրանի և Բեյրութի հայերի շրջանում 76

ԱՄՓՈՓՈՒՄ 112

РЕЗЮМЕ 117

SUMMARY 121

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ
ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 124

ԳՐՔԵՐ ԵՎ ՀՈԴՎԱԾՆԵՐ 124

ԴԱՇՏԱՅԻՆ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ 134

## ՆԱԽԱԲԱՆ

Աշխարհում անընդմեջ տեղի ունեցող միգրացիաները ժամանակակից սփյուռքներում առաջ են բերում մի շարք էթնոսոցիալական և էթնոմշակութային գործընթացներ: Նման զարգացումների ֆոնին առանձնահատուկ դեր ունեն էթնիկ միգրանտների ինտեգրման սոցիալ-մշակութային պայմանները, որոնք պայմանավորված են միգրանտների սոցիալական բնութագրիչների փոփոխությամբ: Նման փոփոխություններն ուսումնասիրելու անհրաժեշտությունը, այդ խմբերի էթնոմշակութային առանձնահատկությունների հետ փոխկապվածության մեջ, ավելի քան ակնհայտ է դառնում: Հենց այդ փոխհարաբերություններում են դրսևորվում բազմաթիվ խնդիրներ՝ ազդելով ինտեգրման, դրա ուղղության և բովանդակության վրա, ինչն էլ իր հերթին խնդիրներ է ստեղծում ինչպես այդ խմբերի, այնպես էլ ընդունող երկրների համար:

Այս առումով առանձնահատուկ նշանակություն ունեն առանձին էթնոսոցիալական խմբերի սոցիալական փոփոխությունների էմպիրիկ ուսումնասիրությունները, որոնք հնարավորություն են տալիս բացահայտել բնույթը և նշանակությունը այդ խմբերի զարգացման և ինտեգրման գործում:

Աշխատանքը հիմնված է երեք քաղաքներում հայերի շրջանում հեղինակի կողմից իրականացրած հետազոտական նյութերի վրա, որոնք լույս են սփռում տարբեր համայնքներում սոցիալական գործընթացների և տեղաշարժերի առկա իրավիճակի, հիմնական միտումների և շարժընթացի վրա:

Առհասարակ էթնիկ խմբերի տարածական և սոցիալական տեղաշարժերի արդյունքում տեղի ունեցող փոփոխությունները ունեն

էթնիկական համատեքստ, քանի որ դրանք տեղի են ունենում էթնիկ խմբի և միջավայրի փոխազդեցության մեջ: Այս գործընթացը բազմազան է թե՛ իր բովանդակությամբ, թե՛ ինտենսիվությամբ և դրա նորովի իմաստավորման խնդիրը դառնում է խիստ կարևոր՝ հասկանալու ժամանակակից հայկական սփյուռքում տեղի ունեցող սոցիալ-մշակութային փոփոխությունների բնույթը և ուղենշելու դրանց հետագա զարգացումը:

Նշված գործընթացները, ունենալով իրենց ընդհանուր տրամաբանական օրինաչափությունները, այդուհանդերձ, յուրահատուկ են առանձին դեպքերի համար: Վերջինս գիտական ուսումնասիրությունների դաշտում առանձնահատուկ կարևորություն է ստանում: Դրանով է բացատրվում տվյալ հիմնահարցի վերաբերյալ գիտական հետաքրքրության աճը, որը պայմանավորված է հատկապես այլազգի միջավայրում էթնիկ խմբի ինտեգրման կամ հակառակը՝ մեկուսացման մեխանիզմների իմաստավորման խնդրի անհրաժեշտությամբ: Այդ մեխանիզմների բացահայտումը հիմք կարող է դառնալ ժամանակակից էթնոսոցիալական գործընթացների զարգացման հեռանկարի տարբեր խնդիրների լուծման համար: Վերջինս կապված է սոցիալական և էթնիկ բաղադրիչների միջև փոխազդեցության առանձնահատուկ և ընդհանուր դրսևորումների որոշակիացման հետ: Այսպիսով, էթնիկ խմբում կատարվող փոփոխություններն անհրաժեշտ է դիտարկել սոցիալական համատեքստում՝ հիմք ընդունելով դրա և՛ էթնիկական, և՛ սոցիալական հատկանիշները: Վերջիններիս փոխհարաբերության բնույթն իմաստավորելու համար անհրաժեշտ է դիմել յուրաքանչյուրի առանձնահատկության բացահայտմանը:

Այդ գործընթացների բացահայտման նպատակով որպես առանձին դեպքեր կարելի է դիտարկել սփյուռքները և դրանց առանձին համայնքները: Սփյուռքը հարափոփոխ երևույթ է և անընդհատ փոխակերպվում է իր քանակական և որակական կողմերով: Այս պարագայում կարևորվում են սոցիալական փոփոխությունների էթնոմշակութային հետևանքները, որոնց արդյունքում սփյուռքում ձևավորվում են նոր էթնոսոցիալական խմբեր:

Այս համատեքստում այլազգի միջավայրում գտնվող սփյուռքյան խմբերում ընթացող էթնոսոցիալական փոփոխությունները գտնվում են հանրության, քաղաքական գործիչների և գիտական շրջանակների ուշադրության կենտրոնում:

Այդ ուղղությամբ իրականացվող ուսումնասիրությունները պարունակում են ինչպես նշված գործընթացների կարգավորման և մշակման տեսական մոտեցումներ, այնպես էլ իրավիճակային վերլուծությանն ուղղված նոր էմպիրիկ հետազոտական նյութեր: Հետազոտական մակարդակում սփյուռքի յուրաքանչյուր համայնք առանձնահատուկ դեպք է՝ պայմանավորված ընդունող երկրի պայմանների, համայնքի անդամների քանակի, բնակության ժամանակահատվածի և այլ հատկանիշի առանձնակիությամբ:

Պատահական չէ, որ շատ հեղինակներ դիմում են հատուկ հետազոտությունների, որոնց փորձը թույլ է տալիս կողմնորոշվել դրանց մեխանիզմների ճանաչման և, հետևաբար, կարգավորման ուղիների որոնման գործում: Հատկապես դիտարկվում է այլազգի միջավայրում գտնվող էթնիկ խմբի էթնոսոցիալական առանձնահատկությունների դրսևորման և դրանց համահարթման գործընթացների ուսումնասիրությունը՝ շեշտադրելով սոցիալական տեղաշարժերը: Դրանք մի կողմից կարող են վերհանել այդ փոփոխությունների որակական հատկանիշները, մյուս կողմից՝ սահմանել էթնոմշակութային փոփոխությունների բնույթը և ուղղվածությունը: Սույն ուսումնասիրության հիմնական կանխավարկածն այն է, որ էթնիկ խմբի սոցիալական հատկանիշների փոխակերպման բնույթն է պայմանավորում այլ էթնոսոցիալական միջավայրում գտնվող այդ նույն խմբի ինտեգրման առանձնահատկությունները:

Սփյուռքի տարբեր խմբեր, որպես տվյալ հասարակության առանձին էթնիկ հանրույթներ, նույնպես բնորոշվում են սոցիալական, մշակութային և այլ հատկանիշների անընդհատ փոփոխությամբ: Եվ այստեղ է, որ առաջ է գալիս այդ խմբերի էթնոսոցիալական ներուժի գնահատման և փոփոխվելու հնարավորության ուսումնասիրության անհրաժեշտությունը:

Այսպիսով, օտար միջավայրում գտնվող էթնիկ հանրույթների սոցիալական հատկանիշների փոփոխություններն իրենց հերթին հանգեցնում են դրանց էթնոմշակութային առանձնահատկությունների փոփոխություններին: Այս խնդիրը վառ արտահայտված է հատկապես սփռված էթնիկ հանրույթների շրջանում, որոնց կենսագործունեությունն ընթանում է միմյանցից տարբեր այլ էթնիկ միջավայրերում: Սա պայմանավորված է բազմաթիվ գործոններով, որոնցից հարկ է առանձնացնել տարբեր տարածաշրջանների տնտեսական զարգացման առանձնահատկությունները, երկրների քաղաքական և ազգային, կրոնական յուրահատկությունները, միջավայրերի առանձնակիությունը և այլն: Այս գործոններից յուրաքանչյուրն առանձին և ընդհանրության մեջ սահմանում է միևնույն էթնոսի տարբեր խմբերի փոփոխությունների ուղղվածությունը:

Մենագրությունը նպատակ ունի պարզել սփյուռքում հայերի սոցիալական փոփոխությունների ընթացքը Լոս Անջելեսի, Թեհրանի և Բեյրութի հայկական համայնքների համեմատական վերլուծության միջոցով, ցույց տալ երեք տարբեր միջավայրերում հայերի միջսերնդային և ներսերնդային սոցիալական շարժունության առանձնահատկությունները: Ուսումնասիրության օբյեկտ են հայկական սփյուռքի նշված երեք խմբերը: Այս քաղաքներում կենտրոնացած են զգալի թվով հայեր: Դրանց մեջ կան ծագման տարբեր երկրներից ձևավորված համայնքներ, իսկ որոշներում նույն ծագմամբ հայերն են գերակշռում:

Նշյալ հայկական համայնքների ընտրությունը պայմանավորված է այդ այդ քաղաքներում հայերի մեծ թվաքանակով և տարբերվող այլազգի միջավայրերում հարուստ կենսափորձով: Բացի դա, նշված խմբերի թիրախավորումը բացատրվում է տարբեր պայմաններում փոփոխականների մոտավորապես միանման ամբողջության համեմատությամբ և վերլուծությամբ, ինչը ենթադրում է միաէթնիկ-բազմաէթնիկ, մոտ-հեռու և այլակրոն միջավայր, հին և նոր գաղթօջախներ, բնակության պարզ, բարդ, հավաք և ցրիվ ձևեր և այլն[1]:

---

1 Ռ. Կարապետյան, Սեփական և այլազգ միջավայրում հայերի համեմատական

Մենագրության մեջ դաշտային նյութերի հիման վրա խնդիր է դրվում տալ սոցիալ-մասնագիտական շերտերի դասակարգում, որը հիմնված է նոր մոտեցման վրա և կարող է կիրառվել տարբեր միջավայրերում տարբեր դեպքերի համադրական ուսումնասիրություններ իրականացնելիս:

Սփյուռքի տարբեր համայնքներում իրականացրած հետազոտությունների նյութերի հիման վրա փորձ է արվում ցույց տալ հայերի սոցիալական կազմի, զբաղեցրած սոցիալական շերտերի առնձնահատկությունները՝ պայմանավորված բնակության երկրի և ազգային հատկանիշների առանձնահատկությամբ:

Գրքում քննարկվում են Լոս Անջելեսի, Թեհրանի, Բեյրութի հայերի սոցիալական փոփոխությունների օրինաչափությունները էթնոսոցիալական գործընթացների համատեքստում այլազգի միջավայրում, ցույց է տրվում հայկական սփյուռքում էթնոմշակութային միջավայրի դերը սոցիալական տեղաշարժերի գործում: Փորձ է արվում նաև դուրս բերել սոցիալական գործընթացները չափող համընդհանուր ցուցիչներ երեք քաղաքների հայերի շրջանում, համեմատել նրանց սոցիալ-մասնագիտական կազմը և դինամիկան, ինչպես նաև բացահայտել սոցիալական շարժունությունը պայմանավորող գործոնները, ներսերնդային և միջսերնդային սոցիալական շարժունության առանձնահատկությունները:

Հայկական սփյուռքի երեք տարբեր համայնքներ ուսումնասիրվել են մեթոդաբանության լայն կիրառմամբ՝ ներառելով քանակական և որակական մեթոդներ, և համեմատության միջոցով ցույց է տրվել սփյուռքում տեղի ունեցող սոցիալական փոփոխությունների առանձնահատկությունները: Կիրառվել է երեք համայնքներում հայերի սոցիալ-մասնագիտական կազմի խմբավորման հայեցակարգային մոտեցում, որտեղ դուրս են բերվել համեմատման-համադրման համար անհրաժեշտ փոփոխականներ:

---

հետազոտության հիմնական ուղղությունները. խնդիրներն ու հեռանկարները, «Հայրենիք-Սփյուռք առնչությունները հայկական մամուլում. Հայաստանի և Սփյուռքի թերթերի կոնտենտ անալիզ», խմբ. Ռ. Կարապետյան, Երևան, 2012, էջ 19:

Սփյուռքում սոցիալական փոփոխությունների ուսումնասիրությունն ունի և՛ տեսական, և՛ գործնական նշանակություն: Դա բացատրվում է նրանով, որ այդ ուսումնասիրությունները ժամանակակից Սփյուռքում սոցիալ-ժողովրդագրական և էթնոմշակութային բնութագրիչները նկարագրող փաստական նյութեր են: Այս փորձը նաև նոր մոտեցում է սփյուռքի ուսումնասիրության տեսամեթոդաբանական շրջանակում, ինչը կարևոր է սոցիալական փոփոխությունների տեսության, սփյուռքագիտության, էթնոսոցիոլոգիայի և այլ գիտակարգերի զարգացման տեսանկյունից: Գործնական տեսանկյունից աշխատությունը կարևորվում է մի քանի ուղղություններով՝ սփյուռքի քարտեզագրման, ներուժի գնահատման, տվյալ համայնքի հետ և Հայաստան-սփյուռք փոխհարաբերությունների կառուցման, ՀՀ կողմից սփյուռքի քաղաքականության և ռազմավարության մշակման, ինչպես նաև ՀՀ-ում սփյուռքի ներուժի ներառման տեսանկյունից:

Հետազոտության տեսամեթոդաբանական հիմքը ներառել է սփյուռքի ուսումնասիրության, սոցիալական փոփոխությունների և շերտավորման դասական հայեցակարգային մոտեցումները, որոնք դիտարկվել են համեմատական վերլուծության մեթոդով: Որպես էմպիրիկ վերլուծության մեթոդներ են ընտրվել. ա) տվյալների տեսական վերլուծություն (համակարգային-կառուցվածքային վերլուծություն, գիտական գրականության վերլուծություն, ընդհանրացում, մեկնաբանություն), բ) տվյալների վիճակագրական մշակում (SPSS վիճակագրական փաթեթ սոցիալական գիտությունների համար), գ) տվյալների մեկնաբանություն տիպաբանման, կորելացիոն կապերի և գրաֆիկների վերլուծություն:

Հաշվի առնելով ուսումնասիրության օբյեկտի բազմաշերտությունն ու բարդությունը՝ հետազոտությունն իրականացվել է որակական և քանակական հետևյալ մեթոդների համալիր կիրառմամբ: Կիրառվել են ձևայնացված հարցումներից, խորքային հարցազրույցներից, դիտարկման արդյունքներից ստացված տվյալները, որոնք հեղինակի կողմից իրականացվել են Լոս Անջելես (ԱՄՆ), Թեհրան (ԻԻՀ) և Բեյրութ (ԼՀ) քաղաքներում համապատասխանաբար՝ 2013, 2014 և

2015 թթ.: Մենագրության մեջ օգտագործվել են նաև այլ հետազոտողների կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքները, ինչպես նաև այլ երկրորդային տվյալներ: Խորքային հարցազրույցները իրականացվել են հայկական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ (63 հարցազրույց): Այս մեթոդը թույլ է տվել համայնքներում գրեթե բոլոր խմբերի, շերտերի հետ կապ հաստատել և հավաքագրված տեղեկատվության մեջ ապահովել գրեթե բոլոր կողմերի ներգրավվածություն: Դրանք ներառել են այդ քաղաքներում ապրող հայերի կարգավիճակի, նրանց մասին էթնիկ շրջապատի մոտ եղած կարծրատիպերի, սոցիալ-մասնագիտական շերտերի, մշակութային, կրթական, կրոնական և այլ հարցերի մասին տեղեկատվություն:Առաջին քայլով յուրաքանչյուր քաղաքում առանձնացվել են գործող հիմնական հայկական կազմակերպությունները, որոնցից ընտրվել են համայնքի համար էական ազդեցություն ունեցողները՝ ըստ փորձագետների կամ եղած գրավոր աղբյուրների, թերթերի հրապարակումների: Հավաքագրված կազմակերպությունները ներառել են մի քանի խմբեր՝ կուսակցություններ, հայրենակցական միություններ, կրթական հաստատություններ, եկեղեցիներ, բարեգործական կազմակերպություններ, ԶԼՄ-ներ, գրատներ, գրադարաններ, մշակութային կազմակերպություններ, ազգային հարցերով զբաղվող կառույցներ, հասարակական կազմակերպություններ, համայնքում ակտիվ գործող անհատներ: Յուրաքանչյուր խմբից ընտրվել են մեկ կամ մի քանի կազմակերպություններ, որոնց համապատասխան ներկայացուցիչների հետ անցկացվել է հարցազրույց՝ նախապես մշակված հարցաշարով: Այս մեթոդը թույլ է տվել դուրս բերել տարբեր օղակներում ներգրավված մասնագետների և համայնքում նշանակալի անձանց կամ կազմակերպությունների կարծիքները՝ համայնքներում ընթացող էթնոսոցիալական փոփոխությունների վերաբերյալ ընդհանուր համատեքստում: Զանգվածային հարցումներն իրականացվել են Լոս Անջելեսի, Թեհրանի, Բեյրութի հայերի շրջանում[2]՝ քվոտային ընտրանքով, ձնագնդի

[2] Էթնոսոցիոլոգիական հետազոտություններն իրականացվել են քանակական և

տեխնիկայով: Քվոտային ընտրանքի համար հիմք են ծառայել մի շարք ցուցիչներ՝ ծագումը (տարբեր երկրներից ներգաղթած և տեղացի), սեռը, տարիքը, կրթությունը: Հարցմանը մասնակցել են Թեհրանում՝ 230, Բեյրութում՝ 250, Լոս Անջելեսում՝ 450 անձ: Քանակական վերլուծությունը հնարավորություն է տվել ստանալ սոցիալական տեղաշարժերի երկսերունդ դինամիկ պատկերը՝ այլ ցուցիչների հետ փոխկապվածության մեջ հայկական համայնքներում: Ինչպես նաև կիրառվել է դիտարկման մեթոդը, որը թույլ է տվել գնահատել առկա իրավիճակը տվյալ համատեքստում ընդունող երկիր-համայնք երկկողմ հարաբերություններում, ինչպես նաև հաշվի առնել ներհամայնքային կյանքի և փոխհարաբերությունների որոշ կողմեր: Տվյալների վերլուծությունն իրականացվել է նկարագրական վերլուծության և ռետրոսպեկտիվ վերլուծության մեթոդներով:

Հետազոտությունն իրականացվել է «Սեփական և այլազգի միջավայրում հայերի համեմատական հետազոտության հիմնական ուղղությունները. ուսումնասիրության խնդիրներն ու հեռանկարները» նպատակային ծրագրի շրջանակներում[3]:

Մենագրությունը բաղկացած է երեք հիմնական մասերից.

որակական մեթոդներով՝ «Սեփական և այլազգի միջավայրում հայերի համեմատական հետազոտության հիմնական ուղղությունները. ուսումնասիրության խնդիրներն ու հեռանկարները» նպատակային ծրագրի շրջանակներում (2011–2019): Ծրագիրն իրականացվել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի սփյուռքի հետազոտությունների բաժնի կողմից (հմմտ.՝ Սեփական և այլազգի միջավայրում հայերի համեմատական հետազոտության հիմնական ուղղությունները. խնդիրներն ու հեռանկարները, «Հայրենիք-Սփյուռք առնչությունները հայկական մամուլում. Հայաստանի և Սփյուռքի թերթերի կոնտենտ անալիզ», խմբ. Ռ. Կարապետյան, Երևան, 2012, էջ 19):

3 Էթնոսոցիոլոգիական հետազոտություններն իրականացվել են քանակական և որակական մեթոդներով՝ «Սեփական և այլազգի միջավայրում հայերի համեմատական հետազոտության հիմնական ուղղությունները. ուսումնասիրության խնդիրներն ու հեռանկարները» նպատակային ծրագրի շրջանակներում (2011–2019): Ծրագիրն իրականացվել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի սփյուռքի հետազոտությունների բաժնի կողմից (հմմտ.՝ Սեփական և այլազգի միջավայրում հայերի համեմատական հետազոտության հիմնական ուղղությունները. խնդիրներն ու հեռանկարները, «Հայրենիք-Սփյուռք առնչությունները հայկական մամուլում. Հայաստանի և Սփյուռքի թերթերի կոնտենտ անալիզ», խմբ. Ռ. Կարապետյան, Երևան, 2012, էջ 19):

Գրքի առաջին մասում քննարկվում են սոցիալական և էթնիկական բաղադրիչների փոխկապվածությունը, սոցիալական փոփոխությունների առանձնահատկությունները էթնիկ խմբում և սփյուռքում:

Երկրորդ մասի հիմնական նպատակն է ցույց տալ միմյանցից տարբերվող հայկական սփյուռքի տարբեր հատվածների միջավայրային առանձնահատկությունները: Ներկայացված որակական և քանակական բնույթի հետազոտական նյութերի վերլուծությունը, ինչպես նաև այլ երկրորդային տվյալները թույլ են տվել դուրս բերել համայնքային տարբեր միջավայրերը մի քանի ասպեկտներով, ցույց տալ սփյուռքում հայերի էթնոսոցիալական և էթնոմշակութային վարքի առանձնահատկությունները՝ ըստ մի շարք ցուցիչների:

Երրորդ մասում շեշտադրվում են սոցիալական շարժունության երևույթը, դրա տեսակները և այլազգի միջավայրում դրա առանձնահատկությունները: Հատկապես այլազգի միջավայրում առանձին խմբերի ուսումնասիրության ժամանակ կարևոր նշանակություն է ստանում ներսերնդային և միջսերնդային սոցիալական շարժունության դրսևորումների քննարկումը: Այս մասում դիտարկվում են սփյուռքյան տարբեր միջավայրերում հայերի սոցիալ-մասնագիտական տեղաշարժերի առանձնահատուկ կողմերը՝ քանակական և որակական հետազոտությունների տվյալների հիման վրա, սփյուռքյան տարբեր համայնքների սոցիալ-մասնագիտական կազմի առանձնահատկությունները մի շարք փոփոխականների հետ փոխկապվածության մեջ:

# ՄԱՍ 1.

# ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԷԹՆԻԿԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉԸ. ՏԵՍԱԿԱՆ-ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

Սոցիալական փոփոխությունները միտված են կանխորոշելու հասարակական գործընթացների ուղղվածությունն ու զարգացման ընթացքը, ինչի պատճառով մշտապես եղել են հասարակական գիտությունների տեսաբանների ու էմպիրիկ հետազոտողների ուշադրության կենտրոնում: Սոցիալական փոփոխությունները, որպես քննարկման առարկա, առաջին հերթին ունեն հասկացությունների ճշգրտման կարիք: Գիտական համակարգում սոցիալական փոփոխություն հասկացությունն իր մեջ ներառել է բազմաթիվ տեսություններ և հայեցակետեր, որոնք, ըստ էության, բացատրում են սոցիալական փոփոխությունների օրինաչափություններն ու դրանց ազդեցությունը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում: Սոցիալական փոփոխությունները գիտական համակարգում առավել լայն և ընդհանուր հասկացություններից են, ինչը նպաստում է նոր մոտեցումների և սահմանումների անընդհատ նորացմանը, վերասահմանմանը:

Ընդհանուր առմամբ, որոշ տեսաբանների կողմից սոցիալական փոփոխությունների ընդգրկուն շրջանակը դիտարկվում է մի քանի մոտեցումներով՝ սոցիալական առաջընթաց, սոցիալական հետընթաց, էվոլյուցիա, սոցիալական փոխակերպում և այլն:

Սոցիալական փոփոխության երևույթը և դրա դերը էթնիկ գործընթացներում հասկանալու համար նախ անդրադառնանք դրան բնորոշող եզրույթների, հասկացությունների տեսական մեկնաբանություն-

ներին[4]: Գիտական շրջանակներում սոցիալական փոփոխության դասական մեկնաբանումները տվել են դեռևս Օ. Կոնտը և Հ. Սպենսերը[5]: Նրանք առաջ քաշեցին այն դիտարկումը, որ սոցիալական փոփոխությունները ենթադրում են որոշակի կառուցվածքի (լինի դա հասարակություն, սոցիալական խումբ, կազմակերպություն, թե անհատ) վերաձևավորում մեկ այլ վիճակի:

Հետագայում գիտական գրականության մեջ առաջ եկան սոցիալական փոփոխությունների բազմաթիվ տեսություններ, հայեցակարգեր և ուղղություններ: Դրանց շարքում առավել ուսումնասիրված և ճանաչված են՝ էվոլյուցիոնիստական, նեո-էվոլյուցիոնիստական և ցիկլային փոփոխությունների տեսությունները[6]:

Էվոլյուցիոն տեսության մեջ սոցիալական փոփոխությունները դիտարկվում են որպես վերընթաց շարժում հասարակության ավելի պարզ վիճակից դեպի բարդը: (Օ. Կոնտ, Հ. Սպենսեր, Ս. Սիմոն): Նրանց կարծիքով, յուրաքանչյուր էվոլյուցիոն գործընթաց հանգեցնում է հետևյալ երկու փոխկապված գործընթացների՝ կառուցվածքի դիֆերենցիացիա և առաջացած մասերի ինտեգրացիա մեկ այլ՝ ավելի բարդ մակարդակում: Ֆունկցիոնալիստների տեսանկյունից սոցիալական փոփոխությունները դիտվում են որպես համակարգի ադապտացման արդյունք տվյալ միջավայրին:

Այս մոտեցման հետևորդները հակված էին կարծել, որ իրենց առաջարկած սոցիալական փոփոխությունների մոդելները ճշգրիտ էին ցանկացած տեսակի հասարակության համար, որոնք անցնում էին (կամ պետք է անցնեին) միևնույն ճանապարհը՝ առավել ցածր, ելակետային վիճակից դեպի զարգացում: Իհարկե, այս տեսությունը դրական նշանակություն ունեցավ հասարակության զարգացման բազմաբնույթ պատճառների որոշակիացման համար, սակայն միաժամանակ այն լիովին չէր բացահայտում հասարակական կյանքի և կառուցվածքի ճգնաժամերը, զագացման խոչընդոտներն ու անկումները:

4 Танаджян 2017, 175–184.

5 McLennan, 2011, 192.

6 Berger 1971, 302.

էվոլյուցիոնիզմը չէր կարող նաև բացատրել այն գործընթացները և երևույթները, որոնք առաջանում էին կարճատև պատմական ժամանակահատվածում, քանի որ այն հասարակությունը դիտարկում էր լայն պատմական հեռանկարում:

Այս տեսանկյունից էվոլյուցիոնիստական տեսությունները մեծամասամբ բացատրում են սոցիալական փոփոխություններն էնդոգեն (ներքին) պատճառներով՝ համարելով հասարակությունը կենսաբանական օրգանիզմ: Մյուս՝ էկզոգեն մոտեցումը ներկայանում է դիֆուզիայի տեսությամբ, երբ մի մշակութային մոդելը ներթափանցում է մեկ այլի մեջ: Սփյուռքի պարագայում առավել գերակա է երկրորդ մոտեցումը: Հայկական սփյուռքի տարբեր համայնքներում կարող ենք տեսնել, ինչպես են հայերի առանձին խմբերը որոշակի եղանակ ու միջավայր ստեղծում տարբեր երկրներում: Ինչպես օրինակ, Լոս Անջելեսում հայկական համայնքում մի շարք միություններ (ոսկերիչների, բժիշկների խմբեր) տվյալ հասարակության մեջ իրենց ակտիվությամբ ներգրավում են նաև տեղի հասարակության անդամներին: Մասնագիտական նմանատիպ խմբերը հատուկ գործողությունների, իրադարձությունների միջոցով իրենց մշակույթն են ներկայացնում այդ հասարակությունում՝ դրանով իսկ ստեղծելով սոցիալական կապեր, մշակութային փորձի փոխանակում տեղի բնակչության հետ, ինչպես նաև ապահովում են նոր ներգաղթող հայերի ներգրավումն ընդհանուր սոցիալական միջավայր:

Դասական էվոլյուցիոնիստները կողմ են այն տեսանկյունին, որ էվոլյուցիան խիստ գծային վերընթաց և միանման սցենարով զարգացող փոփոխություն է: Այս մոտեցումն իհարկե միանշանակ չէ, և հանդիպել է մի շարք փաստարկների վրա հիմնված բազում քննադատությունների[7]: Փաստարկները հիմնվում են հետևյալ պնդումների վրա՝ 1) շատ պատմական իրադարձություններ ունեն սահմանափակ և պատահական բնույթ, 2) մարդկային համախմբությունների բազմաբնույթ աճը չի թողնում դատել միասնական էվոլյուցիոն գործընթացի մասին, 3) սոցիալական համակարգերի աճող կոնֆլիկտայնությունը չի համա-

[7] William 1964, 384.

պատասխանում փոփոխությունների վերընթաց և գծային էվոլյուցիային, 4) պատմության ընթացքում պետությունների, էթնոսների և քաղաքակրթությունների անկման և ոչնչացման դեպքերը թույլ են տալիս դատել ոչ միանման էվոլյուցիոն սցենարի մասին: Ակնհայտ է, որ սոցիալական փոփոխությունների գծային պատկերացումը ունի որոշակի միակողմանիություն իր բացատրություններում, որը փորձել են լրացնել այլ հայտնի նեոէվոլյուցիոնիստներ: Այնպիսի հետազոտողներ, ինչպիսիք են՝ Թ. Պարսոնսը, Ջ. Ստյուարտը և ուրիշները, հեռանալով դասական էվոլյուցիոնիզմից, առաջարկում են իրենց տեսական մոտեցումները սոցիալական փոփոխությունների վերաբերյալ: Մասնավորապես, ըստ նեոէվոլյուցիոնիստների՝ յուրաքանչյուր հասարակություն իր կառուցվածքով և մշակույթով ունի էվոլյուցիոն զարգացման իր տրամաբանությունը: Այստեղ հիմնականում շեշտը դրվում է ոչ թե պարտադիր փուլերի հաջորդականության, այլ՝ փոփոխությունների պատճառների վրա: Այս մոտեցման համաձայն՝ էվոլյուցիոն գործընթացներն ընթանում են ոչ թե գծային վերընթաց և հավասարաչափ ձևով, այլ՝ թռիչքաձև: Այս կապակցությամբ հետաքրքրական է սոցիալական փոփոխությունների ցիկլային մոտեցումը: Տվյալ մոտեցումը իր զարգացումն է ստացել Ա. Թոյենբիի աշխատություններում: Այն հնարավորություն է տալիս դիտարկել սոցիալական փոփոխությունններն անընդհատ թարմացվող շրջափուլային (ցիկլիկ) շարժման մեջ, ինչն առավել նպատակահարմար է սոցիալական փոփոխությունների օրինաչափությունների բացահայտման համար: Ընդ որում, յուրաքանչյուր շրջափուլ, որն իր մեջ ներառում է անցումներ սկզբնակետից մինչև զարգացում, ապա՝ անկումից մինչև քայքայում, կարող է ընթանալ տարբեր ինտենսիվությամբ: Այս տեսության շրջանակներում Ա. Թոյենբին և Օ. Շպենգլերն ընդգծում են ընթացող սոցիալական գործընթացների բազմազանությունը՝ դրանով իսկ մոտենալով էթնիկ գործընթացների սոցիալական համատեքստին:

Այս մոտեցման հիմնական դրույթներն են՝

- շրջափուլային գործընթացները լինում են փակ, երբ յուրաքանչյուր փուլ վերադարձնում է համակարգն իր ելակետային վի-

ճակին, և բաց, երբ որոշակի փուլերի կրկնությունն իրականանում է այլ մակարդակի վրա (ավելի բարձր կամ ցածր)

- ցանկացած սոցիալական համակարգ իր զարգացման մեջ անցնում է հաջորդականության հետևյալ փուլերը՝ ծագում, զարգացում (հասունացում), անկում, քայքայում
- համակարգի զարգացման փուլերը, որպես կանոն, ունեն տարբեր հաճախականություն և ժամանակային կտրվածք:

Սոցիալական փոփոխությունների մեջ հատկապես կարևոր դեր ունի սոցիալական փոխակերպումների տեսությունը[8]: Վերջինս պայմանավորված է այն հանգամանքով, որ վերջին 50–70 տարիների ընթացքում տեղի ունեցող բուռն փոփոխությունները՝ կապված տեխնոլոգիական, ապա նաև տնտեսական, քաղաքական և այլ զարգացումների հետ, հանգեցրին հասարակական հարաբերությունների, ժողովրդագրական գործընթացների նշանակալի վերափոխումներին, ինչն էլ իր հերթին բերեց կտրուկ սոցիալական փոփոխությունների: Վերջինիս արդյունքում տեղի ունեցող փոփոխությունները բացատրելու համար առաջ քաշվեց սոցիալական փոխակերպում եզրույթը: Մի շարք մոտեցումների հիման վրա, կարելի է ասել, որ XX-րդ դարի սոցիալական փոխակերպումներն առաջանում են անսպասելիորեն, ունեն համընդգրկուն բնույթ և տարածվում են կյանքի բոլոր բնագավառներում[9]: Սոցիալական փոխակերպումների խնդիրն առաջին անգամ սկսել է շոշափվել արևմտյան գիտության մեջ, երբ անհրաժեշտություն կար վերաիմաստավորել XVIII-րդ դարի երկրորդ կեսին Եվրոպայում ընթացող սոցիալական, քաղաքական, արտադրական գործընթացներն ու դրանց հետևանքները: Այս հասկացության բացատրությունը կապված է հասարակության ձևի, տեսակի, կառուցվածքի կամ այլ բնույթի փոփոխման հետ: Այն առաջացել է հասարակական կյանքի արմատական փոփոխություններին որակական նոր գնահատական տալու անհրաժեշտությունից, որոնք ապագա սոցիալական կառուցվածքի

8 Տանաջյան 2014, 60–62:

9 Պողոսյան 2006, 30–33:

ձևավորման ճանապարհին ստեղծում են նոր իրավիճակ: Այն հասարակական վիճակի կառուցվածքային փոփոխությունների գործընթացն է[10]: Սոցիալական փոխակերպումը ոչ միայն հասարակության մի ոլորտի բովանդակության և գործառույթների փոփոխությունն է, այլ նաև հենց այդ փոփոխությունների բարելավման պայմանները: Այս պարագայում հասարակության զարգացումը հիմնվում է փոխակերպվող գործընթացների վրա: Սոցիալական փոխակերպումն արտահայտում է սոցիալական, տնտեսական և այլ սուբյեկտների ծրագրավորված, նախագծված գործունեությունը: Տվյալ սուբյեկտներում միավորվում են հասարակական հարաբերություններն ու գործընթացները որոշակի նորմերի հետ, որոնք ապահովում են սոցիալական միջավայրը:

Հեղինակների մի մասը սոցիալական փոխակերպումը դիտարկում է սոցիալական կառուցվածքների փոփոխության առանձնահատկությունների, խորության և միտումների մասշտաբով և դրանց հետևանքով առաջացող տնտեսական փոփոխություններով[11]:

Սոցիալական փոխակերպումը տարբերում են հասարակության այլ նշանակալի փոփոխության ձևերից, ինչպիսիք են՝ տրանսմուտացիան, վերարտադրությունը և այլն: Սոցիալական փոխակերպումը հասարակական վիճակի կառուցվածքային փոփոխությունների գագաթնակետն է[12]: Այն ենթադրում է որակական փոփոխություններ, երբ սոցիալական իրականության հիման վրա տեղի է ունենում շարժ, որի ելևէջները նկատելի են հասարակական կյանքի բոլոր բնագավառներում և փոխում են դրանց որակը[13]:

Այնուհանդերձ նման մոտեցումը հետաքրքիր է ոչ միայն սոցիալական փոփոխության բնութագրման համար լայն իմաստով, այլ նաև նեղ իմաստով շեշտադրելով սոցիալական փոխակերպման հետևանքներն ու ազդեցությունները հասարակության, մասնավորապես էթնիկ խմբերի կենսագործունեության ոլորտների որակական կողմի վրա:

10 Зубенко 2009, 303–305.

11 Голенкова 2001, 28–43.

12 Ламажа 2011, 262.

13 Штомпка 1996, 398–403.

Այդպիսի ցայտուն օրինակ է Լիբանանում տեղի ունեցած քաղաքացիական պատերազմի, երկրում լայնամասշտաբ փոփոխությունների արդյունքում հայկական համայնքի ներսում կատարված փոփոխությունը: Վերջիններս իրենց ազդեցությունն ունեցան Բեյրութում հայերի տարաբնակեցման ձևի վրա. առավել հոծ բնակեցված և համախմբված կենսագործունեություն վարող հայերի զանգվածն աստիճանաբար վերափոխվեց և նպաստեց համեմատաբար միմյանցից հեռու հայահոծ թաղամասերի առաջացմանը և առևտրական կենտրոնի՝ Բուրջ Համուդի ստեղծմանը: Մեկ այլ օրինակ է՝ Վրաստանում Թբիլիսիի հայ համայնքում ԽՍՀՄ փլուզումից հետո տեղի ունեցած սոցիալական փոփոխությունը: Երկրում սոցիալական, կառուցվածքային փոփոխություններն իրենց ազդեցությունը թողեցին հայերով բնակեցված թաղամասերի վրա: Այդ գործընթացներն անդրադարձան համայնքում տնտեսական, մասնագիտական շերտերի, հոգևոր-մշակութային նկարագրի փոփոխությունների վրա. նախկինում առավելապես մտավոր աշխատանքային զբաղվածության ոլորտներից (մշակույթի, գիտության) մեծ տեղաշարժ եղավ դեպի առավելապես սպասարկման, շինարարության ոլորտներ[14]:

Սոցիալական փոփոխությունների ուսումնասիրության շրջանակները լայն են և ունեն մի քանի հիմնական ուղղություններ: Դրանք դիտարկվում են սոցիալ-մշակութային դինամիկայի տեսանկյունից՝ ըստ որի մշակութային զարգացումն ու փոփոխություններն են մեծամասամբ որոշում սոցիալական փոփոխությունների ընթացքը: Այս մոտեցումը հիմնվում է այն հիմնական թեզի վրա, որ սոցիալական հարաբերությունների նոր ձևերը կարող են ընդունվել հասարակության կողմից միայն մշակութային վերափոխումների արդյունքում: Այսինքն, մշակութային արժեքներն ու նորմերն են թելադրում սոցիալական գործընթացների զարգացման ուղղվածությունը: Վերջինիս արձանագրումը, այնպիսի հետազոտողների կողմից, ինչպիսիք են՝ Դ. Բելլը, Ս. Լուրյեն, Պ. Սորոկինը, Մ. Կագանը, Է. Շիլզը, Ա. Ախիեզերը, Ջ. Գոլենկովան և այլն, թույլ է տալիս դուրս բերել սոցիալական փոխակեր-

14 Տանաջեան, Ներսիսեան 2018, 614–625:

պումների շարժընթացի որոշակի տրամաբանական կողմերը: Այսպես՝ Կ. Պոլանի «Մեծ տրանսֆորմացիա» աշխատությունում հեղինակը, վերհանելով սոցիալական գործընթացների վրա ազդող բազմաթիվ գործոններ, այդուհանդերձ առանձնացնում է տնտեսականը՝ նշելով, որ տնտեսական վերափոխումների գործոնը խթան հանդիսացավ 19–20-րդ դարերի հասարակության բազմակողմանի փոխակերպումների համար[15]: Այս տեսանկյունից դիտարկենք առանձին՝ մասնավորապես էթնոսոցիալ խմբերի փոխակերպումները, կարելի է ասել, որ հենց սոցիալտնտեսական զարգացումներն են պայմանավորում դրանց դերը և նշանակությունը տվյալ միջավայրում:

Սոցիալական փոփոխությունները դիտարկող հաջորդ ուղղությունը կապված է Պ. Բուրդյեի, Տ. Զասլավսկայայի, Թ. Պարսոնսի, Պ. Շտոմպկայի և այլոց անվան հետ: Այս հետազոտողների դիտարկումներն ավելի սոցիոլոգիական էին, ըստ որի՝ հասարակական զարգացման հիմքը սոցիալական-կառուցվածքային փոփոխություններն են, սոցիալական գործողությունների վերափոխումները, տարբեր սոցիալական շերտերի ներկայացուցիչների ակտիվության բարձրացումը կամ անկումը, կոնֆլիկտներն ու դրանց տարածումը:

Ըստ Տ. Զասլավսկայայի՝ սոցիալական փոխակերպումները ենթադրում են աստիճանական և խաղաղ, բայց, միևնույն ժամանակ, խորը և հարաբերականորեն արագ վերափոխումներ հասարակության սոցիալական ոլորտում, որոնք առաջին հերթին պայմանավորված են ոչ թե արտաքին գործոններով, այլ համակարգի ներքին պահանջմունքներով: Սոցիալական փոխակերպման գործընթացում արտահայտվում է ոչ միայն բարձր, այլ նաև ցածր և միջին խավերի տեղափոխությունները և շարժը: Սակայն հիմնական շարժիչ ուժը վերնախավն է, զանգվածային հասարակական խմբերը, տնտեսական և քաղաքական դաշտի ակտիվ ներկայացուցիչները:

Պետք է նշել, որ սոցիալական փոխակերպումը ներկայանում է որպես սոցիալական փոփոխության առավել նեղ, սակայն փոփոխությունների բովանդակային և որակական կողմը բացահայտող հասկա-

[15] Bell 1976, 11–38.

ցություն: Այդ պատճառով հաճախ հետազոտողների մեծամասնությունը դիմում է հենց այդ մոտեցմանը՝ բացատրելու հասարակության առավել բազմաբովանդակ և բազմաբնույթ երևույթները և իրավիճակները:

Որոշ տեսաբաններ, մոտենալով առանձին խմբերում տեղի ունեցող փոփոխությունների բացահայտմանը, սկսեցին սոցիալական գործընթացները դիտարկել համեմատաբար նոր՝ սիներգետիկայի և սոցիալական ինքնակազմակերպման մոտեցմամբ: Այդ տեսաբանների շարքում հատկապես կարևոր են Ի. Պրգոժինի, Ա. Պանարինի, Վ. Աֆանասևի, Ա. Ավերյանովի և Վ. Վասիլկովայի հայացքները: Այստեղ սոցիալական փոփոխությունների ընթացքը քննարկվում է անընդհատ շարժման մեջ: Յուրաքանչյուր սոցիալական փոփոխություն դիտարկվում է շրջափուլով՝ հասարակական կարգուկանոնից դեպի քաոտիկ, անկազմակերպ իրավիճակ, և հակառակը: Այս տեսությամբ կարող է բացատրվել նաև սփյուռքում ինքնակազմակերպվող խմբերի փորձը՝ յուրաքանչյուր դեպքում պայմանավորված որոշակի գործոնով: Օրինակ, սփյուռքի մի շարք համայնքներում հետցեղասպանական քաոսային իրավիճակում տրավմատիկ կոլեկտիվ հիշողությունը դարձել է ինքնության պահպանման, ինքնակազմակերպման կարևորագույն գործոն[16]:

Վերոհիշյալ տեսություններն ընդհանրական ներկայացնում են փոխակերպական գործընթացների հիմնական բնույթը հասարակությունում: Նմանատիպ փոխակերպումները հատուկ են հասարակության ներսում գտնվող սոցիալական մեծ և փոքր խմբերին, կառույցներին և ինստիտուտներին:

Սոցիալական փոփոխության հիմնախնդիրն ուսումնասիրվում է նաև քաղաքակրթական մոտեցման տեսանկյունից: Ամբողջականության գործոնը, որով որոշվում է տվյալ քաղաքակրթության որակը, դիտարկվում է կառուցվածքի և դինամիկայի փոխկապվածության տեսանկյունից: Այդ իսկ պատճառով քաղաքակրթության ներքին փոխակերպումն առաջանում է որոշակի առաջնորդող «շերտի» կամ գործոնի,

16 Մարության, 2006, 89:

սիմվոլների, մտքի առանձնացմամբ, որը և ձևավորում է նոր կառուցվածքներ քաղաքակրթական տարածության մեջ՝ ստեղծելով ինքնափոխակերպման հնարավորություններ:

Վերջին տարիներին սոցիալական փոխակերպման ուսումնասիրություններ են իրականացվում հատկապես հետևյալ երեք ուղղությունների համատեքստում.

- քաղաքական (իշխանության, սոցիալական վերնախավի, քաղաքական գիտակցության, քաղաքական ինստիտուտների փոփոխություն և այլն),
- տնտեսական (սեփականության, տնտեսական ձևերի, զբաղվածության, տնտեսական համակարգերի փոփոխություն և այլն),
- ժողովրդագրական:

Այսպիսով՝ սոցիալական փոփոխությունների վերոնշյալ տեսությունները օգնում են իմաստավորել և հասկանալ սփյուռքում էթնիկ խմբում սոցիալական փոփոխությունների օրինաչափություններն ու առանձնահատկությունները՝ պայմանավորված մի շարք գործոններով ու առանձնահատկություններով: Էվոլյուցիոնիզմի և նեո-էվոլյուցիոնիզմի տեսական դրույթները ցույց են տալիս փոփոխությունների ընթացքը պարզից դեպի բարդը՝ աստիճանական կամ թռիչքային: Եթե մասնավորեցնենք, ապա օտարազգի միջավայրում էթնիկ խմբում տեղի ունեցող սոցիալական փոփոխությունները կարող են ընթանալ մեկ ուղղությամբ՝ սոցիալական միատարրությունից դեպի բարդ սոցիալական կազմ: Ցիկլային տեսության շրջանակներում հնարավորություն է տրվում այդ գործընթացները բացատրել առանձին փուլերի միջոցով:

Այլազգի միջավայրում էթնիկ խմբում սոցիալական փոփոխությունների օրինաչափությունները դիտարկելու համար կարևոր է այնպիսի մոտեցում, որի շրջանակում դիտարկվում են տվյալ հասարակություն ներթափանցման մեխանիզմների արտաքին ազդեցությունը: Դրանց շարքին են դասվում առևտուրը, միգրացիան, գաղութացումը և այլն: Այն փաստը, որ օտարազգի միջավայրում էթնիկ խումբն առա-

ջին հերթին կրում է սոցիալական փոփոխությունների բեռը, ինչն իր հերթին անդրադառնում է դրա մշակութային նկարագրի վրա, կարևոր է դարձնում դրանում կատարվող սոցիալական գործընթացների ուսումնասիրման մեթոդաբանական խնդիրները:

Որպես կանոն էթնիկ խմբերն օտար միջավայրում իրենց առանձնակի էթնոսոցիալական հատկանիշների հիման վրա ցուցաբերում են ինքնակազմակերպվածության որոշակի աստիճան և ստանում ընդունող միջավայրից անկախ դրսևորումներ:

Այս առումով սոցիալական փոփոխությունները կարող են դիտարկվել տվյալ խմբի հատկանիշների փոփոխման դրսևորումներով ու դրանց հետևանքներով: Ընդ որում, փոխակերպման գործընթացներն առաջին հայացքից նկատելի չեն, սակայն հատկանիշների նոր համակցությունը և փոփոխության գործընթացն անընդհատ է և բնորոշ է ցանկացած խմբի: Այս մոտեցումների շրջանակում կարելի է տեսնել, օտարազգի միջավայրում էթնիկ խմբի փոփոխման ընթացքը և դինամիկան էթնոսոցիալական գործընթացների ֆոնին: Այլազգի միջավայրում էթնիկ խմբի սոցիալական փոփոխությունների առանձնահատուկ և օրինաչափ դրսևորումները բացահայտելու համար անհրաժեշտ է հետևել դրանում տեղի ունեցող էթնոսոցիալական գործընթացները:

Ցանկացած էթնոսոցիալական գործընթաց, լինի դա էվոլյուցիոն թե փոխակերպական, հանգեցնում է էթնիկ խմբում փոփոխությունների: Վերոնշյալ օրինաչափությունների խորապատկերին էթնիկ խմբում ընթացող սոցիալական փոփոխությունները պայմանավորված են և՛ արտաքին, և՛ ներքին գործոններով: Արտաքին գործոնների շարքին է դասվում միջավայրը, որտեղ գտնվում է էթնիկ խումբը, և այն ազդում է դրանում տեղի ունեցող գործընթացների բնույթի վրա: Այդպիսով՝ տվյալ միջավայրում տնտեսական, իրավական և սոցիալական հնարավորությունները (ինչպես օրինակ սոցիալական աստիճանների առկայությունը կամ բացակայությունը), խոչընդոտների բնույթը (էթնոդավանանքային, իրավական կամ այլ) պայման են դառնում էթնիկ խմբի առանձնացման, մեկուսացման կամ ընդհակառակը՝ միջավայրում ինտեգրման համար: Արտաքին գործոնների նման համախումբն

առաջին հերթին արտահայտություն է ստանում էթնիկ խմբի սոցիալական փոփոխություններում: Ներքին գործոնները կապված են էթնիկ խմբի մի շարք առանձնահատկությունների հետ, այդ թվում՝ ձևավորման պատմություն, սկզբնական սոցիալ-ժողովրդագրական կազմ, տարաբնակեցման ձև և այլն: Նշված երևույթները կապվում են օտար միջավայրում էթնիկ խմբի տեղակայման և հարմարման հետ[17]: Միջավայրի փոփոխության դեպքում անհատն անցնում է հարմարման գործընթաց, ինչն ուղեկցում է նրան սոցիալական գործունեության բոլոր փուլերում: Օտար միջավայրում էթնիկ խմբի առանձին անդամներից պահանջվում է ջանքերի մոբիլիզացում՝ բնակության երկրում առաջացող կենսական խնդիրների հաղթահարման նպատակով: Նոր իրականության պայմաններում էթնիկ խմբի անդամներից յուրաքանչյուրը բախվում է իր զարգացման բնականոն ուղղության փոփոխման անհրաժեշտության հետ: Դրանք առավել ծայրահեղ են այն ժամանակ, երբ նրա տեղաշարժը տեղի է ունենում հարկադրաբար, չպլանավորված, երբ մի կողմից ստիպված է թողնել իր ձեռքբերումները (գույք, ֆինանսական միջոցներ, սոցիալական դիրք և այլն), մյուս կողմից՝ չունի հետագա բնակության վայրը ընտրելու լայն հնարավորություն: Աշխատանք ստանալու հավանականությունը, բնակարանի հասանելիության աստիճանը, նոր շրջապատի և ներգաղթյալի էթնոսոցիալական հատկանիշները հանդիսանում են տեղափոխվածի գոյատևման առաջնային պայմանները նոր միջավայրում[18]:

Այլազգի միջավայրում էթնիկ խումբն ակտիվ հարմարման գործընթացում է բնական և սոցիալ-մշակութային փոփոխվող պայմանների հետ: Հարմարման հիմնական միջոց է հանդիսանում նոր էթնոսոցիալական միջավայրի արժեքների ու նորմերի (լեզվամշակութային, տնտեսվարման մշակույթի, քաղաքական, բարոյական և այլն) ընդունումը, որոնք այդտեղ հաստատվել են միջէթնիկական փոխազդեցության ձևերի (պաշտոնական և ոչ պաշտոնական կապեր, վարքագիծ, ընտանեկան և հարևանական հարաբերություններ և այլն), ինչպես

[17] Տանաջյան, Ներսիսյան 2015, 43:

[18] Maslow 1954, 15–28.

նաև առօրյա գործունեության արդյունքում (աշխատանքի կատարման ձև, ընտանեկան պարտականությունների կատարման ձև)։ Էթնիկ խմբի հարմարումն առավել արագ է ընթանում լեզվական և տնտեսավարական մշակույթներով մոտ ազգերի շրջանում[19]։

Սովորաբար էթնիկ խմբի հարմարումն օտար միջավայրում պահանջում է երկար ժամանակահատված։ Պետք է նշել, որ տնտեսական, սոցիալական և մշակութային հարմարման միջև առկա են տևողության տարբերություններ։ Ընդհանուր առմամբ, կարելի է ասել, որ տնտեսական հարմարումը կարող է ընթանալ ավելի արագ՝ ի տարբերություն մշակութային և սոցիալական հարմարման, որոնք առավել տևական ժամանակահատված են պահանջում։ Օտար միջավայրում խմբի համար այս տեսանկյունից էթնիկական բաղադրիչը հատուկ նշանակություն է ստանում։ Անհատը, տևական ժամանակ բնակվելով այլազգի միջավայրում, աստիճանաբար հարմարվում է ավանդույթներին, նորմերին, կանոններին, սովորույթներին և տվյալ ազգի կենսակերպին։ Այդ գործընթացում է, որ էթնիկ խումբը ենթարկվում է կառուցվածքային փոփոխությունների։ Վերոնշյալի համատեքստում կարելի է տեսնել, որ էթնիկ խումբը, հայտնվելով այլազգի միջավայրում, կարող է ունենալ զարգացման մի քանի ուղղություն։ Ըստ այդմ, առաջին հերթին, էթնիկ խումբը, կրելով մի շարք ազգային, մշակութային, կրոնական, արժեքային և այլ առանձնահատկություններ, փոխազդում է տվյալ միջավայրի հետ՝ յուրացնում, կորցնում կամ վերափոխում է իր մշակութային արժեքներն ու ազգային տարրերը։ Այս առումով հատուկ տեղ են զբաղեցնում էթնիկ խմբի ներկայացուցիչների սոցիալական կարգավիճակները և դրանց շարժընթացը։

Էթնիկ խումբն իր սոցիալական հատկանիշներով (սոցիալական կառուցվածք, սոցիալական շերտեր և այլն) ներթափանցելով նոր միջավայր, ձեռք է բերում տվյալ հասարակության մեջ որոշակի կարգավիճակ, որը որոշվում է նրա ունեցած ռեսուրսներով (տնտեսական, սոցիալական և այլ ներուժով)։ Հասարակական կառուցվածքի այն հատվածը, որը գրավում է էթնիկ խումբը, դառնում է նրա փոփոխության,

[19] Тавадов 2002, 215.

զարգացման սկզբնակետը: Էթնիկ խմբի որոշակի շերտերի սոցիալական շարժը կարող է բերել տվյալ խմբի ներսում հատկանիշների փոխակերպանը: Սոցիալական տեղաշարժերը ցույց են տալիս տվյալ խմբում տեղի ունեցող գործընթացների առանձնահատկություններն ու զարգացման օրինաչափությունները: Այս գործընթացների ֆոնին էթնիկ խմբերը միջավայրի հետ հարմարման տեսանկյունից համարվում են բարդ համակարգեր, քանի որ բովանդակում են աշխարհագրական, մարդաբանական, սոցիալ-տնտեսական, մշակութային, հոգեբանական բնութագրիչներ: Այդ պատճառով պատահական չէ, որ սոցիալական հարմարումը լայն առումով գտնվում է բազմաթիվ սոցիալական գիտությունների ուսումնասիրության կենտրոնում: Հասարակագիտական մի շարք ուղղությունների՝ սոցիալական և մշակութային մարդաբանության, հոգեբանության, փիլիսոփայության տեսանկյունից շեշտը դրվում է տվյալ երևույթն արտահայտող, տարբեր, իրար լրացնող և փոխկապված մի շարք կարևոր ասպեկտների վրա: Ուսումնասիրելով սոցիալ-մշակութային ադապտացիան՝ Լ. Շպակը եկել է այն եզրահանգման, որ դա սուբյեկտների և սոցիալ-մշակութային միջավայրի փոխներգործությունն է, հոգևոր-պրակտիկ հնարավորությունների և արդյունքների փոխանակումը կոնկրետ ադապտացիոն իրավիճակներում[20]: Նոր միջավայրում էթնիկ խմբի գոյությունն ու հետագա զարգացումն ուղեկցվում է ադապտացիոն գործընթացներով, որոնք ուղղվում են նոր հնարավորությունների ձեռքբերմանը և իրացմանը: Էթնիկ հանրույթներում, որոնք տարածական և ժամանակային փոփոխությունների են ենթարկվում, տեղի է ունենում նոր տարրերի և երևույթների կուտակում, որոնք էլ բերում են ազգային/էթնիկական հատկանիշների փոփոխությունների: Վերջիններիս հետազոտման արդյունքում կարելի է դուրս բերել էթնիկ խմբի աստիճանական փոփոխության ընթացքը տվյալ երկրի միջավայրում:

Էթնիկ խմբի ադապտացիայի վերաբերյալ կան բազմաթիվ գիտական մշակումներ, որոնք իրենց ուշադրությունը սևեռում են այդ երևույթի տարբեր կողմերի վրա՝ սոցիալ-մշակութային, տնտեսական,

[20] Шпак 1992, 122.

սոցիալ-հոգեբանական և այլն: Էթնիկ խմբի հարմարման հիմնական միջոցը սոցիալ-տնտեսական, մշակութային, լեզվական, քաղաքական, բարոյական միջավայրի նորմերի և արժեքների ընդունումն է, որոնք առաջանում են միջէթնիկ փոխազդեցության հետևանքով: Ընդհանուր առմամբ, էթնիկ խմբի հարմարումն ընթանում է երկու ձևով՝ 1) ակտիվ, երբ էթնիկ խումբը ձգտում է ազդել շրջապատող միջավայրի վրա՝ փոփոխելով այն (այդ թվում արժեքները, նորմերը, փոխազդեցության և գործունեության ձևերը), 2) պասիվ, երբ խումբը ձգտում է փոխազդեցության և ինքնին փոփոխվելու[21]:

Համեմատաբար հաջող ադապտացիայի ցուցանիշներն են տվյալ էթնիկական միջավայրում խմբի գործունեության բարձր աստիճանը, ինչպես նաև բավարարվածությունը տվյալ միջավայրի և շրջապատող ազգի այն տարրերից, որոնք առավել կարևոր են տվյալ էթնիկ խմբի համար: Ադապտացիայի ցածր աստիճանի ցուցանիշներ կարող են լինել արտագաղթը, էթնոսոցիալական միջավայրի արժեքանորմատիվային համակարգի տարբեր տեսակի խախտումները և այլն:

Խմբի ադապտացիոն ռեսուրսները կախված են տարբեր գործոններից, որոնց շարքին են դասվում ժողովրդագրական, միգրացիոն, մշակութային, տնտեսական, քաղաքական և այլն: Էթնիկ խմբի ադապտացիոն ներուժը կրում է հատուկ սոցիալական և մշակութային տարրեր, որոնք յուրաքանչյուր իրավիճակում արտահայտվում են տարբեր աստիճանով: Հարմարման գործընթացները մշտապես ուղղված են նոր որակի ձեռքբերմանը, ինչը թույլ է տալիս ապահովել տվյալ «օրգանիզմին» իրական գոյության հնարավորություն տվյալ միջավայրում: Էթնիկ հանրույթները հակազդում են արտաքին պայմանների փոփոխություններին առաջին հերթին մշակութային տարրերի ձևավորմամբ:

Այսպիսով՝ առանձնացվում են էթնիկ խմբի ադապտացիայի երկու հիմնական գործառույթ՝ նախորդ փորձի պահպանում, ինչը թույլ է տալիս էթնիկ խմբին գոյատևել (ապրել) կոնկրետ տարածաժամանակային իրավիճակում և երկրորդ՝ նոր փորձի կուտակում՝ անընդհատ փոփոխվող միջավայրում: Ադապտացիան անհրաժեշտ պայման է ին-

[21] Berry 1997, 5–34.

տեգրման համար: Այն համարվում է ինտեգրման առաջին փուլը, ինչը տեղի է ունենում էթնիկ խմբի ներկայացուցչի ցանկությամբ և ակտիվ մասնակցությամբ: Ինտեգրում հասկացության սահմանման ու բացատրության անդրադարձը կարևորում է հատկապես ներկայիս միգրացիոն գործընթացների իմաստավորման ժամանակ[22]:

Ամերիկյան ազգաբանության ներկայացուցիչների տեսանկյունից մինչև 1960-ականները գերակա էր համարվում Թ. Պարսոնսի՝ սոցիալական ինտեգրման հայեցակարգը,[23] որն ուղղված էր սոցիալական համակարգերի համարկման և «հավասարակշռության» գործընթացներին: Սակայն կազմաքանդող գործընթացների վերլուծությունն առավել հայտնի դարձրեց «կոնֆլիկտի ուժի տեսությունը», որը համադրվեց համակարգային ֆունկցիոնալիստական տեսության վերլուծության սկզբունքներով: Այս մոտեցումը վառ արտահայտեց Պ. Լ. Վան դեն Բերգը՝ հիմնվելով Մ. Վեբերի իդեալական տիպերի տեսության վրա:

Առհասարակ, ներգաղթյալների խմբերի ինտեգրումը, որպես տվյալ հասարակության մեջ հարմարման և կենսագործունեության հետագա զարգացման գործընթաց դիտարկելը, հարաբերականորեն նոր է և եվրոպական երկրներում արդեն իսկ դարձել է հասարակական լայն մասշտաբների և պետական քաղաքականության քննարկումների առարկա: Ընդհանուր առմամբ, ինտեգրման գործընթացը նկարագրվում է երկու հիմնական պայմանական տեսակով՝ ամբողջական ինտեգրում, որը հիմնվում է ներգաղթյալ էթնիկ խմբերի ձուլման (ասիմիլյացիայի) վրա, և մասնակի ինտեգրում, որը ներառում է հարմարման և գոյատևման գործընթացները[24]: Ինտեգրում և ասիմիլյացիա հասկացությունները նկարագրում են էթնոսների փոխազդեցությունը: Ինտեգրումը լայն առումով նշանակում է սոցիալական կապերի համակարգում ներգրավվածություն, համաձայնեցում և ընդհանուր ինքնագիտակցություն, ինքնության մշակում: Իսկ ասիմիլյացիան ենթադրում է

[22] Տանաջյան 2017, 184–187:

[23] Парсонс 1997, 270, Сорокин 1992, 351.

[24] Ионцев 2015, 6–25.

գերիշխող էթնոսի կողմից փոքրի կլանում, փոքրամասնություն կազմող խմբի մշակույթի, լեզվի և կենցաղի փոխարինում: Երկու գործընթացներն էլ ընթանում են նոր միջավայրին անհատի սոցիալական հարմարման միջոցով, ներառյալ էթնիկ, մշակութային, լեզվական, կրոնական միջավայրերը[25]:

Ակնհայտ է, որ այլազգի միջավայրում էթնիկ խմբի ինտեգրումը գործողությունների և համոզմունքների համախմբման գործընթաց է ոչ միայն տվյալ էթնոսի ներկայացուցիչների, այլ նաև տեղաբնակների համար: Հատկապես տեղաբնակների գործողությունները կարող են ազդեցություն ունենալ տվյալ հասարակությունում այդ խմբի ընդունման վրա և որոշել դրա բնակության կառուցվածքային պայմանները՝ դրանով իսկ ուղղորդելով այդ երկրում խմբի ներառմանը կամ հակառակը՝ արտամղմանը: Ըստ նշվածի՝ միջէթնիկական ինտեգրումն իր բնույթով երկկողմանի գործընթաց է. յուրաքանչյուր կողմն իր հերթին անպայման նպաստում է ինտեգրման գործընթացին:

Էթնիկ խմբի ինտեգրումը դիտարկելիս անհրաժեշտ է նախ արձանագրել և հետևել այդ գործընթացի շարժընթացը անհատի մակարդակով: Այստեղ ինտեգրումը դիտարկվում է որպես անհատի մուտքը հասարակության հիմնական սոցիալական կառուցվածք, որն արտահայտվում է հասարակությունում հաջող գործառնմամբ, իրավական օրենքների և հիմնական բարոյական կանոնների կատարմամբ: Որպես կանոն, էթնիկ խմբի ինտեգրման դիտարկման համար անհրաժեշտ է լինում երկարատև ժամանակային կտրվածք, որի արդյունքում խմբի անդամները կամ հենց խումբն ինքնին պետք է զբաղեցնի որոշակի սոցիալական դիրք տվյալ հասարակության մեջ:

Կարելի է ասել, որ էթնիկ խումբն օտար միջավայրում հանդես է գալիս որպես առանձին սոցիալական խումբ՝ իր ներքին սոցիալական կառուցվածքով: Պարզորոշ է, որ խումբը կրում է ոչ միայն միջավայրի ազդեցությունը, այլ նաև սեփական էթնիկ առանձնահատկությունների փոփոխությունների հետևանքները, որոնք տեղի են ունենում անընդհատ շփման և փոխներգործության հետևանքով:

---

25 Нитобург 2005, 13–21.

Սոցիալական փոփոխությունների էթնիկական բաղադրիչի ուսումնասիրությունները կարևոր նշանակություն են ստանում հատկապես սփյուռքում, որտեղ առանձին խմբերն արդեն հանդես են գալիս ոչ միայն որպես էթնիկ խումբ: Սփյուռքում էթնիկ խմբերը հնարավորություն են ստանում ինքնակազմակերպվելու և դառնալու սփյուռքյան համայնքներ: Վերջիններս ունեն իրենց սոցիալական կառուցվածքը, մշակութային, էթնիկական նկարագիրն ու սոցիալական ինքնակազմակերպվածության որոշակի մակարդակը[26]: Սփյուռքյան համայնքների ուսումնասիրությունները թույլ են տալիս դուրս բերել դրանց զարգացման, փոփոխության միտումները: Այդ համատեքստում նախքան սփյուռքում տեղի ունեցող էթնոսոցիալական գործընթացների քննարկումը հարկ է դիմել սփյուռք երևույթի ու դրա ուսումնասիրության մի շարք հարցերի բացահայտմանը:

Սփյուռքը, լինելով բարդ և բազմակողմ երևույթ, անընդհատ ուսումնասիրությունների և նոր բացահայտումների գործընթացում է: Սփյուռքում այդ գործընթացների դիտարկման համար անհրաժեշտ է հաշվի առնել սփյուռքի բազմամշակութային և բազմաշերտ լինելը[27]:

Արդի աշխարհի փոփոխվող պայմաններում սփյուռքում տեղի ունեցող գործընթացներն ազդում են դրա ներքին կառուցվածքի և ընդունող հասարակության մեջ սոցիալական, տնտեսական և այլ կառուցածքների վրա, ինչպես նաև իրական հայրենիքի կամ ազգային պետության հետ կապերի, սփյուռքի առանձին հատվածների միջև փոխհարաբերությունների զարգացման շարժընթացի վրա: Այս համատեքստում հատուկ նշանակություն են ստանում սփյուռքի կազմավորման, պահպանման մեխանիզմների, տվյալ երկրի հետ սփյուռքի առանձին հատվածների փոխհարաբերությունների և հայրենիքի հետ փոխառնչությունների ուսումնասիրությունները: Վերջիններս սերտորեն կապված են միգրացիայի հետևանքների, բազմամշակութային քաղաքականության, էթնիկ ինքնության ուսումնասիրությունների հետ: Սփյուռքի առանձին համայնքներ, ձևավորելով առանձին սոցիա-

26 Танаджян 2016, 199–201.

27 Sahakian 2018, 247–250.

լական կառուցվածքներ, ընդունող երկրում փոխազդեցության մեջ են մտնում: Այդ փոխազդեցության բնույթն ու կայունությունը որոշվում է բազմաթիվ գործոններով, որոնք մի շարք հեղինակներ խմբավորում են մի քանի ուղղություններով՝ պատմական, մշակութային, սոցիալ-կառուցվածքային, հոգեբանական և քաղաքական: Ըստ էության՝ այս բազմագործոն փոխազդեցության արդյունքում է, որ տեղի են ունենում սոցիալական փոփոխությունները սփյուռքի տարբեր հատվածներում: Այս գործոններն ընդհանրության մեջ կարող են որոշել տվյալ հասարակությունում սփյուռքյան համայնքի տեղը, դերը և նշանակությունը: Դրանց շնորհիվ է, որ համայնքը կուտակում է սոցիալական կապիտալ և ռեսուրսներ և որոնց հաշվին ինքնակառավարվում է[28]:

Այսպիսով՝ սփյուռքի առանձին խմբերի ներառվածությունն օտար միջավայրում ուղեկցվում է սոցիալական հատկանիշների փոփոխմամբ, որոնք հետագայում կանխորոշում են տվյալ խմբի կենսագործունեության ընթացքը: Նոր միջավայրում էթնիկ խմբի ադապտացումը, ապա նաև ինտեգրումը բնական անհրաժեշտ գործընթաց է: Սփյուռքները դիտարկվում են որպես ինտեգրման օբյեկտ. սկսում են ինտեգրվել նոր սոցիալական, մշակութային պայմաններում և կապվում են բարդ սոցիալական, անդրազգային և ցանցային հարաբերություններով: Այդ անդրազգային կապերը, անցնելով միջպետական սահմանները, ծառայում են որպես հաղորդակցման միջոցներ՝ սոցիալական, մշակութային, կրթական, տնտեսական, քաղաքական պահանջմունքների բավարարմանը[29]: Սոցիալական փոփոխությունների որակական ու քանակական կողմերը ավելի տեսանելի են դառնում տվյալ խմբի ինտեգրման գործընթացն ուսումնասիրելիս:

Սփյուռքում տեղի ունեցող գործընթացների համատեքստում ադապտացիայի և ինտեգրման տեսությունները թույլ են տալիս հետևել դրանց բովանդակային կողմերին: Այստեղ կարևոր է այն հանգամանքը, որ ինտեգրացիոն մոտեցումը հնարավորություն է ընձեռում քննել սոցիալական փոփոխությունները խումբ-միջավայր դիխոտոմիայում

28 Տանաջյան, Ներսիսյան 2018, 234–247:

29 Sheffer 2003, 171–178.

(երկճյուղ համակարգում), դրանց փոխառնչության յուրահատկությունները:

Սոցիալական փոփոխություններն ուղեկցվում են մի շարք գործընթացներով, որոնք հանգեցնում են սոցիալական տեղաշարժերի և արտահայտվում են էթնիկ խմբի անդամների սոցիալական հատկանիշների փոփոխությամբ: Այս տեղաշարժերի ընթացքը և ուղղվածությունը կապված է միջավայրային պայմանների, սոցիալական կառուցվածքի, խմբերի սոցիալ-մշակութային, տնտեսական կամ այլ հատկանիշների փոփոխությունների հետ:

Այս տեսանկյունից, հարկ է հաշվի առնել այն հանգամանքը, որ սոցիալական կառուցվածքն արտահայտում է հասարակության տարաբաժանումը հանրույթների, դասերի, շերտերի, խմբերի և բազմաթիվ չափանիշներով ներկայացնում է մարդկանց հարաբերությունն ու դիրքը միմյանց նկատմամբ: Դիտարկելով հասարակության կամ խմբի սոցիալական կառուցվածքը՝ կանգ առնենք փոփոխությունների վերլուծության վրա, որոնք տեղի են ունենում սոցիալական կառուցվածքում ժամանակակից պայմաններում: Վերջինս գլխավորապես կապված է տեխնոլոգիական առաջընթացի հետ, որն իր զարգացումն ապրեց 1960-ականներին: Այն հանգեցրեց ոչ միայն գիտական և տեխնիկական ոլորտի փոփոխությանը, այլ նաև՝ սոցիալական կառուցվածքի: Սոցիալական կառուցվածքի մասին պատկերացումներն ամբողջանում են այնպիսի հիմնական հասկացությունների նկարագրմամբ, ինչպիսիք են՝ սոցիալական շարժունությունը, տեղաշարժը, շերտավորումը և սոցիալական խմբերը: Սոցիալական կառուցվածքը որպես բարդ և բազմաչափ երևույթ՝ կարելի է դիտարկել 2 հիմնական մակարդակներով՝ հասարակության սոցիալական կազմ և հասարակության ինստիտուցիոնալ կառուցվածք: Սոցիալական աստիճանակարգն առկա է ոչ միայն հասարակության ամբողջական համակարգում, այլ նաև դրա առանձին խմբերում:

Հասարակության կարևոր տարրերից է սոցիալական խումբը, որը որոշակի հատկանիշների վրա հիմնված հատուկ կերպով փոխազդող երկու և ավելի մարդկանց միասնությունն է: Խումբ հասկացությունը,

ինչպես նաև անձ (անհատ), հասարակություն հասկացությունները հանդիպում են դեռևս Արիստոտելի մոտ: Սոցիալական գիտություններում առավել ընդունելի է հետևյալ համընդգրկուն սահմանումը. սոցիալական խումբը սահմանվում է որպես մարդկանց որոշակի հայտնի քանակ, որոնք ունեն ընդհանուր նպատակ և գործունեություն, փոխազդում են միմյանց հետ, կիսում են նույն հատկանիշները և ունեն կոլեկտիվ միասնության զգացում[30]:

Սոցիալական խումբը միջանկյալ օղակ է անձ-հասարակություն համակարգում: Անհատն ընկալվում է հասարակության մաս և սոցիալական հետաքրքրությունների կրող որոշակի սոցիալական խմբի պատկանելության միջոցով: Անդամակցությունը որևէ սոցիալական խմբին որոշում է անձի կարգավիճակը և հեղինակությունը հասարակության մեջ:

Հասարակական հարաբերություններում տվյալ խմբի գործառույթների բնույթը, ինքնության տեսակը, սոցիալական դերերը և այլն, յուրաքանչյուր սոցիալական խմբի կարևոր առանձնահատկություններից են: Դրանք ստեղծում են ինչպես հասարակության ընդհանուր սոցիալ-մշակութային խորապատկերը, այնպես էլ նույն հասարակության մեջ միմյանցից տարբերվող առանձին ենթամշակութային տարածություններ: Այդ խմբերը մի կողմից միմյանց մոտ են և ձևավորում են մեկ ընդհանուր սոցիալ-մշակութային օրգանիզմ, իսկ մյուս կողմից՝ դրանք հասարակության մեջ միմյանցից տարբերվում են իրենց տարածական, սեռային, տարիքային, սոցիալական առանձնահատկություններով: Այս ամենն ամրապնդվում է խմբի ներկայացուցիչների ինքնանույնականացմամբ, խմբային պատկանելությամբ, որի հիման վրա ձևավորվում են համերաշխության, համախմբվածության մեխանիզմներ: Սոցիալական հանրույթները կարող են տարբերվել ըստ քանակական կազմի, գոյության ժամանակահատվածի, հիմնական համակարգաստեղծ հատկանիշների: Հաշվի առնելով տարբեր երկրների բնակչության բազմաէթնիկությունը՝ ակնհայտ է, որ այդ հատկանիշների բազմակողմ համադրության մեջ որոշիչ դեր ունի էթնիկության բաղա-

30 Turner 1987, 42–46.

դրիչը: Այս առումով որևէ երկրում սփյուռքյան համայնքը կամ էթնիկ խումբը ևս կարելի է բնութագրել որպես ինքնուրույն սոցիալական հանրույթ, որը նույն մշակույթի և արժեքների կրողն է: Միաժամանակ այն ներառում է տարբեր փոքր սոցիալական խմբեր, որոնք ունեն ընդհանուր հատկանիշներ: Կարևոր է այն հանգամանքը, որ սոցիալական խումբն ուղղակի մարդկանց միավորում չէ, այլ որոշակի համակարգ, որը ներկայանում է ինքնազարգացման կամ ինքնակազմակերպման սեփական միջոցներով և դառնում է սոցիալական փոխազդեցության սուբյեկտ: Էթնիկ խումբը, որպես սոցիալական խումբ, կրում է մի շարք հատկանիշներ՝ տարածքային, ազգային, մասնագիտական, սոցիալ-ժողովրդագրական, սոցիալ-մշակութային, դավանանքային և այլն: Առանձին սոցիալական խմբերը, ընդհանուր առմամբ, դիտարկվում են մեկ ընդհանուր սոցիալական տարածության մեջ և ձևավորում են սոցիալական շերտեր: Ընդ որում, հասարակության, հանրույթի կամ խմբի ներսում դասերի կամ շերտերի տարաբաժանումը կախված է տվյալ ուսումնասիրության խնդիրներից ու նպատակներից: Սոցիալական շերտավորման տեսության մեջ կարևոր են համարվում Պ. Սորոկինի, Թ. Պարսոնսի, Է. Շիլզի և այլոց մոտեցումները: Վերոնշյալ հեղինակներին միավորում է այն գաղափարը, որ սոցիալական շերտավորումն առանձնանում է իր դինամիկ բնույթով և կարող է դիտարկվել որպես սոցիալական տեղաշարժերի արդյունք, իսկ այդ փոփոխությունների արտահայտման ձև է հանդիսանում սոցիալական շարժունությունը: Սոցիալական շարժունություն հասկացությունը սոցիալական գիտություններում ներմուծվել է Պ. Սորոկինի կողմից, ով դրա տակ դիտարկում էր սոցիալական դիրքի, կարգավիճակի ցանկացած փոփոխություն[31]:

Սոցիալական շարժունությունը բնութագրող էական հասկացություններից է սոցիալական կարգավիճակը: Սոցիալական կարգավիճակի փոփոխությունը պահանջում է անհատից կամ խմբի բոլոր անդամներից բավական մեծ ջանքեր[32]: Անհատն իր կյանքի ընթացքում

[31] Сорокин, 1992, 19.

[32] Տանաջյան 2017, 184–187:

բազմիցս կարող է փոխել (հարկադրաբար կամ կամովի) իր մասնագիտությունը, աշխատանքային ոլորտը, սոցիալական դիրքը: Սոցիալական գիտություններում առանձնացվում են սոցիալական շարժունության մի քանի տեսակներ, որոնց մեջ հիմնական են համարվում ներքոնշյալ ձևերը[33]:

Ուղղահայաց (վերընթաց և վարընթաց) և հորիզոնական շարժունություն: Հորիզոնական շարժունությունը ենթադրում է անհատի կարգավիճակի փոփոխությունը նույն հարթության վրա, երբ տվյալ կարգավիճակները գրեթե համարժեք են: Ներկայումս շատ հետազոտողներ հորիզոնական շարժունության տակ հասկանում են նաև տարածական-աշխարհագրական տեղափոխությունները գյուղերի, քաղաքների և շրջանների միջև, որը, սակայն, ունի նաև այլ հատկանիշների հետ կապի բացահայտման կարիք, ապա նոր միայն կարող է հաստատվել որպես հորիզոնական:

Ուղղահայաց շարժունությունը դիտարկվում է դեպի վեր կամ վար շարժում՝ հասարակության մեջ ընդունված սոցիալ-տնտեսական սանդղակով: Ուղղահայաց շարժունության դեպքում տեղի է ունենում անհատի կարգավիճակի փոփոխություն դեպի ավելի բարձր սոցիալական կարգավիճակ՝ ավելի բարձր եկամտով, հեղինակությամբ և իշխանությամբ (որը համարվում է վերընթաց շարժունություն) կամ առավել ցածր սոցիալական կարգավիճակ, որն անվանվում է վարընթաց շարժունություն:

Անհատական և խմբային շարժունություն: Խմբային շարժունությունը դիտվում է այն դեպքում, երբ խմբերը, դասերը, սոցիալական շերտերը փոխում են իրենց սոցիալական կարգավիճակը և տեղաշարժը իրականանում է կոլեկտիվ ձևով: Սա հատկապես նկատվում է հասարակության արմատական փոփոխությունների ժամանակ, ինչպես օրինակ՝ սոցիալական հեղափոխությունների, պատերազմների, քաղաքական ռեժիմների փոփոխության դեպքում և այլն:

Անհատական ուղղահայաց շարժունությունը կոնկրետ անձի սոցիալական տեղաշարժն է, որն առաջին հերթին կապված է հասանելի

33 Sorokin 1927, 130–135.

կարգավիճակների հետ, այն դեպքում երբ խմբայինը կապված է նախատեսված, սահմանված կարգավիճակի հետ:

Միջսերնդային և ներսերնդային շարժունություն: Միջսերնդային շարժունությունը սոցիալական կարգավիճակների փոփոխությունն է սերունդների միջև, որը հնարավորություն է տալիս որոշել արդյոք սոցիալական սանդուղքով վեր, թե վար է գնացել ներկայիս սերունդը նախորդի համեմատ: Միջսերնդային շարժունության մասշտաբները ցույց են տալիս՝ որքանով են սոցիալական շերտերը կայուն տվյալ հասարակության մեջ և քանի սերունդ են պահպանում կամ խախտում տվյալ սոցիալական կարգավիճակը: Ներսերնդային շարժունությունը սոցիալական կարգավիճակների փոփոխությունն է մեկ սերնդի ներսում: Ուղղահայաց մոբիլությունը, որը չափվում է շարժունության հեռավորությամբ և ծավալի ցուցիչներով, հանդիսանում է սոցիալական փոփոխությունների հիմնական աղբյուրը: Անհատի սկզբնական և վերջնական սոցիալական դիրքերի միջև եղած հեռավորությունը որոշում է սոցիալական աստիճանների քանակը: Սոցիալական շարժունության ընթացքը կարող է լինել աստիճանական կամ թռիչքաձև: Վերջինս կարող է արտահայտվել սեփական ռեսուրսների (մասնագիտություն, կրթություն, մշակույթ և այլն) և օտար միջավայրի կտրուկ անհամապատասխանության արդյունքում: Վերջին տարիներին նման իրավիճակ կարող ենք տեսնել օրինակ Հայաստան ներգաղթած սիրիահայերի շրջանում, երբ նախկինում մտավոր աշխատանքով զբաղվող սիրիահայերը միջավայրի անհամապատասխանության կամ որոշ մասնագիտությունների պահանջարկի բացակայության պատճառով Հայաստանում ստիպված եղան զբաղվել այլ աշխատանքով՝ ֆիզիկական զբաղվածության կամ սպասարկման ոլորտում[34]:

Չափման երկրորդ ցուցիչի՝ ծավալի տակ, հասկանում ենք անհատների թիվը, ովքեր կոնկրետ ժամանակահատվածում տեղաշարժվել են սոցիալական աստիճանով՝ ուղղահայաց: Պարզ է, որ կախված շրջապատող միջավայրի՝ բաց կամ փակ, ավանդական կամ ոչ ավանդական, սոցիալ-մշակութային առումով մոտ կամ հեռու լինելուց կամ

[34] Տանաջյան, Ներսիսյան 2015, 45–47:

այլ տեսակի գործոններից, էթնիկ խումբը կարող է ունենալ սոցիալական շարժունության արտահայտման տարբեր ձևեր, դինամիկա և ինտենսիվություն:

Էթնիկ խումբը կարող է դրսևորել նաև մոբիլության խմբային և անհատական ձևերը: Խմբայինի դեպքում անհատների մոբիլության արդյունքում ձևավորվում է նաև տվյալ խմբի դիրքն այդ հասարակության մեջ: Անհատն իր կյանքի զարգացման ընթացքում անցնում է գործունեության որոշակի փուլեր, որոնք պայմանավորում են նրա սոցիալական կարգավիճակն ու դերը հասարակության մեջ: Սոցիալական տեղաշարժերն անհատի կյանքում կատարվում են փոխկապված գործոնների առկայությամբ և ազդեցությամբ: Հատկապես անհատի աշխատանքային գործունեության փուլերը համարվում են նրա սոցիալական զարգացման և կարգավիճակային աճի հիմնական գործոնը:

Սոցիալական շարժունության գործընթացները կազմավորվում են խմբի անդամների նպատակաուղղված ակտիվության, կենսագործունեության հետևանքով: Էթնիկ խմբի համար ցանկալի սոցիալական կարգավիճակի ձեռքբերման ճանապարհին սոցիալական մոբիլության պայմաններ կարող են ստեղծվել և՛ խմբի անդամների ներքին մղումներից ու նպատակներից, և՛ պայմանավորված լինել տվյալ երկրի կողմից սահմանված արտաքին գործոններով ու պայմաններով (արժեքներ, նորմեր, օրենքներ, իրավունքներ և այլն)[35]: Այստեղ կարևոր է տվյալ երկրում գործող ծրագրերը և գործողությունները, որոնք կարող են միտված լինել անհատի հարմարմանը տվյալ միջավայրին, կամ հակառակը: Օտար միջավայրում անհատի սոցիալական աճի ընթացքում ուղղահայաց սոցիալական մոբիլության մի քանի պատճառներ կարող են լինել, որոնց շնորհիվ նա կարող է հասնել որոշակի հաջողությունների: Վերջիններիս շարքին կարող են դասվել օբյեկտիվ և սուբյեկտիվ մի շարք գործոններ՝ ընտանիքի սոցիալական կարգավիճակը, ձեռք բերած կրթական մակարդակը, ազգային պատկանելությունը, մտավոր կամ ֆիզիկական կարողությունները, բնակության վայրը, ելքի երկիրը և այլն:

[35] Տանաջյան 2014, 104–110:

Միջավայրային պայմաններից ելնելով՝ կարող են լինել նաև հատուկ պատճառներ ևս: Ինչպես օրինակ՝ փակ, ավանդական միջավայրերում դրսևորվում է սեռային առանձնահատկություն. կանանց սոցիալական մոբիլությունը առավել դանդաղ է ընթանում, իսկ որոշ դեպքերում՝ նույնիսկ անհնար է լինում:

Եթե էթնիկ խմբի անդամների ուղղահայաց մոբիլությունը դիտարկենք մի քանի սերունդների կենսագործունեության ընթացքում, ապա կարելի է դուրս բերել տվյալ խմբի կարգավիճակն այդ հասարակության մեջ անցյալում և ներկայում: Վերջինս հնարավոր է դարձնում ոչ միայն որոշել տվյալ էթնիկ խմբի ներքին կառուցվածքային սոցիալական փոփոխությունների ընթացքը, այլ նաև տեսնել ընդհանուր խմբի սոցիալական տեղաշարժը և դրա հետևանքով խմբի ձեռքբերումներն այդ հասարակության մեջ: Միջսերնդային և ներսերնդային շարժունության դիտարկումը թույլ կտա բացահայտել էթնիկ խմբի անդամների սոցիալական դիրքերի փոփոխությունների շարժընթացը: Վերջինս օգնում է հասկանալ անհատի՝ գործունեության մի տեսակից մյուսին անցման կամ այլ միջավայր մուտք գործելու մեխանիզմը[36]: Այստեղ առաջ է գալիս մեկ այլ հասկացություն՝ սոցիալ-մասնագիտական մոբիլություն: Այն անհատի կամ մասնագիտական խմբի տեղափոխությունն է մի մասնագիտական կարգավիճակից մյուսը՝ վերընթաց կամ վարընթաց: Էթնիկ խմբի սոցիալ-մասնագիտական մոբիլությունը կախված է տվյալ խմբի անդամների պահանջմունքներից և հետագա պլաններից: Էթնիկ խումբն առանձին կարող է առավելապես հանդես գալ որպես մեկ ընդհանուր սոցիալ-մասնագիտական շերտի կրող (ինչպես օրինակ՝ Թեհրանում հայերը որպես արհեստավորներ) և դրա փոփոխությունը կարելի է դիտարկել որպես խմբի մասնագիտական մոբիլություն:

Միաժամանակ էթնիկ խումբն իր ներսում ունի առանձին սոցիալ-մասնագիտական խմբեր, որոնք ևս ենթարկվում են փոփոխությունների: Առհասարակ, մասնագիտական մոբիլությունն իր բնույթով համարվում է սոցիալական, քանի որ այն կատարվում է սոցիալական համակարգի

[36] Maslow 1954, 15–20.

կանոնների համաձայն: Վերջինիս հաջող արդյունքը կախված է այն սոցիալական խմբից, միջավայրից, որում ձևավորվում է նոր պահանջ դեպի նոր մասնագիտությունը:

Սփյուռքի տարբեր խմբերի սոցիալ-մասնագիտական կարգավիճակը հաճախ կապվում է տվյալ էթնոսի առանձնահատկությունների հետ: Տվյալ էթնիկ խմբում ընդունված մասնագիտական ուղղությունները կարող են ազդել խմբի մոբիլության ընթացքի վրա և նոր մասնագիտական որակների նկատմամբ ձևավորել դիրքորոշում տվյալ հասարակության մեջ: Այս առումով տարբեր ազգերի սփյուռքների վերաբերյալ առկա են մի շարք հետազոտություններ, որոնք թույլ են տալիս տեսնել տարբեր երկրներում առանձին սփյուռքյան խմբերի զբաղեցրած սոցիալական դիրքը այդ հասարակության մեջ:

Այս կտրվածքով հատկապես ուսումնասիրվել են իրեական, չինական, հնդկական, թուրքական, ռուսական, կորեական և այլ սփյուռքները[37]: Առկա են մի շարք հետազոտություններ ՌԴ-ի տարբեր տարածաշրջանների՝ Մոսկվայի, Կրասնոդարի, Սարատովի հայերի վերաբերյալ[38]:

Մասնավորապես, Յու. Հարությունյանի հավաքագրած հարուստ նյութերը թույլ են տալիս դուրս բերել տվյալ հասարակության մեջ քաղաքային միջավայրում հայերի զբաղեցրած դիրքը սոցիալ-մասնագիտական ասպեկտով: Ըստ հեղինակի՝ Մոսկվայում հայերի հոծ ներկայությունը և զբաղվածության բազմազանությունը բացատրվում է նախկին ԽՍՀՄ տարածքային ամբողջականությամբ:

Մոսկվայի հայ համայնքում առանձնացված են երեք մեծ սոցիալ-մասնագիտական խմբեր՝ առավելապես ֆիզիկական աշխատանքով զբաղվողներ, ծառայողներ և առավելապես մտավոր աշխատանքով զբաղվողներ: Այս համայնքում հավասարապես (15%) բաշխվել են

37 Green, Berkeley 1988, 263.
Collins 2002, 113–133.
Liu et al. 2018, 1–17.
Остапенко et al. 2011, 61–71.
Fred et al. 2003, 158.

38 Захарян 2013, 3–4.

առավելապես ֆիզիկական աշխատանքով զբաղվողների և ծառայողների խմբերը, իսկ առավելապես մտավոր աշխատողների խումբը կազմել է ամենամեծը՝ 60%[39]:

Լոս Անջելեսում տարբեր խմբերի վերաբերյալ առկա հետազոտությունները թույլ են տալիս տեսնել հայերի տնտեսական բնութագրիչներն այլ ենթաէթնիկ խմբերի հետ[40]:

Տվյալ հետազոտության մեջ տարբեր ազգային պատկանելության խմբերը քննարկվում են որպես ենթաէթնիկ խմբեր: Այստեղ հիմնական շեշտը դրված է վիճակագրական տվյալների վրա, որոնք ցույց են տալիս տարբեր էթնիկ խմբերի տնտեսական ոլորտային ներգրավվածությունը Լոս Անջելեսում:

Առանձնացնելով տարբեր երկրներից եկած հայերին՝ հեղինակը ցույց է տալիս, որ այնտեղ ծնված և Իրանից տեղափոխված հայերը միտված են առավել բարձր սոցիալ-մասնագիտական կարգավիճակներ զբաղեցնելուն, քան օրինակ Թուրքիայից տեղափոխվածները: Վերջինս հեղինակը բացատրում է սոցիալական ցանցերի ակտիվ գործառնմամբ:

Այսպիսով՝ այլազգի միջավայրում էթնիկ խմբի ներսում տեղի ունեցող փոփոխությունները սոցիալ-մասնագիտական առումով պայմանավորվում են ոչ միայն ազգային առանձնահատկություններով, այլ նաև տվյալ երկրի սոցիալ-տնտեսական ոլորտի փոփոխություններով, հասարակության պահանջարկով և այլն: Վերջինիս հետևանքով էթնիկ խմբում տեղի ունեցող սոցիալական փոփոխությունները կարող են փոխել իրենց ուղղվածությունն ու ինտենսիվությունը:

Խմբի սոցիալական բնութագրերը (սեռ, տարիք, կրթություն և այլն), ազգային արժեքներն ու այլ գործոնները (լեզու, կրոն և այլն) անմիջական ազդեցություն են ունենում սոցիալ-մասնագիտական շերտերի ձևավորման վրա: Արդյունքում կարող է ձևավորվել մասնագիտական ներուժով որակապես նոր խումբ, որը կարող է տեղավորվել տվյալ հասարակության որևէ շերտում: Ընդ որում, յուրաքանչյուր

39 Арутюнян 2011, 12–23.

40 Der-Martirosian et al. 2004, 243.

էթնիկ խումբ օտար երկրում զբաղեցնում է ինքնաբուխ ձևով իրեն տրված տեղը: Միջավայրի տարբերությունների ազդեցությունն ակնհայտ է դառնում նույն էթնոսի տարբեր խմբերի համեմատության մեջ տարբեր երկրներում[41]:

Սփյուռքում նույն էթնոսի տարբեր խմբեր կախված նախկին ելքի երկրից, մուտքի երկրից կարող են զբաղեցնել տարբեր կարգավիճակներ և ունենալ տարբեր մասնագիտական կարողություններ, հետևաբար նաև մոբիլության տարբեր ընթացք: Տվյալ խմբի սոցիալ-մասնագիտական փոփոխության ընթացքը կարող է փոխվել նաև հասարակության մեջ ընդունելի և պրեստիժային մասնագիտությունների առկայությամբ:

Այսպիսով՝ էթնիկ խմբում սոցիալական մոբիլությունն արտահայտում է դրա սոցիալական հատկանիշների փոփոխությունը և արդյունքը, շարժընթացը: Այս դիտանկյունից տարբեր երկրներում հայերի սփյուռքյան փորձը կարող է դառնալ ցուցիչ՝ էթնիկ խմբերում սոցիալական տեղաշարժերի խնդրի վերաիմաստավորման համար: Մասնավորապես, սոցիալ-մասնագիտական մոբիլության ուսումնասիրությունը սփյուռքի հայերի շրջանում թույլ է տվել վերլուծել հայկական տարբեր համայնքների մասնագիտական ներուժը և համեմատության մեջ դուրս բերել դրանց ընդհանրություններն ու առանձնահատուկ կողմերը մի շարք գործոնների հետ փոխկապվածության մեջ:

41 Տանաջյան 2017, 174–179:

## ՄԱՍ 2.

## ԷԹՆՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ, ԹԵՀՐԱՆԻ ԵՒ ԲԵՅՐՈՒԹԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ

Սփյուռքի յուրաքանչյուր համայնք ունի իր ձևավորման պատմությունը, այլ պայմաններում իր կենսագործունեության յուրահատկությունները, բազմազան համայնքային և տարածական կառուցվածքը: Պայմանավորված այն հանգամանքով, որ հայկական համայնքներն իրենց գործունեությունը ծավալել են տարբեր միջավայրային պայմաններում, այդ փոփոխությունների ընթացքը և արդյունքը, կախված մի շարք գործոններից, տարբերվում են միմյանցից: Այս առումով հատկապես մեծ ուշադրություն են ներկայացնում տարբեր մշակութային, կրոնական և այլ հատկանիշներով քաղաքներում ձևավորված հայ համայնքերի ուսումնասիրությունը: Տեսական հարցադրումներից իջնելով սոցիալական փոփոխությունների ուսումնասիրության օպերացիոնալիստական մակարդակ՝ հարկ է անդրադառնալ պայմանականորեն երկու խումբ գործոնների՝ արտաքին և ներքին, որոնց ազդեցությունը պայմանավորում է տվյալ համայնքի կենսագործունեության ընթացքը և ինտեգրման աստիճանը: Արտաքին գործոնները վերաբերում են ընդունող հասարակության միջավայրային պայմաններին՝ ավանդական կամ ժամանակակից հասարակություն, բաց կամ փակ միջավայր, կրոնական, տնտեսական, սոցիալական միջավայր և այլն: Ներքին գործոնները ներհամայնքային միջավայրային առանձնահատ-

կություններն են՝ համայնքի սոցիալական կառուցվածք, անդամների քանակ, սոցիալ-ժողովրդագրական կազմ, ցրիվ կամ հավաք տեղակայում, համախմբվածության աստիճան, սոցիալական կապեր, հարաբերություններ, ընդունված արժեքներ և այլն: Պետք է նշել, որ այս երկու խումբ գործոնները փոխներգործության մեջ են: Այս գործոնների տարբերություններն ու դրանց ազդեցությունները հնարավոր է եղել դուրս բերել երեք տարբեր քաղաքների հայերի ուսումնասիրության արդյունքում: Ուսումնասիրված երեք քաղաքներն էլ *(Լոս Անջելես, Թեհրան, Բեյրութ)* բնորոշվում են հայերի մեծ զանգվածի ներկայությամբ, հետևաբար նաև զարգացած համայնքային կյանքի առկայությամբ: Միաժամանակ հետազոտության ընթացքում կարևոր է համարվել համեմատել և վերլուծել հայերի կենսագործունեությունը այն երեք քաղաքներում, որտեղ առկա են մի կողմից՝ քաղաքային պայմաններ, մյուս կողմից՝ ընդունող հասարակությունը տարբերվում է իր էթնիկական և կրոնական հատկանիշներով, համայնքի ձևավորման ժամանակահատվածով, բնակչության կազմով, բնակեցման ձևով և այլն:

Հայերի նշյալ հատվածներում ընթացող սոցիալական փոփոխությունների իմաստավորումը անհնար կլիներ առանց միջավայրային համատեքստի: Այս առումով սփյուռքում սոցիալական փոփոխությունները պայմանավորված են երկու հիմնական՝ ներհամայնքային և արտաքին միջավայրային պայմաններով: Դրանք արտահայտում են օտար միջավայրում էթնիկ խմբի երկու հիմնական ուղղվածությունը՝ ինտեգրումն ու զարգացումը: Վերջիններս կարելի է դուրս բերել տվյալ խմբի էթնոսոցիալական և էթնոմշակութային հատկանիշների դիտարկմամբ և դրանց համատեքստում սոցիալական փոփոխություններով:

Սփյուռքում հայերի էթնոսոցիալական և էթնոմշակութային վարքը խարսխվում է որոշ հիմնական ցուցիչների վրա: Դրանց մեջ նշված համայնքներում կարող ենք առանձնացնել համայնքի ներկայացուցիչների լեզվական վարքը, կրթական կողմնորոշումները, սոցիալ-ժողովրդագրական, մասնագիտական բնութագրիչները, ընտանեկան

կազմը, տարածական տեղաշարժերը, ընդունող երկիր-համայնք հարաբերություններն ու կարծրատիպերը և այլն: Անդրադառնանք դրանցից մի քանիսին, որոնք թույլ կտան դուրս բերել ընդհանուր միջավայրային խորապատկերը փոփոխությունների բացահայտման նպատակով:

Նախ դիտարկենք բնակության երկրի կրոնական, ազգային հատկանիշերի և փոքրամասնությունների նկատմամբ տվյալ երկրում ընդհանուր քաղաքականության ցուցանիշները: Կրոնական առումով այս երեք համայնքները գտնվում են միմյանցից տարբերվող միջավայրերում, ինչն առանձնահատուկ նշանակություն է ունեցել համայնքների ինքնակազմակերպման, ինտեգրման, ազգային ինքնության պահպանման և այլ կողմերի վրա:

*Ընդունող երկիր-համայնք հարաբերություններ:* Այսպես՝ Իրանի Իսլամական Հանրապետությունը, լինելով մահմեդական երկիր, արդեն իսկ որոշակի սահմաններ է գծել հայկական համայնքի ձևավորման համար: Այս տարբերությունը նպաստել է համայնքի հոծ բնակեցմանը և համայնքային զարգացած կառուցվածքի ստեղծմանը: Այստեղ հայերը սահմանադրությամբ համարվում են էթնոկրոնական փոքրամասնություն, սակայն առօրյա շփումներում և այլ տեսակի հարաբերություններում առաջնահերթ է համարվում հատկապես կրոնական տարբերությունը: Ինչպես նշում է Թեհրանում հայկական համայնքի փորձագետներից մեկը՝ *«Չնայած այն բանին, որ Իրանում հայերը պաշտոնապես՝ սահմանադրորեն համարվում են էթնոկրոնական փոքրամասնություն, այլ ոչ թե էթնիկական կամ ազգային: Այդուհանդերձ հայերը բացառապես կրոնական փոքրամասնություն են ճանաչվում բոլոր կողմերով»*[42]*:*

Պետության կողմից էթնոկրոնական փոքրամասնությունների նկատմամբ վերահսկողական համակարգը օրենքներով ամրագրված է. յուրաքանչյուր փոքրամասնություն ունի իր համար նախատեսված

[42] Տանաջյան Լ., փորձագիտական հարցազրույց N 1, ՀԱԻ Սփյուռքի հետազոտությունների բաժնի ԴԱՆ, Թեհրան, 2014 թ.:

օրենքները: Գլխավորապես դրանք վերաբերում են ամուսնության և ամուսնալուծության, կտակի և ժառանգության հարցերին: Այս հարցի շուրջ փորձագետները նշում են, որ *«Այս երկրում հեղափոխական ընդվզումները և՛ կրոնական, և՛ քաղաքացիական, առումով բավականին դժվար են, գրեթե անհնար և վերահսկողությունն էլ շատ բարձր մակարդակի: Ինչ վերաբերում է հայերին, ապա հայերը երբեք քարտեզային խնդիր չեն ունեցել Իրանի հետ, ինչի արդյունքում ավելի խաղաղ հարաբերություններ են հաստատվել»*[43]:

Սակայն համայնքի համար հատկանշական է այն փաստը, որ բացի վերոնշյալը, առկա են ներքին ղեկավարման օղակներ, որոնք գործում են զուգահեռ և միայն ներքին որոշումներից հետո է հաստատվում վերին օղակների կողմից: Համայնքն ունի իր ներկայացուցիչը խորհրդարանում, ով հանդիսանում է կապող օղակ համայնքի անդամների հետ և լսելի է դարձնում համայնքային հարցերը: Այս առումով ինչպես նշում են համայնքի հայկական կազմակերպությունների ղեկավարներից որոշները, հայերը որպես փոքրամասնություն գտնվում են բավականին շահեկան վիճակում. *«Հայերը երկրի խորհրդարանում ունեն երկու պատգամավոր, ինչը խոսում է հայերի բարենպաստ դիրքի, կարգավիճակի մասին այս հասարակության մեջ»*[44]:

Պաշտոնական վիճակագրություն իրանահայերի թվի մասին գոյություն չունի ներկայումս: Միայն 1979 թ. Իսլամական հեղափոխությունից հետո հայության թիվն Իրանում կրկնակի կրճատվել է: Ամերիկյան միջավայրն իր կրոնական, էթնիկական, իրավական և այլ հատկանիշներով հակադրվում է իրանական միջավայրին: Վերջինս մեծ նշանակություն է ստանում ընդունող հասարակություն և համայնք փոխհարաբերությունների համատեքստում: Ամերիկյան հասարակությունն ունի բազմամշակութային, բաց և ժողովրդավարական արժեքներով բնույթ: Ըստ էության այստեղ հայտարարված է բարձր հանդուր-

43 Տանաջյան Լ., փորձագիտական հարցազրույց N 2, ՀԱԻ Սփյուռքի հետազոտությունների բաժնի ԴԱՆ, Թեհրան, 2014 թ.:

44 Տանաջյան Լ., փորձագիտական հարցազրույց N 6, ՀԱԻ Սփյուռքի հետազոտությունների բաժնի ԴԱՆ, Թեհրան, 2014 թ.:

ժողականություն կրոնական կամ ազգային փոքրամասնությունների նկատմամբ: Ամերիկայի Միացյալ Նահանգները համարվում է խառը ինքնությունների երկիր: Կան մի շարք առաջնահերթություններ կապված լեզվի, մասնագիտական կարողությունների և այլնի հետ, որոնց շնորհիվ որևէ ազգի ներկայացուցիչ կարող է ինտեգրվել հասարակությունում: Լիբանանի Հանրապետությունն իր պետական կառուցվածքով և սահմանադրությամբ համայնքային երկիր է: Փորձագիտական գնահատմամբ՝ *«Լիբանանը ներկայանում է որպես համայնքային երկիր, և այստեղ բոլոր համայնքներն ունեն իրենց ներկայությունը կառավարության, խորհրդարանի և այլ պետական մարմինների մեջ: Այսինքն՝ սահմանդրությունը պահպանում է յուրաքանչյուր համայնքի ներկայացուցչի իրավունքները՝ որպես իրավահավասար քաղաքացիների»[45]:*

Կրոնական և էթնիկական հատկանիշներով լիբանանյան միջավայրն ինչ-որ առումով համարվում է բարենպաստ ազգային ինքնության պահպանման համար: Կրոնական առումով առկա է բազմազանություն. բնակչության 54%-ը մահմեդականներն են, 40%-ը՝ քրիստոնյաներ, մնացած 6%-ը՝ դրուզներ[46]: Համայնքային իրավունքները որոշվում են ըստ տվյալ համայնքի թվաքանակի, որի շնորհիվ նրանց վերաբերող օրենքները և իրավունքները միմյանցից տարբերվում են: Համայնքները ներկայացված են պետական խորհրդարանական մարմիններում և բարձրացնում են իրենց համայնքի ձայնը: Հայերը Լիբանանի խորհրդարանում ունեն երկու պատգամավոր, ինչպես նաև նախարարական աթոռներ: Լիբանանի հայերն ըստ պաշտոնական տվյալների հաշվվում են՝ 150.000–200.000 մարդ[47]: Տարիներ ի վեր Լիբանանի հայկական համայնքը համարվել է կարևոր գաղթօջախներից մեկը: Հայապահպան գործունեությամբ, սփյուռքին տրամադրած մարդուժով և գիտական ներուժով առաջնային տեղ է զբա-

[45] Տանաջյան Լ., փորձագիտական հարցազրույց N 1, ՀԱԻ Սփյուռքի հետազոտությունների բաժնի ԴԱՆ, Բեյրութ, 2015 թ.:

[46] Middle east:Lebanon: https:,www.cia.gov/library/publications/the-world-factbook/geos/le.html

[47] Amenians in Lebanon: https://en.wikipedia.org/wiki/Armenians_in_Lebanon

ղեցրել: Լիբանանի քաղաքացիական պատերազմից հետո Լիբանանի հայերը նշանակալի փոփոխություններ են կրել սեռատարիքային, սոցիալ-մասնագիտական, ժողովրդագրական, տարածական առումներով: Ընդհանուր առմամբ, համայնքում հայաշատ բնակեցված մասերը էթնոհոծ են: Ըստ փորձագետների գնահատականների՝ «*Առհասարակ Լիբանանի, նաև Բեյրութի հայկական համայնքը Միջին Արևելքի այլ գաղթօջախներից փարբերվում է՛ և՛ թվաքանակի, և՛ քաղաքական, և՛ սոցիալական առումներով: Այն ունի յուրահափուկ դիմագիծ, քանի որ այլ համայնքները (Սիրիայի, Թեհրանի, Եգիպտոսի, Իրաքի հայկական համայնքներ) իրենց գործունեությունն են ծավալել այնպիսի երկրներում, որտեղ եղել են դիկտատորական ռեժիմներ և հնարավորություն ընձեռված չի եղել ունենալ քաղաքական ազատություն*»[48]: Բեյրութում հայերի քանակի վերաբերյալ գնահատականները բավականին տարբերվող են, սակայն, ընդհանուր առմամբ, թիվը տատանվում է 60000–90000-ի միջակայքում: Այսպիսով՝ երեք երկրների միմյանցից խիստ տարբերվող միջավայրերում առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում մեծ քաղաքներում տարածական, սոցիալական տեղաշարժերը, արտագաղթի ու ներգաղթի միտումները, քաղաքային պայմաններում ինտեգրվածության և էթնոմշակութային գործընթացների զարգացումը: *Երեք քաղաքներում հայերի սոցիալ-ժողովրդագրական կազմի, փարածական փոփոխությունների ընդհանուր պափկեր:* Թեհրանի հայ համայնքն ավելի քան 300 տարեկան է և տարածականորեն հավաք, ունի զարգացած, արդեն ավանդական դարձած ազգային-մշակութային կենտրոններ ու սոցիալ-քաղաքական կառույցներ: Քաղաքում հայերի թիվը, ըստ որոշ գնահատականների, հասնում է շուրջ 80 հազարի, սակայն վերջին տարիների դինամիկան նվազման միտում է ցույց տալիս[49]: Համայնքը ղեկավարվում է ազգային առաջնորդարանի՝ ազգային իշխանության կողմից, որն ունի իր տարբեր կառույցները և օղակները, լծակները և ենթաօղակները: Ազգային թեմը

---

48 Տանաջյան Լ., փորձագիտական հարցազրույց N 2, ՀԱԻ Սփյուռքի հետազոտությունների բաժնի ԴԱՆ, Բեյրութ, 2015 թ.:

49 Փահլևանյան 2003, 240–248:

ղեկավարվում է երեսփոխանական ժողովի, խորհրդի կողմից: Թեմական խորհուրդը գործադիր մարմին է, որին կից գործում են ենթախորհուրդները (դատական, կրթական, մեկենասող խորհուրդները, շինարարական, կտակակալվածային ֆոնդերը): Ներկայումս ըստ ոչ պաշտոնական տվյալների՝ հայերի թիվը Թեհրանում տատանվում է 45000–50000-ի սահմանում: Ըստ մի շարք աղբյուրների համադրման՝ դեռևս 50–60 տարի առաջ հայերի նկատելի քանակություն կար Իրանի տարբեր քաղաքներում, օրինակ՝ Թավրիզում, Սպահանում, նաև Ռաշտում, բացի դա նաև գյուղական բնակավայրերում:

Ներկա ժամանակաշրջանում Թեհրանում հայահոծ թաղամասեր են համարվում Նարմաք, Զարքեշ, Հեշմաթիե, Մաջիդիե թաղամասերը, թեև կան նաև ցրիվ բնակվող հայ ընտանիքներ: Թեհրանում հայահոծ թաղամասերը համայնքի ներկայացուցիչների կողմից ստացել են իրենց հայկական համարժեք անվանումները (Սասուն, Կենտրոն, Զեյթուն և այլն): Այս թաղամասերը նշանավորվում են հատկապես գործող հայկական եկեղեցիներով (ներառում են երեք կրոնադավանական համայնքները՝ Հայ Կաթողիկե, Հայ Առաքելական և Հայ Ավետարանական), մարզամշակութային, բարեգործական կազմակերպություններով, երիտասարդական, արհեստագործական միություններով, ավանդական կուսակցություններով (Հայ Հեղափոխական Դաշնակցություն, Հայ Ազատական Ռամկավար, Սոցիալ-դեմոկրատ Հնչակյան), դպրոցներով, կրթական և բժշկական հաստատություններով և այլն:

60 տարվա ընթացքում համայնքի պատկերը բավականին փոխվել է՝ «գյուղական տիպից դեպի քաղաքային»[50]: Եթե նախկինում հայերը կենտրոնացած էին քաղաքի հարավային մասում, ապա ներկայիս սերունդը ձգտում է դեպի կենտրոն՝ որտեղ աստիճանաբար տարածվում և ցրվում է: Վերջինս պարզ է դառնում փորձագիտական մի շարք պնդումներից. *«Նախկին սերունդն ավելի շատ կենտրոնացած էր Թեհրանի հարավային մասում: Դրա վառ վկայությունը Թադեոս-Բարդուղեմեոս եկեղեցին է, որի շուրջ համախմբել են հայերը: Ներ-*

[50] Բայբուրդյան 2013, 33–34:

*կայունմն հեփզհեփե հայերը փեղափոխվում են դեպի* Համայնքում տարածական տեղաշարժերը պայմանավորված են այլ վայրերից տեղափոխվածներով, որոնց թիվը անհամեմատ քիչ է 17% (գծապատկեր 1): Սակայն այդ մասը որակապես նոր սոցիալական բովանդակություն է հաղորդել հայկական համայնքին (գծապատկեր 2):




*Գծապափկեր 1. Թեհրանում ծնված և փեղափոխված հայերի փոկոսային հարաբերակցությունը (% հարցվածներից)*




*Գծապափկեր 2. Թեհրան փեղափոխված հայերի փոկոսային հարաբերակցությունը՝ ըսփ ելքի վայրի (% հարցվածներից)*

Թեհրան տեղափոխվածների մեջ 22%-ը գյուղական վայրերից են, իսկ մնացածը՝ այլ քաղաքներից: Վերջինիս պատճառն ուրբանիզացման գործընթացն է, որն անմասն չի թողել նաև համայնքում տեղի ունեցող փոփոխությունները:

Թեհրանի հայերի շրջանում ոչ միայն ներքին տեղաշարժերն են ազդում սոցիալական գործընթացների և փոփոխությունների վրա այլ նաև արտագաղթը: Ներգաղթի և արտագաղթի մասին դիտարկումներում պարզ է դառնում, որ համայնքում առավելապես նկատվում է ար-

տագաղթի միտում: Փորձագետների տվյալների համաձայն արտագաղթի հիմնական պատճառները սոցիալական և տնտեսական են, իսկ երիտասարդության որոշակի շրջանում՝ կրթական: Արտագաղթի ինտենսիվ աճի վրա մեծ ազդեցություն ունեն այն ծրագրերը, որոնց միջոցով փոքրամասնությունները կարողանում են լքել երկիրը, ըստ տվյալների դրանք առանձին արտասահմանից ֆինանսավորվող ծրագրեր են: Որակական նյութը փաստում է՝ *«Կարելի է ասել, որ արտագաղթը սկսել է հեղափոխությունից առաջ՝ դանդաղորեն և շարունակվում է մինչև հիմա: Եթե 40 տարի ետ շարժվենք, կտեսնենք հայկական դպրոցներում աշակերտները 11.000 էին հաշվարկված: Այսօր աշակերտության թիվը նվազելով հասել է դրա մեկ երրորդին: Վերջին տասնամյակում արտագաղթի միտումների աճը հակակշռում է բնական աճին: Հետևաբար համայնքը քանակի առումով նահանջ է ապրում»*[51]:

Այդուհանդերձ մտադրության մակարդակում արտագաղթը դիտարկելիս տեսնում ենք, որ հարցված թեհրանահայերի գրեթե մեկ երրորդը ցանկություն ունի տեղափոխվել Հայաստան, 36,8%-ը նախընտրում են մեկնել այլ երկիր, 23,7%-ը դժվարացել է պատասխանել, և միայն 8,8%-ը միտում չունի որևէ տեղ տեղափոխվելու (գծապատկեր 3):




*Գծապատկեր 3. Թեհրանի հայերի արտագաղթելու մտադրությունները (% հարցվածներից)*

Այլ երկիր մեկնողների մեջ փորձագիտական տվյալները փաստում են, որ հիմնական ուղղությունն Ամերիկայի Միացյալ Նահանգներն են՝

51 Տանաջյան Լ., փորձագիտական հարցազրույց N 3, ՀԱԻ Սփյուռքի հետազոտությունների բաժնի ԴԱՆ, Թեհրան, 2014 թ.:

պայմանավորված Իրանահայերի Միության զգալի ներկայությամբ, ապա նաև կարևոր և հիմնական ուղղություններից է Հայաստանը:

Քանակական տվյալներից պարզ է դառնում, որ համայնքում մարտահրավերների շարքում հատկապես անհանգստացնող է արտագաղթի աճող միտումը: Այն հարցին, թե ինչն է ամենաշատը անհանգստացնում Ձեզ այստեղ, առաջին երեք ամենահաճախ կրկնված պատասխաններն են՝ արտագաղթը, ապագայի հանդեպ անորոշությունը, տնտեսական, ֆինանսական դժվարությունները, ազատության պակասը և այլն (գծապատկեր 4):




*Գծապատկեր 4. Թեհրանում հայերի համար առաջնային անհանգստությունները (% հարցվածներից)*

Տարիքային առումով համայնքը ևս փոփոխությունների է ենթարկվել: Դատելով տարբեր աղբյուրներից ստացված տեղեկատվությունից, համայնքի երիտասարդները ձգտում են արտագաղթել, իսկ վերարտադրության շեմը ներկայումս բավականին ցածր է: Այդ է պատճառը որ համայնքն առավելապես գնահատվել է ծերացող. *«Համայնքը ծերացել է, հիմնականում ընտանիքները նախընտրում են ունենալ մեկ կամ երկու երեխա, մի քանի տարի առաջ ընտանիքներն ավելի մեծ էին, ու երեխաներ էլ շատ էին ունենում՝ վստահ լինելով որ կմեծանան մեծ ընտանիքում»*[52]:

[52] Տանաջյան Լ., փորձագիտական հարցազրույց N 4, ՀԱԻ Սփյուռքի հետազոտությունների բաժնի ԴԱՆ, Թեհրան, 2014 թ.:

Թեհրանահայերի շրջանում քանակական հարցման արդյունքները ցույց են տալիս, որ հիմնականում ի տարբերություն նախորդ տասնամյակի գերակշռում են նուկլեար ընտանիքները: Հարցվածների մեծամասնությունը 78,9 %-ը ունեն պարզ ընտանիքներ մեկ սերնդից բաղկացած, 13,2%-ը այլ կազմով ընտանիք, բարեկամներ, հարազատներ, բարդ ընտանիքների թիվը կազմում է 6,1%, միայնակներն ավելի քիչ են 1,8% (գծապատկեր 5):




*Գծապատկեր 5. Թեհրանի հայերի ընտանեկան կազմը (% հարցվածներից)*

Ընդհանուր դիտարկմամբ տեսնում ենք, որ Թեհրանի հայերի շրջանում տարածական, կառուցվածքային և սոցիալական զգալի փոփոխություններ են գրանցվել, ինչն իր ազդեցությունն է ունեցել նաև համայնքի էթնոմշակութային նկարագրի վրա:

Հաջորդիվ դիտարկենք հայերի կենսագործունեության նույնատիպ ուղղությունները Լոս Անջելեսի հայերի շրջանում: Ըստ տարբեր փաստաթղթերի և աղբյուրների համադրման՝ հայերի մեծ ներհոսքը Լոս Անջելես 19-րդ դարից է սկսվել և Առաջին Համաշխարհային պատերազմից հետո արդեն կազմավորվել է հայկական մեծաքանակ համայնք: Ներկայումս ըստ 2003 թ.-ի տվյալների՝ Լոս Անջելեսում և կից արվարձաններում բնակվում է շուրջ 600 հազար հայ (միայն 200 հազար բնակչություն ունեցող Գլենդելում հայության թիվը շուրջ 180 հազար է): Ի տարբերություն Թեհրանի հայ համայնքի Լոս Անջելեսի հայկական

համայնքը մեծ և բազմաշերտ է իր ծագմամբ: Լոս Անջելեսի հայկական համայնքն առանձնանում է սոցիալական կառուցվածքով և ինտենսիվ քանակական աճով: Այս քաղաքում բազմաթիվ մշակութային, կրթական, քաղաքական, հայրենակցական ու կրոնական կենտրոններով հայ համայնքն ընդհանուր առմամբ դիսպերս է, սակայն այդ ընդհանուր պատկերի մեջ կան որոշ կոմպակտ խմբեր (Գլենդել, Հոլիվուդ և այլն), որոնք գտնվում են բավականին բազմազան էթնոմշակութային միջավայրերում[53]: Այսօր հայկական համայնքը Լոս Անջելեսում ունի իր հարուստ ներկայությունը, որն առաջին հերթին արտահայտվում է և՛ ֆիզիկական ներկայությամբ, և՛ կազմավորված եկեղեցիներով (Հայ Կաթողիկե, Հայ Առաքելական և Հայ Ավետարանական), ավանդական կուսակցություններով (Հայ Հեղափոխական Դաշնակցություն, Հայ Ազատական Ռամկավար, Սոցիալ-դեմոկրատ Հնչակյան), ազգային, մշակութային կենտրոններով, հայրենակցական միություններով, մի շարք շահույթ չհետապնդող կազմակերպություններով, մամուլով և այլն, իսկ վերջին տարիներին նաև տարբեր մասնագիտական միություններով:

Լոս Անջելեսի հայկական համայնքի թվային աճը պայմանավորված է աշխարհի բոլոր կողմերից՝ Հայաստանից, Միջին Արևելքից, Ամերիկայի տարբեր շրջաններից հայերի ներգաղթով: Հատկապես վերջին 50 տարիների ընթացքում միջին արևելյան քաղաքական անցուդարձերի հետևանքով (Սիրիայի, Լիբանանի ներքին քաղաքական իրավիճակները, լիբանանյան քաղաքացիական պատերազմը, Իրանի Իսլամական հեղափոխությունը և այլն) մեծ ներհոսք է դիտարկվում դեպի Լոս Անջելես, ինչպես նաև հետխորհրդային շրջանից սկսված՝ արտագաղթի հսկայական միտում է նկատվում Հայաստանի Հանրապետությունից[54]:

Ինտեգրման դիտանկյունից հատկապես կարևոր է թե Լոս Անջելես տեղափոխվածները որքան ժամանակ են բնակվում այդտեղ: Այս հարցի պատասխանից պարզ է դառնում, որ հարցվածների մեծ մասը (77,5%) Լոս Անջելես է տեղափոխվել այլ վայրից: Ընդ որում, նշյալ

53 Փիրումյան, Ավագյան 2003, 33–46:

54 Bozorgmeher et al. 2004, 245–248.

զանգվածի կեսից ավելին տեղափոխվել է մինչև 1991 թ.-ին (գծապատկեր 6):




*Գծապատկեր 6. Լոս Անջելեսում ծնված և տեղափոխված հայերի փոկոսային հարաբերակցությունը (% հարցվածներից)*

Համայնքի համար կարևոր են տարբեր տարածաշրջաններից ներգաղթածների այն որակական հատկանիշները, որոնք կարող են ազդեցություն ունենալ հայերի սոցիալական, մասնագիտական առաջընթացի վրա, ինչպես օրինակ կրթության չափանիշը: Այս առումով դիմենք քանակական տվյալների արդյունքներին, որտեղ տեսնում ենք Հայաստանից (60.6%) ԱՊՀ երկրներից (75.0%) և Արևելքի երկրներից (50.6%) ներգաղթած հայերի խմբում գրեթե մեկ երկրորդից ավելի են բարձրագույն կրթություն ունեցողների թիվը: Եվ միայն Եվրոպայից ներգաղթած հայերի մեջ մեծ թիվ են կազմում միջին մասնագիտական կրթություն ունեցողների թիվը (57%) (գծապատկեր 7):




*Գծապատկեր 7. Լոս Անջելես փեղափոխված հայերի պապկերը՝ ըսփ ելքի վայրի և կրթության չափանիշի (% հարցվածներից)*

Լոս Անջելեսի հայերը մեծամասամբ կենտրոնացած են Հոլիվուդում և Գլենդելում, որտեղ գտնվում է ՀՀ գլխավոր հյուպատոսությունը: Գլենդելի հայերի հիմնական մասը կազմում են Արևելքից եկած հայերն են: Համայնքը, ընդհանուր առմամբ, այսպես կոչված հին (դասական) սփյուռքի և նոր ձևավորված սփյուռքի միասնությունն է: Դասական սփյուռքը, որի արդյունքն են հայկական դպրոցները, կուսակցությունները, միությունները, հայալեզու թերթերը, Բեյրութի հայերի սերունդներն են հիմնել մինչև 80-ականները: Պարսկահայերի և հայաստանցի հայերի ներգաղթով բավական մեծ փոփոխություններ եղան դպրոցների լեզվական քաղաքականության մեջ: Առկա է նաև նոր սփյուռքը, որոնք հիմնականում կազմում են Հայաստանից գաղթած հայերը: Վերջիններս հիմնականում գալիս են բարեկամների հետ, միավորվում են առանձին խմբերի մեջ և միայն դպրոցներում են միախառնվում հին սփյուռքի ներկայացուցիչների երեխաներին: Սակայն հին և նոր սփյուռքից զատ կան այսպես կոչված «ամերիկահայեր». նրանք, ովքեր արդեն 50 տարի այստեղ են բնակվում համարվում են ամերիկահայեր՝ իրենց տարբերվող մշակույթով:

Համայնքում անընդհատ տեղի ունեցող ներգաղթի հոսքերի և ներքին տեղաշարժերի արդյունքում փոխվում է համայնքային իրավիճակը: Այդ մասին բավականին լավ պատկերացում են տալիս փորձագիտական գնահատականները.

*«Մեծացող գաղութ է այն իմաստով, որ աշխարհի բոլոր կողմերեն կձգտեն հոս գալ թե Հայաստանեն, թե Միջին Արևելքեն, թե Ամերիկայի և Միացյալ Նահանգների տարբեր շրջաններեն: Նույնիսկ որոշ շարժում կա Հարավային Ամերիկայի որոշ շրջաններեն, ինչպես Վենեսուալեն կամ Արջենտինայեն»*[55]*:*

*«Համայնքի ընդհանուր դիմագիծը հապվածական փոփոխության է ենթարկվում: Լոս Անջելես եկած առաջին հայերը ֆրեզնոհայերն էին՝ 1920-ականներին Ֆրեզնո փեղափոխվածները, ովքեր հողագործության*

[55] Տանաջյան Լ., փորձագիտական հարցազրույց N 1, ՀԱԻ Սփյուռքի հետազոտությունների բաժնի ԴԱՆ, Լոս Անջելես, 2013 թ.:

*հետ դժվարություններ ունեին, կամ չէին ուզում նման գործունեությամբ զբաղվել: Այդ ժամանակ առաջին քաղաքները, որտեղ բնակվեցին հայերը՝ Սան Ֆրանցիսկոն և Լոս Անջելեսն էին՝ իրենց արվարձաններով: 1950-ական թվականներին բավական թվով ռուսահայեր են ներգաղթում արդեն, որոնք գալիս էին Գերմանիայից և ստանում «հիպի»-ներ անվանումը: Նրանց շնորհիվ 1950–60-ական թվականներին, ձևավորվեց Մոնթեբելոյի հայ համայնքը, որպես պաշտոնական համայնք: Արդյունքում զարկ տրվեց եկեղեցիների, դպրոցների և այլ կառույցների բարգավաճմանը»*[56]:

Մեկ այլ դիտարկմամբ՝ *«Տնտեսական ճգնաժամից հետո, սկսած 2008-ից, հիմնականում Գլենդելից սկսեցին գնալ այնպիսի տեղեր, որտեղ աշխատանք և ապրուստ կգտնեին: Օրինակ՝ ժամանակին Ֆրեզնոյից եկածները, գնում են ետ Ֆրեզնո: Այնտեղի 40%-ը մոտավորապես Գլենդելի հայերն են կազմում: Հատկապես գնում են Յուտա նահանգ, որտեղ մեքսիկներ քիչ կան և հայերն ընդունվում են որպես դրսից եկողներ, ուստի նրանց աշխատանքը գնահատվում է բարձր»*[57]:

*Տարածական տեղաշարժերի վերաբերյալ նշվում է՝ «Համայնքն անընդհատ աճ է գրանցում: Փոքր-ինչ շրջանային փոփոխություններ կան, այսինքն Հոլիվուդից գալիս են Գլենդել և մոտակա քաղաքները, Բրբենք, Լակրասենտա, ըստ հնարավորության և ավելի շատ Գլենդելից գնում են մոտակա շրջանները, որտեղ ավելի նպաստավոր է, որտեղ վարձերն ավելի սակավ են: Շատերն էլ տեղափոխվում են երեխաներին կրթություն տալու համար»*[58]:

Եթե անդրադառնանք մեր կողմից իրականացված քանակական հետազոտության տվյալներին, ապա մտադրության մակարդակով անգամ, հարցվողների կեսից ավելին (60,4%) ցանկություն չի հայտնել

56 Տանաջյան Լ., փորձագիտական հարցազրույց N 2, ՀԱԻ Սփյուռքի հետազոտությունների բաժնի ԴԱՆ, Լոս Անջելես, 2013 թ.:

57 Տանաջյան Լ., փորձագիտական հարցազրույց N 2, ՀԱԻ Սփյուռքի հետազոտությունների բաժնի ԴԱՆ, Լոս Անջելես, 2013 թ.:

58 Լ. Տանաջյան, փորձագիտական հարցազրույց N 4, ՀԱԻ Սփյուռքի հետազոտությունների բաժնի ԴԱՆ, Լոս Անջելես, 2013 թ.:

արտագաղթելու: Հայաստան մեկնելու մտադրություն ունեն հարցվածների 10,2%-ը, մոտ մեկ քառորդը դժվարացել է պատասխանել, և մի փոքր հատվածն է միայն ցանկություն հայտնել մեկնելու (գծապատկեր 8):




*Գծապատկեր 8. Լոս Անջելեսի հայերի արտագաղթելու մտադրությունները (% հարցվածներից)*

Դիտարկելով այն անհանգստությունները ու մարտահրավերները, որոնք նշել են հարցվողները՝ ամենահաճախը կրկնվում են՝ «ոչինչ չի անհանգստացնում», «ֆինանսական դժվարություն», «բարձր հարկերը», «գործազրկություն», «ձուլումը», «կարոտը», «ժամանակի սղությունը», «մշակութային տարբերությունները», «անտարբերությունը» պատասխանները (գծապատկեր 9):




*Գծապատկեր 9. Լոս Անջելեսում հայերի համար առաջնային անհանգստությունները (% հարցվածներից)*

Վերջինիս հիման վրա կարելի է եզրակացնել, որ ստեղծված պայմաններում նույնիսկ որոշակի դժվարությունների առկայության դեպ-

քում ապագայում փոփոխությունների ու դրական հեռանկարի սպասում ունեն:

Համայնքում սոցիալական փոփոխության կարևոր բնութագրիչներից են ընտանեկան կազմը և կառուցվածքը: Ըստ փորձագիտական գնահատականների՝ Լոս Անջելեսի հայերի շրջանում նկատվում է կառուցվածքային առումով ընտանեկան կազմի փոփոխություն, սակայն ինչպես նախորդ տասնամյակում այնպես էլ ներկայումս գերակշռում են միասերունդ ընտանիքները փոքր ինչ բարձր ցուցանիշով (60, 1%): Նաև փորձագետների գնահատմամբ ավելացել են միայնակ մայրերի թիվը, ինչը ևս ավանդականությունից դուրս գտնվելու գործոնով է պայմանավորված (գծապատկեր 10):




*Գծապատկեր 10. Լոս Անջելեսի հայերի ընտանեկան կազմը (% հարցվածներից)*

Քննարկենք հաջորդ ուսումնասիրված համայնքը՝ Բեյրութի հայկական համայնքը, որն ավելի փոքր քաղաքային միջավայր է: Այստեղ հայկական համայնքը կազմավորվել է 19-րդ դարի վերջին և աստիճանաբար ստվարացել է: Երկու հիմնական հայաշատ թաղամասերն են Բուրջ Համուդ հայաբնակ թաղամասը և Անթիլիաս ավանը[59]: Բեյրութն առանձնանում է հայկական համայնքային կառույցների առատությամբ: Այստեղ իրենց գործունեությունն են ծավալում Հայ Կաթողիկե, Հայ Առաքելական և Հայ Ավետարանական եկեղեցիները, ավանդական

[59] Սանջյան 2003, 294–295:

կուսակցությունները՝ Հայ հեղափոխական դաշնակցություն (ՀՅԴ), Սոցիալ դեմոկրատ Հնչակյան կուսակցություն (ՍԴՀԿ) և Ռամկավար ազատական կուսակցություն (ՌԱԿ), դպրոցները, հայկական լրատվամիջոցները, մշակութային, բարեգործական և այլ կառույցները, արհեստակցական, երիտասարդական, ուսանողական միությունները, ինչպես նաև սփյուռքի միակ բարձրագույն ուսումնական հաստատությունը՝ Հայկազյան համալսարանը և այլն: Նշված կազմակերպությունները հիմնականում գործում են կրոնադավանական համայնքների կամ քաղաքական կուսակցությունների հովանավորությամբ կամ վերահսկողությամբ: Բեյրութում հայտնի են նախկինում հայահոծ թաղամասերից՝ Աշրաֆեհը, Զեյթուն, Ռմեիլ, Ջմմեյզ, Սուրսոկ և Ջիթավի:

Ինչպես նաև հայերի կոմպակտ խմբեր են եղել Բեյրութի այլ թաղամասերում, ինչպիսիք են Խանդաք Ղամիկը, Զուգաք ալ-Բլաթը, Զարիֆը, Բաբ Իդրիսը, Սանայեհը (Քանթարի), Կլեմանսոն և Համրան: Սակայն քաղաքացիական պատերազմից հետո մեծաթիվ հայեր տեղաշարժվել են Լիբանանի ավելի անվտանգ տարածաշրջաններ: Այժմ հայերը հիմնականում կենտրոնացած են Բուրջ Համուդ, Դորա-Ամանոս, Ֆանար, Ռաուդա, Ջդեիդը, Զալկա, Ջալ Էլ Դիբ, Անթիլիաս, Մժեր և մի քանի այլ թաղամասերում, նաև Անթիլիասից դեպի Բիքֆայա տարածաշրջանները: Երկարատև ներքին անկայունությունն ու պատերազմական վիճակը ջլատել են երկրի սոցիալ-տնտեսական վիճակը, մասնավորապես իրադարձությունների կենտրոն Բեյրութը:

Նշվածի պատճառով Բեյրութում նկատվում է ընդհանուր արտագաղթի միտում, որն իր արտահայտումն է գտնում նաև հայկական համայնքում: Արտագաղթը հիմնականում կապվում է գործազրկության պատճառի հետ, որի հետևանքով կրթված երիտասարդները մեկնում են երկրից դուրս՝ մասնավորապես Արաբական ծոցի երկրները: Վերջինս, սակայն, կրում է սեզոնային բնույթ: Նրանք, ովքեր մշտական են մեկնում հաստատվում են առավել հեռու վայրերում՝ ԱՄՆ, Կանադա, Եվրոպա, Հայաստան: Դատելով քանակական տվյալներից՝ երկրից մեկնել չցանկացողների թիվը մեծ է 42,6%, մոտ 21,6%-ը մտադիր է տեղափոխվել Հայաստան, իսկ մի մասն էլ 27%-ը դժվարացել է պատասխանել (գծապատկեր 11):




*Գծապատկեր 11. Բեյրութի հայերի արտագաղթելու մտադրությունները (% հարցվածներից)*

Փորձագետների տված պատասխաններից պարզ է դառնում, որ այն բեյրութահայերը, ովքեր ունեին նյութական բարեկեցության բարձր մակարդակ, հիմնականում արտագաղթել են: Հարցվողների շրջանում հիմնականում գերակշռում են ներքին տեղաշարժի մտադրություն ունեցողները. քաղաքից մեկնել չցանկացողների մեծ մասը նախընտրում է Լիբանանի այլ քաղաք տեղափոխվել սոցիալ-տնտեսական պատճառներով: Հայաստան մեկնողները հիմնականում որևէ կերպ կապված են Հայաստանին. ունեն ձեռնարկած սեփական գործ կամ ազգակցական-բարեկամական կապեր: Փորձագետները նշում են. *«Գաղթել փափագող հայությունը իրենց ընտանիքի հետ կը գաղթեն: Կը գաղթեն այնպիսի տեղ, որտեղ բարեկամներ, ազգականներ ունին, որպէսզի իրենց դիւրութիւն ընծայուի եւ կարելիութիւն ստեղծուի թղթաբանութեան առումով: Այսինքն նախասաիրութեան հարց չէ, այլ որտեղէն կարելի է վիզա ձեռք բերել: Կրնամ ըսել, թէ գաղթել փափագողները աւելի կը մեկնին Ամերիկա եւ Գանատա, քան՝ Եւրոպա, որովհետեւ այնտեղ բարեկամներ ունին եւ կրնան իրենց օգնելու վիզա ստանալու հարցով»*[60]:

*«Կայ արտահոսք աշխատանքի բերմամբ: Երիտասարդները յատկապէս, որոնք մասնագիտութիւն ունեն, այսօր Լիբանանում գործ չլինելու պատճառով արտագաղթում են եւ գնում են արաբական ծոց,*

[60] Տանաջյան Լ., փորձագիտական հարցազրույց N 15, ՀԱԻ Սփյուռքի հետազոտությունների բաժնի ԴԱՆ, Բեյրութ, 2015 թ.:

*ոմանք դէպի Եւրոպա, Ամերիկա: Իսկ ուրիշները աւելի հեռաւոր վայրեր են փեղափոխւում, որոնք մշփական ձեւով հասփափւում են: Դէպի Հայասփան էլ գնում են, բայց այսօր առաւելաբար սիրիահայերն են, ովքեր դէպի Հայասփան են գնում»*[61]: Առհասարակ, Բեյրութում կյանքի արժեքի բավականին թանկ լինելու պատճառով հայերը ձգտում են քաղաքի տնտեսապես առավել մատչելի թաղամասերում բնակվել: Այն հարցից, թե ինչն է անհանգստություն պատճառում իրենց Բեյրութում, հարցվածների տված պատասխաններում ամենահաճախ հանդիպողներն են «ոչինչ չի անհանգստացնում», «ապահովության անկայունությունը», «տնտեսական ֆինանսական դժվարությունները», «կարգուկանոնը», «քաղաքացիական ազատությունները» (գծապատկեր 12):




*Գծապափկեր 12. Բեյրութում հայերի համար առաջնային անհանգսփությունները (% հարցվածներից)*

Փորձագիտական հարցազրույցների տվյալները թույլ են տալիս լավագույնս պատկերացում կազմել համայնքում վերջին տարիներին կատարված փոփոխությունների մասին: Ստորև ներկայացված են դրանցից մի քանիսը՝

*«Բեյրութահայերը քանակի հեփ, կորսնցուց նաեւ որակը եւ հեփզհեփէ որակի պակասը զգալի կը դառնայ եւ վաղը աւելի զգալի պիփի դառնայ զանազան պափճառներով: Քաղաքը չունի երեկուայ մփաւորականութիւնը, չունի քաղաքական պափրասփուած փարրերը, չունի այն հայ ուսանողութիւնը, որ հայապահպանման գործին մէջ նա-*

[61] Տանաջյան Լ., փորձագիտական հարցազրույց N 7, ՀԱԻ Սփյուռքի հետազոտությունների բաժնի ԴԱՆ, Բեյրութ, 2015 թ.:

*խանձախնդրութիւն ցուցաբերե: Եթէ առաջ հայապահպանումը կը նշանակեր՝ զերծ պահել հայ ուսանողը օտար դպրոցներ յաճախելէ, իսկ այսօր մեր աշակերտներուն կէսէն աւելի օտար վարժարաններ կը յաճախեն եւ օտար լեզուներով ոչ հայկական ակումբներ կը յաճախեն»*[62]: Բեյրութում մեծ թվով առկա են ներքին տարածական տեղաշարժեր, սակայն միաժամանակ ներգաղթի հոսքեր են նկատվում վերջին տարիներին: Հարցվածների 13%-ը տեղափոխվել է այլ վայրից: Սիրիական հակամարտությամբ պայմանավորված՝ տեղափոխվածների գերակշռող մասը սիրիահայեր են (գծապատկեր 13):




*Գծապատկեր 13. Բեյրութ տեղափոխված հայերի տոկոսային հարաբերակցությունը՝ ըստ ելքի վայրի (% հարցվածներից)*

Բեյրութահայերի ընտանեկան կազմում ևս տեղի են ունեցել փոփոխություններ կապված մի շարք գործոնների հետ: Ճնշող մեծամասնությունը 64,6%-ը նուկլեար պարզ ընտանիքներն են բաղկացած միասերունդ ընտանիքներից: Երկսերունդ և եռասերունդ ընտանիքները կազմում են 8,2%, ինչը խոսում է ավանդական միջավայրի բացակայության մասին: Այլ կազմով են 22,5%-ը, որտեղ նշել են եղբայր քույր ազգական, բարեկամ: Խորին հարցազրույցներից պարզ է դառնում, որ սրանք հիմնականում այն ընտանքիներն են ովքեր սիրիահայ բարեկամներ կամ ազգականներ են ապաստանել (գծապատկեր 14):

62 Տանաջյան Լ., փորձագիտական հարցազրույց N 19, ՀԱԻ Սփյուռքի հետազոտությունների բաժնի ԴԱՆ, Բեյրութ, 2015 թ.:




*Գծապատկեր 14. Բեյրութի հայերի ընտանեկան կազմը (% հարցվածներից)*

Միջավայրային առանձնահատկությունների բացահայտման համար կարևոր է հասկանալ հայերի՝ *որպես հավաքական կերպարի վերաբերյալ առկա կարծրատիպերն ու վերաբերմունքը* տվյալ հասարակությունում այլազգիների կողմից: Հայերի նկատմամբ վերաբերմունքը կարող է կանխորոշել այն հետագա զարգացումները, որ կարող է ունենալ համայնքը: Այս խնդրի շուրջ տեղեկատվությունը ներառում է փորձագետների, համայնքային անդամների տեսակետներն ու կարծիքները:

Այսպես՝ հարցազրույցների, դիտարկումների և այլ տվյալների հիման վրա կարելի է ասել, որ երեք համայնքներում էլ գերակշռում է հայերի նկատմամբ առավելապես դրական վերաբերմունք: Առկա է որոշ տարբերություն Լոս Անջելեսի հայկական համայնքում, որը պայմանավորված է հայերի տարբեր խմբերի բազմազանությամբ:

Հատկապես հետխորհրդային ժամանակաշրջանում գաղթած հայերի ոչ այնքան բարձր վարկանիշով ամերիկյան հասարակության մոտ, ինչը հակադրվում է հայերի մնացած խմբի մասին վերաբերմունքին: Ինչպես այս մասին նշում է հարցվածներից մեկը՝ *«Բիզնես աշխարհի մեջ մեկը իր քովը գործավոր պիտի վերցնե, հայ կվերցնե: Կամ այստեղեն ուրիշ երկիր առևտուր պիտի անե, փնտրում է մեկ հայ, որ վստահելի ըլլա: Ժամանակին այդ վստահության հարցը 100 %ով էր, հիմա*

*խախտված է ադիկա մի քիչ: Ժամանակին հայ լինելն արդեն երաշխիք էր, որ ապահով կըրնաք ըլլալ, բայց հիմա խախտվում է ադիկա: Ժամանակավոր հարց է ադիկա: Յատկապես Սովետից եկած մարդոց պատճառով, բայց ափիկա նույնպես ուռճացուած է»*[63]:

Թեհրանում հավաքական կերպարի վերաբերյալ գնահատականներն ամենակայունն են. *«Հայերին համարում են հավատարիմ քաղաքացիներ, որ երբեք չեն դավաճանում Իրանի ազգային շահերին բոլոր մակարդակների վրա: Հայերին համարում են մի հավաքական ուժ, երկրի լուրջ պահերին, ամենավտանգավոր պահերին պատրաստ են մեծ անձնազոհությունների»*[64]:

*«Դրական վերաբերմունքը հայերի հանդեպ կա, եկել է հնուց ու մենք կարողացել ենք պահել այդ կարծիքը մեր մասին: Իրենք են ասում, որ հայերը սուտ չեն խոսում, ճշտապահ են, ազնիվ են»*[65]:

«Հայերը այս երկրում ծայրահեղ հայրենասեր են, նվիրյալներ են: Եթե այսօր 200 պատգամավոր կա և 190 պատրաստ են գումար վերցնել և դավաճանել կառավարությանը, և 10 հոգի միայն չեն վարվի այդպես ապա տաս հոգուց երկուսը մեր հայ պատգամավորներն են»[66]:

Բեյրութում հայերի վերաբերյալ կարծրատիպերը ևս դրական ֆոնին են ներկայացվում՝ *«Լիբանանում, մասնավորապես Բեյրութում հայերը որպես լավագույն քաղաքացիներ են հայտնի: Այսինքն բոլոր մեզ սիրող եւ չսիրող լիբանանցիներու վկայութեամբ, մենք սփեղծագործ, ազնիւ, հաւատարիմ աշխատասեր,, անկեղծ եւ ուղղակի չխաբող մարդու համբաւ թողած ենք: Նաեւ մենք այդ համբաւը յաջողած ենք ունենալ, որովհետեւ Լիբանանի քաղաքացիական պատերազմին, մենք՝ իբրեւ հայութիւն մերժած ենք բոլոր կուսակցութիւններով մէկ*

[63] Տանաջյան Լ., խորին հարցազրույց N 1, ՀԱԻ Սփյուռքի հետազոտությունների բաժնի ԴԱՆ, Լոս Անջելես, 2013 թ.:

[64] Տանաջյան Լ., փորձագիտական հարցազրույց N 1, ՀԱԻ Սփյուռքի հետազոտությունների բաժնի ԴԱՆ, Թեհրան, 2014 թ.:

[65] Տանաջյան Լ., փորձագիտական հարցազրույց N 4, ՀԱԻ Սփյուռքի հետազոտությունների բաժնի ԴԱՆ, Թեհրան, 2014 թ.:

[66] Տանաջյան Լ., փորձագիտական հարցազրույց N 5, ՀԱԻ Սփյուռքի հետազոտությունների բաժնի ԴԱՆ, Թեհրան, 2014 թ.:

*մաս կազմել այդ պատերազմին՝ այս եւ կամ այն կուսակցութեան դէմ կողմորոշուելով եւ կամ դէմը ըլլալով: Այդ արդիւնք էր մեր չէզոք քաղաքականութեան»*[67]*:*

Այսպիսով՝ սոցիալական փոփոխությունների դիտարկման ժամանակ կարևոր էր վերհանել այն սոցիալ-տնտեսական, քաղաքական պայմանները, որոնք առաջնային տեղ են գրավում տվյալ հասարակությունում խմբի ներառման համար, և ապա նոր միայն ազգային մշակութային առանձնահատկությունների պահպանման, վերարտադրման կամ նոր տարրերի ստեղծման համար:

*Հաջորդ ուղղությունը փեղի հայերի լեզվական և կրթական դիրքորոշումներն են*, որոնք անմիջական ազդեցություն ունեն այլէթնիկ միջավայրում հայերի սոցիալական մղումների և առաջընթացի համար, մյուս կողմից կարևոր դեր են կատարում ազգային ինքնության պահպանման գործում: Այս նպատակով դիտարկվել են երկու հիմնական փոփոխականներ, որոնցից առաջինը վերաբերում է տան խոսակցական լեզվին, մյուսը՝ երեխաներին կրթության տալու նախընտրությանը: Լեզուն, լինելով ինքնության կարևորագույն տարրերից մեկը, այդուհանդերձ հաճախ է վտանգվում օտար էթնիկ միջավայրում:

Անկախ իրավիճակից մտնելով տվյալ հասարակություն՝ որոշակի սոցիալական հարաբերությունների, մասնագիտական կապերի մեջ, անհրաժեշտություն է առաջանում սերտել տվյալ հասարակության ընդունված գերիշխող լեզուն: Վերջինս հնարավորություն է տալիս ինտեգրվել և ապահովել սոցիալական առաջընթաց տվյալ միջավայրում:

Մյուս կողմից հարցը վերաբերում է դրա գործածման հնարավորություններին՝ որքանով այն կարող է կիրառվել հետագայում: Հայկական սփյուռքի՝ հատկապես ինքնակազմակերպման բարձր աստիճան ունեցող համայնքներում ազգային լեզուն չի քննարկվում միայն որպես հաղորդակցման միջոց, այլ ներընտանեկան, հարևանական և համայնքային, ազգային միջավայր ապահովող պայման, հետևաբար՝ որպես ազգապահպան կարևորագույն մեխանիզմ: Այդ իսկ պատճառով

---

[67] Տանաջյան Լ., փորձագիտական հարցազրույց N 11, ՀԱԻ Սփյուռքի հետազոտությունների բաժնի ԴԱՆ, Թեհրան, 2014 թ.:

կարևոր է համարվել առօրյա ընտանեկան շփման մեջ կիրառվող լեզվի մասին բացահայտումները, ինչը թույլ է տալիս տեսնել երկու ասպեկտ՝ լեզվական վարքի և ինտեգրման միտումները: Դիտարկենք երեք համայնքներում տան խոսակցական լեզվի համեմատական պատկերը:

Թեհրանում հարցվածների մեծամասնության մոտ տան խոսակցական լեզուն հայերենն է, որը պայմանավորված է խիտ սոցիալական հարաբերություններով և համայնքային կառուցվածքով: Ենթադրվում է, որ նույնիսկ մասնագիտական և տնտեսական զբաղվածության առումով այստեղ հարաբերությունների համակարգը խիտ դասավորվածություն ունի, ինչը պատճառ է հանդիսանում, որ տանը հիմնականում շփվում են հայերենով (97%)՝ չնայած այն հանգամանքի, որ տիրապետում են տվյալ երկրի պետական լեզվին (գծապատկեր 15):




*Գծապատկեր 15. Թեհրանում հայերի՝ տան հիմնական խոսակցական լեզուն (% հարցվածներից)*

Սակայն առանձին դեպքերում, ինչպես օրինակ դպրոցական համակարգում դիտարկման տվյալները թույլ են տալիս շեշտել, որ այն երեխաները, ովքեր ներգրավված չեն որևէ կամավորական խմբերում, դասերից դուրս շփվում են այլ լեզվով:

Լոս Անջելեսում լեզվական վարքագծային պատկերը այլ է՝ պայմանավորված հայերի տարբեր խմբերի ներկայությամբ: Դրանով պայմանավորված նաև տարբերվում է այդ խմբերի լեզվական վարքը միմյանցից: Փորձագետների կարծիքով, տանը հայերեն լեզվով շփվում

են հիմնականում այն ընտանիքները, ովքեր եկել են Իրանից և Հայաստանից, նաև Արևելքի որոշ երկրներից:

Ընդհանուր առմամբ քանակական տվյալները ցույց են տալիս, որ հարցվածների 61.7%-ի տան առօրյա խոսակցական լեզուն հավասարապես և՛ հայերենը, և՛ անգլերենն է: Պայմանավորված այն հանգամանքով, որ հետխորհրդային շրջանում բազմաթիվ հոսքեր են եղել դեպի Լոս Անջելես, բավականաչափ հայեր խոսում են հավասարապես հայերեն և ռուսերեն (16.9%), իսկ մնացած դեպքերում՝ փոքր ինչ տարբերությամբ, այլ լեզուներ ևս կիրառվում են: Ուշագրավ է թուրքերենի կիրառության մասին հիշատակումը. Վերջինս, ըստ էության, կարելի էր հանդիպել միայն Պոլսահայերի միության տարեց անդամների մոտ (գծապատկեր 16):




*Գծապատկեր 16. Լոս Անջելեսում հայերի՝ տան հիմնական խոսակցական լեզուն (% հարցվածներից)*

Այս խնդրի վերաբերյալ փորձագետներից մեկը նշում է՝ *«Հեռուստատեսությունը յուրաքանչյուր օր անգլերեն է և անընդհատ, գործնական միջավայրը նույնպես: Անգլերեն լեզվի գործածությունն այնքան շատ է, որ հայերենն այլևս գործածությունից դուրս է մնում»*[68]:

Բեյրութում, ըստ քանակական տվյալների, հարցվածների ճնշող մեծամասնության տան լեզուն հայերենն է (93,9%), քչերի մոտ՝ արաբերենը (գծապատկեր 17):

[68] Տանաշյան Լ., փորձագիտական հարցազրույց N 11, ՀԱԻ Սփյուռքի հետազոտությունների բաժնի ԴԱՆ, Լոս Անջելես, 2013 թ.:




*Գծապատկեր 17. Բեյրութում հայերի՝ տան հիմնական խոսակցական լեզուն (% հարցվածներից)*

Այստեղ՝ ինչպես Թեհրանում բազմաթիվ հայկական կազմակերպությունները միություններն ու հայկական տարբեր միջավայրերի առկայությունը նպաստում է ազգային լեզվի կիրառման հնարավորությանը: Լեզվի իմացության խնդիրը տարբեր կառույցների կողմից դիտվում է որպես առաջնային խնդիր. եթե Թեհրանում այն առավելապես իրականանում էր փակ կրոնական առանձնացող միջավայրի հաշվին, ապա այստեղ կրոնական ու ավանդական կառույցների հիմնական գործառույթներից մեկն է: Նույնիսկ խառնամուսնությունների մասին փորձագետների դիտարկումներն ու խորին հարցազրույցների տվյալները ցույց են տալիս, որ խառնամուսնություններից ծնված երեխաներին փորձում են ներգրավել հայկական դպրոցներ՝ լեզվի իմացությունն ապահովելու համար:

Կրթական գործընթացը որպես սոցիալական փոխակերպումների հիմնարար ցուցիչ դիտարկելիս անդրադառնանք հատկապես երիտասարդ սերնդի կրթական վարքին: Վերջինս արտահայտում է երեք հիմնական կողմ՝ ծնողների դիրքորոշումը կրթական գործընթացի վերաբերյալ, համայնքնում հայկական դպրոցների առկայության և գոյատևման խնդիրը և երեխաների հետագա նախընտրությունների, հայկականության հետ կապի աղերսները:

Պետք է նշենք, որ երեք համայնքներում էլ առկա են հայկական դպրոցներ, և չնայած առկա դժվարություններին դրանք շարունակում

են գործել: Գրեթե երեք համայնքներում էլ փորձագետների և խորին հարցազրույցների տվյալներով հաստատվում է այն պնդումը, որ կրթական հաստատություններն ունեն ավելի շատ սոցիալական միջավայրի, հաղորդակցման և հայկականության ապահովման գործառույթ, քան բուն ուսումնական:

Փորձագիտական և խորին հարցազրույցի տվյալների հիման վրա տեսնում ենք հետևյալ նկարագրությունը՝ «*Այս երկրում գործում է նույն կրթական համակարգը, ինչ Խորհրդային շրջանում՝ պետական հոգածության փակ անվճար կրթություն: Կան նաև, այսպես կոչված, սեփական/մասնավոր կրթական հաստատություններ, որոնք պատկանում են հայկական ազգային կառույցներին: Այս հաստատություններում և՛ ուսումնական, և՛ կրթական-դաստիարակչական մակարդակը շատ ավելի տարբերվում է իր որակով հանրակրթականից: Դրա համար մարդիկ նախընտրում են մասնավոր դպրոցներ տանել իրենց երեխաներին՝ չնայած դրանց վճարովի լինելուն: Սակայն այդուհանդերձ հայ աշակերտների մեծ մասը հանրային դպրոցների մեջ են, որտեղ հայերեն տիրապետելու համար բավական գիտելիքներ չեն ստանում: Գլենդելի հանրային դպրոցներից միայն երկուսն ունեն հայերեն լեզվի լիարժեք ծրագիր*»[69]:

*«Հիմա Հայստանեն եկած զանգվածի զավակները, հիմնականում հանրային դպրոցներ կհաճախեն: Նրանք հայախոս են, բայց հայերեն գրել կարդալ չգիտեն: Չեմ ասում, որ մյուս զանգվածի բոլորի զավակները հայերեն գրել կարդալ գիտեն, բայց գոնե հայկական դպրոցի մեջ են, որոշ բանով կծանոթանան»*[70]:

Ըստ քանակական տվյալների վերլուծության՝ Լոս Անջելեսում հարցվածների շուրջ 60%-ի երեխաներն են հաճախել կամ հաճախում մասնավոր հայկական դպրոցներ, որոնք ըստ խորին հարցազրույցի տվյալների անվտանգության ապահովման կարևորագույն գործոն են

69 Տանաշյան Լ., փորձագիտական հարցազրույց N 12, ՀԱԻ Սփյուռքի հետազոտությունների բաժնի ԴԱՆ, Լոս Անջելես, 2013 թ.:

70 Տանաշյան Լ., փորձագիտական հարցազրույց N 17, ՀԱԻ Սփյուռքի հետազոտությունների բաժնի ԴԱՆ, Լոս Անջելես, 2013թ.:

հայ աշակերտների համար: Մյուս խոշոր զանգվածը՝ 28%-ը, հաճախում են պետական դպրոցներ: Ինչպես նշել են փորձագետները, հիմնականում կամ մի քանի սերունդ այնտեղ բնակվող ամերիկահայերի երեխաներն են կամ հայաստանցի հայերը, ովքեր վճարի խնդիր ունեն (գծապատկեր 18):




*Գծապատկեր 18. Լոս Անջելեսի հայկական համայնքում երեխաների դպրոցական կրթության պատկերը (% հարցվածներից)*

Թեհրանում հարցված հայերի ճնշող մեծամասնության երեխաները հաճախում կամ հաճախել են հայկական դպրոց 80% (գծապատկեր 19): Համեմատելով նախորդ սերնդի հետ, կարող ենք ասել, որ հայկական կրթության ավանդույթը շարունակում է գերիշխող մնալ, սակայն ցուցանիշը, ըստ համայնքի փորձագետների, մեկ սերնդի կտրվածքով իջել է մոտ 5%-ով:




*Գծապատկեր 19. Թեհրանի հայկական համայնքում երեխաների դպրոցական կրթությունը (% հարցվածներից)*

Սակայն, ըստ փորձագետների այս բարձր ցուցանիշներն այնքան էլ գոհացնող չեն կարող լինել: Վերջինս բացատրվում է փորձագետների

հետևյալ կարծիքներով.

*«Կարևոր խնդիր է հայկական լեզվի պաշտոնական դասավանդումը դպրոցներում: Այսօր մեր հայկական դպրոցներում հայերեն դասավանդում ենք, բայց ուրիշ առարկայի անվան տակ: Երեխան էլ նայում է տեսնում դրա թվանշանը չի ազդում իր արդյունքների վրա, շահագրգռվածություն չունի: Հետո ոչ ոք քեզնից չի հարցնում՝ դու հայերեն սովորել ես, թե՝ ոչ, թվանշան ստացար, թե՝ ոչ: Հետո դա քեզ ուրիշ տեղ պետք չի գալիս: Իսկ սա լուրջ պատճառ է ընդհանրապես հայերենը չսովորելու համար»*[71]:

Բեյրութահայերի շրջանում կրկին, մեծամասնությունը հաճախել է հայկական դպրոց: Այստեղ ևս ի համեմատ նախորդ սերնդի՝ հայկական կրթության նկատմամբ բարձր դիրքորոշումն արդի է, սակայն այդ ցուցանիշը ևս նվազել է ինը տոկոսով: Եվ չնայած, հայկական կրթության հանդեպ նվազող հետաքրքրությանը, բեյրութահայերի դիրքորոշումներում ազգային կրթության և հայոց լեզվի հանդեպ պահպանողական մոտեցումը շարունակվում է մնալ (գծապատկեր 20)




*Գծապատկեր 20. Բեյրութի հայկական համայնքում երեխաների դպրոցական կրթությունը (% հարցվածներից)*

Բեյրութում կրթական բնագավառի իրավիճակը փորձագիտական

[71] Տանաջյան Լ., փորձագիտական հարցազրույց N 9, ՀԱԻ Սփյուռքի հետազոտությունների բաժնի ԴԱՆ, Լոս Անջելես, 2013 թ.:

գնահատականներով հետևյալն է՝ *«Հայկական կրթական հաստատութիւնները աւելի աժան ուսումնաւարձերով ուսում կը ջամբեն, քան այն դպրոցները, որոնց ուսումնավարձերը 10000–15000 դոլար են: Ես նկատի չունիմ այն աշակերտները (նրանց թիւը շատ քիչ է), որոնք կը յաճախեն պետական վարժարաններ, որտեղ անվճար է եւ անոնք նիւթական չգոյութեան պատճառով այնտեղ կը յաճախեն: Մեր դպրոցները՝ ըլլայ անիկա Առաքելական, Կաթուղիկէ եւ Բողոքական, ընդհանրապէս այդ չքաւոր ընտանիքներուն անվճար ուսում կը տրամադրեն: Այն ընտանիքները, որոնք իրենց զաւակները օտար դպրոց կը ղրկեն, քաղքենիացած հոգեբանութենէն տարուելով կ'ուղարկեն իրենց զաւակները, եւ ոչ թէ աւելի աժան ուղարկելու ցանկութեամբ:*

Այսօր մեր ազգային դպրոցներու մակարդակը շատ բարձր է, եւ մեր ուսանողները պետական քննութիւնները ընդհանրապէս լաւ ու յաջողութեամբ կը յանձնեն»[72]:

Այսպիսով, երեք տարբեր հասարակություններում հայկական համայնքների ընդհանուր և առանձնահատուկ միջավայրային գործոնները հիմք են հանդիսանում սոցիալական տեղաշարժերի համար: Սփյուռքում սոցիալական փոփոխությունների գնահատման լավագույն ցուցիչ կարող է հանդիսանալ սոցիալական տեղաշարժերի ընթացքի և արդյունքի ուսումնասիրությունը: Սոցիալական տեղաշարժերի գործընթացը սփյուռքում կարող է պայմանավորվել և՛ ազգին բնորոշ որակներով, և՛ տվյալ միջավայրում ձեռք բերած սոցիալական փոխազդեցության ձևերով, սոցիալական դիրքով:

Հաշվի առնելով հայկական սփյուռքի բազմազան կենսաձևերը՝ հաջորդիվ դիտարկվում են երեք տարբեր միջավայրերում հայերի սոցիալ-մասնագիտական տեղաշարժերի ընդհանուր և առանձնահատուկ կողմերը՝ քանակական և որակական հետազոտությունների տվյալների հիման վրա:

72 Տանաջյան Լ., փորձագիտական հարցազրույց N 2, ՀԱԻ Սփյուռքի հետազոտությունների բաժնի ԴԱՆ, Բեյրութ, 2015 թ.:

## ՄԱՍ 3.

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ԿՈՂՄԵՐԸ ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ, ԹԵՀՐԱՆԻ ԵՒ ԲԵՅՐՈՒԹԻ ՀԱՅԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Բնակչությունը դինամիկ և հարաշարժ փոփոխություններով համակարգ է: Դրա կազմը և կառուցվածքն անընդհատ փոփոխվում են: Այս փոփոխությունների գործոններն են հանդես գալիս ժողովրդագրական գործընթացները, որոնք գտնվում են ժողովրդագրական կառուցվածքի հետ փոխկապվածության մեջ: Ընդ որում, ոչ միայն ժողովրդագրական գործընթացներն են պայմանավորում կառուցվածքի փոփոխությունները, այլ նաև վերջիններս ազդում են այդ գործընթացների ինտենսիվության վրա: Այս իմաստով որևէ խմբի, հասարակության սոցիալական կազմը, դրա փոփոխություններն առանձնահատուկ կարևորություն է ստանում դրանց ժողովրդագրական ցուցանիշների հետ փոխկապվածության մեջ: Խմբի սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչները՝ սեռ, տարիք, կրթություն և այլն, կարևոր դեր են կատարում սոցիալ-մասնագիտական շերտերի ձևավորման գործում: Լինելով միջավայրային բազմազանության մեջ՝ յուրաքանչյուր համայնք ազդեցություն է կրում նաև սոցիալ-տնտեսական առումով, ինչն էլ անդրադառնում է համայնքում ընթացող սոցիալ-մասնագիտական գործընթացների վրա:

Բնակչության սոցիալական կազմի կարևորագույն տարրերն են համարվում սոցիալ-մասնագիտական խմբերը, որոնք զբաղեցնում են կարևոր տեղ հասարակության սոցիալական կառուցվածքում: Ակնհայտ է, որ տարբեր հասարակություններում դրանց մոդելները տար-

բեր են: Դասերի և շերտերի հայեցակարգային մոտեցումները սոցիալական գիտություններում առհասարակ տարբերվում են իրենց բովանդակությամբ: Ընդհանուր առմամբ ընդունված է շերտավորման հասկացությունների երկու հիմնական վերլուծական մոդելների տարբերակում՝ «վեբերյան» և «մարքսյան»[73]: Եվ առավել էմպիրիկ մոտեցումը, ինչպիսին է սոցիալ-տնտեսական/մասնագիտական կարգավիճակի որոշարկումը: Վերջինս ներառում է եկամտի, կրթության, սոցիալական ռեսուրսների և այլ ցուցանիշների փոխկապվածությունը: Հետազոտողները շերտավորման և առանձին խմբերի սահմանման երևույթը դիտարկել են տարբեր հասարակությունների օրինակով: Ինչպես օրինակ, Ու. Լ. Ուորները իր սոցիալական ստրատիֆիկացիայի տեսության մեջ դիտարկում է ամերիկյան հասարակությունում սոցիալական կառուցվածքը հետևյալ խմբերի միջոցով՝ վերին և ստորին դասակարգեր, որոնց մեջ իր հերթին առանձնացնում է երեք մակարդակներ՝ վերին բարձր, վերին միջին, վերին ցածր, ստորին բարձր, ստորին միջին, ստորին ցածր դասակարգերը: Ըստ այդմ, յուրաքանչյուր շերտ առանձնացվում է եկամտի, մասնագիտական որակավորման, սոցիալական կարգավիճակի և այլ փոփոխականներով[74]:

Մեկ այլ հետազոտող Յու. Հարությունյանը, ուսումնասիրելով ԽՍՀՄ տարածքում բնակչության տարբեր էթնիկ խմբերը, առանձնացրել է բնակչության խմբեր հետևյալ բնութագրիչներով՝ առավելապես մտավոր գործունեություն ծավալած անձիք և առավելապես ֆիզիկական աշխատանքով զբաղվածներ: Առաջինում մի քանի մակարդակի խմբեր են առանձնացվել ա) ծառայողների խումբ՝ առանց հատուկ պատրաստվածության մտավոր աշխատանք կատարողներ, բ) միջին մասնագիտական կրթությամբ մտավոր աշխատանք կատարողներ, գ) բարձրագույն և հետբուհական կրթությամբ մտավոր աշխատանք կատարողներ, դ) միջին և բարձր օղակների ղեկավարներ: Երկրորդն իր հերթին ներառում է մի քանի խմբեր ա) առանց հատուկ պատրաստ-

73 Weber 1958, 180–195.

74 Warner 1936, 234–237.

վածության ֆիզիկական աշխատանք կատարողներ, բ) ոչ արդյունաբերական ուղղվածությամբ հատուկ պատրաստվածությամբ ֆիզիկական աշխատանք կատարողներ, գ) արդյունաբերական ուղղվածությամբ հատուկ պատրաստվածությամբ ֆիզիկական աշխատանք կատարողներ[75]:

| ԱՌԱՎԵԼԱՊԵՍ ՄՏԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱՏԱՐՈՂՆԵՐ | ԱՌԱՎԵԼԱՊԵՍ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱՏԱՐՈՂՆԵՐ |
|---|---|
| - բարձրագույն և հետբուհական կրթությամբ մտավոր աշխատանք կատարողներ | - արդյունաբերական ուղղվածությամբ հատուկ պատրաստվածությամբ ֆիզիկական աշխատանք կատարողներ |
| - միջին մասնագիտական կրթությամբ մտավոր աշխատանք կատարողներ | - ոչ արդյունաբերական ուղղվածությամբ հատուկ պատրաստվածությամբ ֆիզիկական աշխատանք կատարողներ |
| - առանց հատուկ պատրաստվածության մտավոր աշխատանք կատարողներ | - առանց հատուկ պատրաստվածության ֆիզիկական աշխատանք կատարողներ |

*ԽՍՀՄ տարածքում բնակվող տարբեր էթնիկ խմբերի սոցիալ-մասնագիտական խմբերն ըստ Յու. Հարությունյանի*

Նշված և առաջարկվող այլ մոտեցումներն ունեն իրենց կարևորությունը որևէ երկրի սոցիալ-մասնագիտական կազմի որոշարկման համար: Սակայն տվյալ սոցիալ-մասնագիտական բաժանումները բնութագրական լինելով որևէ հասարակությանը՝ չեն կարող տարածվել այլ հասարակությունների վրա: Դիտարկելով տարբեր հետազոտողների կողմից հասարակության մեջ տարանջատված սոցիալ-մասնագիտա-

[75] Арутюнян 2011, 151.

կան խմբերը կարելի է տեսնել երկու հիմնարար խումբ. առավելապես մտավոր աշխատանք կատարողներ և առավելապես ֆիզիկական աշխատանքով զբաղվածներ: Այս սկզբունքը կարելի է համարել հիմնական, քանի որ այն իր բուն բովանդակությամբ և ձևով բավարարում է ցանկացած հասարակության սոցիալ-մասնագիտական բաժանման տրամաբանությանը: Մնացյալ հավելյալ ենթաբաժանումներն իրենց բնութագրիչներով կարող են տարբերվել առանձին դեպքերում՝ կախված իրավիճակից, միջավայրային պայմաններից, սոցիալական այլ առանձնահատկություններից:

Անշուշտ, այս խմբերից յուրաքանչյուրում առկա են տարբեր մակարդակներ՝ կապված մասնագիտական պատրաստվածության տարբեր աստիճանների և տարբեր հասարակություններում որևէ բնագավառի մասնագետների պահանջների հետ: Ըստ այդմ, կարող ենք ասել որ, միևնույն խմբում ներգրավված անձը կարող է մի հասարակության մեջ զբաղեցնել մի սոցիալական կարգավիճակ, մյուսում՝ բոլորովին այլ:

Այսպիսով, եթե սփյուռքի համայնքների կտրվածքով դիտարկենք սոցիալական դիրքի և մասնագիտական որակների ու աշխատանքի բովանդակության փոխկապվածությունը, ապա կարելի է առանձնացնել երկու հիմնական խումբ՝ մտավոր (Ա խումբ) և ֆիզիկական (Բ խումբ) աշխատանքով զբաղվածներ:




*Սփյուռքի հայկական համայնքներում*
*սոցիալ-մասնագիտական երկու հիմնական խմբերը*

Այս խմբերը գտնվում են սոցիալ-մասնագիտական բաժանման միջակայքի երկու բևեռներում: Այս բևեռները, կախված մի շարք սուբյեկտիվ և օբյեկտիվ ազդող փոփոխականներից, կարող են հեռանալ կամ մոտենալ միմյանց՝ ընդհուպ շոշափել մյուս բևեռի սահմանը, սակայն երբեք չհատվել: Այս մոտեցումը թույլ է տալիս օպերացիո-

նալիստական մակարդակում հաղթահարել խմբերի սահմանազատման հարցը, ինչպես նաև դրա առանձին փոփոխականների հնարավոր համընկնումները: Նմանատիպ բաժանումը թույլ է տալիս նաև ուսումնասիրվող տարբեր խմբերը համեմատել միմյանց հետ:

Դիտարկելով սփյուռքը որպես սոցիալ-տնտեսական, մասնագիտական ներուժ՝ կարևոր է անդրադառնալ դրա ֆիզիկական և մտավոր աշխատանքային բովանդակությանը, դրանց փոփոխությունը պայմանավորող համատեքստին: Համայնքի կտրվածքով սոցիալ-մասնագիտական խմբերը կարող են կարևոր դեր կատարել համայնքի տնտեսական, սոցիալական, քաղաքական և հոգևոր կյանքում: Երեք համայնքներում իրականացված հետազոտությունների ընթացքում, մասնագիտական գործունեության ձևերն ամբողջացվել են երկու խոշոր սոցիալ-մասնագիտական խմբերում՝ մտավոր և ֆիզիկական (գծապատկեր 21):




*Գծապատկեր 21. Լոս Անջելեսի, Թեհրանի, Բեյրութի հայերի աշխատանքային գործունեության բնույթը (% հարցվածներից)*

Պայմանավորված գտնվելու վայրով, ձևավորման պատմությամբ և մի շարք այլ գործոններով, սփյուռքի երեք համայնքներում երկու հիմնական խմբերում կազմավորվել են մի քանի սոցիալ-մասնագիտական խմբեր, որոնք, լինելով միաժամանակ նման նաև առանձնանում են իրենց որակական հատկանիշներով: Ուսումնասիրված խմբերը պայմանականորեն տարաբաշխվել են մի քանի սոցիալ-մասնագիտական խմբերի, որոնցից յուրաքանչյուրն արտահայտում է ոչ միայն

տնտեսական գործունեության ձև, այլ նաև կրում է սոցիալական առանձնակի հատկանիշներ և ցույց է տալիս պատկանելիությունը որոշակի սոցիալական շերտի:

*Աղյուսակ 3. Լոս Անջելեսի, Թեհրանի, Բեյրութի հայ համայնքների աշխատանքային գործունեության բնույթը*[*]

| ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹԸ | ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ% | ԹԵՀՐԱՆ % | ԲԵՅՐՈՒԹ % |
|---|---|---|---|
| Առանց պատրաստվածության ֆիզիկական աշխատանք կատարողներ (B) | 6,4 | 14,1 | 5,2 |
| Հատուկ պատրաստվածությամբ ֆիզիկական աշխատանք կատարողներ ( B1) | 4,6 | 48,2 | 15,5 |
| Առանց որակավորմամբ մտավոր աշխատանք կատարողներ (A2) | 8,3 | 8,2 | 9,3 |
| Միջին որակավորմամբ մտավոր աշխատանք կատարողներ (A1) | 11,9 | 4,7 | 14,4 |
| Բարձր որակավորմամբ մտավոր աշխատողներ (A) | 68,8 | 24,7 | 55,7 |
| Ընդհանուր | 100 | 100 | 100 |

* *Գործունեության ձևի բովանդակությունը ճշգրտվել և պարզեցվել է փեղում հարցվածների հետ:*

Այս առնչությամբ հատուկ կարևորություն ունեն փորձագիտական և խորին հարցազրույցների միջոցով հավաքագրված տեղեկատվությունը: Այն գալիս է լրացնելու և որոշ դեպքերում ընդհանրացնելու ստացված քանակական տվյալները՝ հագեցնելով որակական բովանդակությամբ: Փորձագիտական հարցազրույցների միջոցով որոշարկվել են երեք միմյանցից տարբեր քաղաքների հայերի սոցիալական կառուցվածքի հիմնական հատկանիշներն իրարից տարբերվող սոցիալական գործընթացների պայմաններում: Մասնավորապես, վերլուծված տեղեկատվությունը թույլ է տվել հասկանալ մասնագիտական որակների, կրթական ցենզի և զբաղեցրած սոցիալական կարգավիճակի փոխառնչությունները, որոնք առկա են տարբեր մշակույթներում: Դրանք ազդեցություն են ունենում հայերի՝ դեպի տարբեր ոլորտներ

միտվածության դրդապատճառների վրա և ձևավորում են հատուկ սոցիալական դիրքորոշումներ: Դիտարկենք վերոնշյալը սոցիալական գործընթացներում առանձին-առանձին երեք համայնքներում:

Ինչպես նշում են համայնքի անդամները, վերջին 20 տարիներին Լոս Անջելեսի հայերի սոցիալ-մասնագիտական զբաղվածության բնագավառները բավականին փոփոխվել են: Դեռևս 20 տարի առաջ առավել ընդունված և շահեկան էին համարվում այնպիսի մասնագիտությունները, ինչպիսիք են՝ ոսկերչությունը, շինարարությունը, ավտոմեքենաների նորոգումը, կոշկակարությունը կամ այլ արհեստները: Այժմ հիմնական ուղղվածությունն այլ բնագավառներն են՝ բժշկություն, փաստաբանություն և այլն: Կտրուկ ավելացել է պետական կառույցներում աշխատողների թիվը, հիմնականում այն վայրերում, որտեղ բնակչությունը հայաշատ է: Երիտասարդ սերունդը հիմնականում ձգտում է այլ ոլորտներում տեղավորվել տեխնոլոգիաների, արվեստի, ֆինանսական համակարգի: Սա ավելի մոտ է երկրի ողջ հասարակության ընդհանուր միտումներին: Վերջինս ավելի հավանական է դարձնում նրանց արտամղումը համայնքային կյանքից, քանի որ միևնույն ռեսուրսների կիրառմամբ անհատը կարող է առավել լայն դաշտում զբաղվածություն ձեռք բերելու հնարավորություն ստանալ: Առկա է նաև մեկ այլ խումբ, որը հիմնականում բաղկացած են նորեկներից հատկապես Հայաստանից ներգաղթած հայերից: Վերջիններս սկզբնապես ներառվում են հիմնականում բանվորական դասակարգում: Ըստ հետազոտության տվյալների՝ Լոս Անջելեսի հայկական համայնքում մտավոր աշխատանքով զբաղվածները բավական մեծ թիվ են կազմում, որոնց մեջ գերակշիռ մասը բարձր որակավորմամբ են:

Տնտեսական վիճակի մասին խոսելիս կրկին պետք է հաշվի առնել բազմաշերտությունն ու առկա ենթախմբերը: Հետագայում կտեսնենք, որ տարբեր տարածաշրջաններից եկած հայերը, խիստ տարբերվում են իրենց տնտեսական գործունեությամբ և զբաղեցրած սոցիալ-մասնագիտական կառուցվածքով:

Հարուստ նկարագրություն են տալիս փորձագետները, ովքեր նկարագրում են վերջին տարիների ընթացքում համայնքում կատար-

վող սոցիալ-տնտեսական փոփոխությունները. *«Անոնք, որոնք հին են, հոս գործ ունեն, բարվոք վիճակի մեջ են, որոշ փոկոս պիտի ներկայացնեն, ամբողջ համայնքը չեն: Համայնքի ծանրակշիռ մասը միջին դասակարգ և վար են: Մեծ է թիվը անոնց, որոնք ամերիկյան հասկացողությամբ աղքատության մակարդակի շեմից ցածր են կամ մոտ են: Պատկերացրած հարուստ գաղութը չէ: Եթե նույնիսկ հարստություն կա, լավ չէ կազմակերպված, որ օգտակար ըլլա թե գաղութին, թե առհասարակ: Առաջ ավելի պրոֆեսիոնալ, անհատական արհեստներ էին՝ շինարարություն, ավտոմեքենաների նորոգում, ոսկերչություն, կոշկակարություն և այլն: Դրանց հետ կար բժշկություն, ինժեներիա և այլն: Հետո սկսեց զարգանալ ամերիկյան հասկացողությամբ աշխատանքային դաշտերը, երիտասարդությունը սկսավ ճյուղավորվել՝ տեխնոլոգիաների, արվեստի, ֆինանսի մեջ, որոնք ընդհանրապես ոչ Հայաստանի մեջ, ոչ համայնքում: Բայց վերջին տաս տարիներուն սկսած է զարգանալ բանվորական մակարդակը, հատկապես նորեկների մոտ: Առաջ նորեկները չէին մտնում ապանք գործերու մեջ: Ասենք, տաքսի մեքենաների վարելը, ավտոլվացումը, փարքինգի, շենքերու շինարարության բանվորական աշխատանք, հեռավոր բեռնափոխադրումներ և այսպիսի մակարդակի գործեր սկսած են շատանալ: Պետք է նաև գնահատանքով դիտել, որ մարդիկ մի քանի տարի փող են վաստակում, հետո ավելի լավ գործի են անցնում»*[76]:

Այս և այլ հետազոտական տվյալներն ու տեղեկատվական աղբյուրները հաստատում են, որ ԱՄՆ-ից հայերի արտագաղթի միտում գրեթե չի նկատվում: Առկա են միայն ամերիկյան տարբեր նահանգների մինչև հայերի տարածական տեղաշարժեր:

*«Վերջին 20 տարիներին բավական փոխվել է պատկերը, քանի որ այժմ երիտասարդությունը տարբեր է: Օրինակ, եթե 20 տարի առաջ հարստանալու համար պետք է լինեիր ոսկերիչ, այժմ լրիվ այլ ուղղվածություն է: Այժմ մեր երիտասարդությունը շատ տարբեր բնա-*

---

[76] Տանաջյան Լ., փորձագիտական հարցազրույց N 10, ՀԱԻ Սփյուռքի հետազոտությունների բաժնի ԴԱՆ, Լոս Անջելես, 2013 թ.:

*գավառներում է (բժշկական, փաստաբանական, իրավաբանական): Պետք է նաև նշել, որ աշխատում են պետական կառույցների մեջ՝ հատկապես մարզային: Վերջինս, անշուշտ, կապված է այն բանի հետ, թե արդյոք տվյալ քաղաքը հայաշատ է, եթե այո, ապա աշխատողների մեծ մասն էլ հայերն են»*[77]:

Ի տարբերություն Լոս Անջելեսի՝ Թեհրանում հայերը մեծամասամբ զբաղված են ֆիզիկական աշխատանքով, որոնց մեջ գերակշռող են հատուկ պատրաստվածությամբ ֆիզիկական աշխատողները: Ըստ ընդհանուր գնահատականների՝ վերջին տարիներին աճի միտում է նկատվում դեպի բարձր որակավորմամբ մտավոր աշխատանքը: Սակայն անփոփոխ է իրանական հասարակության մեջ հայերի՝ որպես լավ արհեստավորի կերպարը: *«Ավտոմեխանիկայից մինչև կաղապարաշինություն, ընդհանրապես ինչ արհեստ ասեք, լավագույնները հայերի շրջանում են, ինչու ոչ, նաև քանդակագործությունը, ոսկեգործությունը, արծաթագործությունը»*[78]: Ինչպես նշում են համայնքի ներկայացուցիչները, տևական ժամանակ, մինչ այսօր էլ արհեստը համարվել է ընտանեկան կամ բարեկամական ժառանգություն և գաղտնիությունն ապահովվել է՝ փոխանցելով այն սերնդեսերունդ: Հիմնական ոլորտները, որոնցում հայերի թիվը մեծ է մանր արհեստներն են և առևտուրը: Իսկ վարչական պաշտոնյաները շատ ավելի սահմանափակ թիվ են կազմում: Գիտական ոլորտում կան ուսուցիչներ, դասախոսներ, սակայն հաջողված, ակնառու բիզնեսմեններ, ձեռնարկատիրական ընկերություններ շատ քիչ թվով կան:

Վերոնշյալ տարածական տեղաշարժերն իրենց ազդեցությունն են ունեցել համայնքի սոցիալ-տնտեսական և սոցիալ-ժողովրդագրական վիճակի վրա: Համայնքի առավել ապահովված մասը լքել է երկիրը և արդյունքում միջին շերտը դարձել է նրան փոխարինողը, իսկ միջին խավի շեմն ավելի է նվազել: Այսինքն, ձևավորվել են որակապես

77 Տանաջյան Լ., փորձագիտական հարցազրույց N 14, ՀԱԻ Սփյուռքի հետազոտությունների բաժնի ԴԱՆ, Լոս Անջելես, 2013 թ.:

78 Տանաջյան Լ., խորին հարցազրույց N 7, ՀԱԻ Սփյուռքի հետազոտությունների բաժնի ԴԱՆ, Թեհրան, 2014 թ.:

նոր՝ հարուստ, միջին և միջինից ցածր տնտեսական շերտեր: Տնտեսական առումով համայնքը կրել է կորուստներ, առաջնահերթ կապված՝ մարդուժի բացակայության հետ, ինչն ունի իր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները: Ինչպես նշում են փորձագետները՝ «*Տնտեսապես փկարացել է. ես կասեի մարդուժը գնացել է, արտագաղթ է եղել, կրթություն ստանալ ցանկացող երիտասարդները անմիջապես ուզում են գնալ այստեղից: Նաև հոգեբանորեն մեծամասամբ մեր երիտասարդությունը, եթե կարողություն էլ ունի, ապա խուսափում է պետական համակարգ մտնելուց, քանի որ որպես կրոնական փոքրամասնություն արդեն ինքն իրեն դադար է տալիս՝ մտածելով որ չեն վերցնի, քանի որ հայ է: Այսինքն չենք համարձակվում մտնել մրցակցության մեջ»*[79]:

Նաև կարևոր է այն հանգամանքը, որ Իրանում հետհեղափոխական ժամանակահատվածում ազգայնականությունը բուռն թափ առավ և դրա հետևանքով այլազգիների կողմից տարբեր սոցիալական շերտերը զբաղեցնելու հավանականությունները խիստ սահմանափակվեցին: Վերջինս պետական քաղաքականության լուրջ փոփոխություն էր, ինչի արդյունքում այսօր հայերը Թեհրանում տեղավորվել են գլխավորապես արհեստագործական ոլորտում են և մանր արհեստներում: Իսկ հայկական ձեռնարկատիրական ընկերությունները, որոնք մինչ հեղափոխությունը ներկայություն ունեին այդ երկրում, մեծապես չեն գործում. հայազգի գործարարներն ու ձեռնարկատերերը, ովքեր բարձր կամ հարուստ խավի ներկայացուցիչներ էին, արտագաղթել են, ինչի պատճառներից լրջագույնը փոքրամասնությունների հանդեպ վարվող քաղաքականության արդյունքում գործարար միջավայրի ու հնարավորությունների սահմանափակումներն էին:

Բեյրութում հարցվածների մի ստվար հատված զբաղեցնում է բարձր որակավորում ունեցող մասնագետների շարքերը: Եթե խոսենք ընդհանուր համայնքի սոցիալ-տնտեսական վիճակի նկարագրության

---

79 Տանաջյան Լ., փորձագիտական հարցազրույց N 5, ՀԱԻ Սփյուռքի հետազոտությունների բաժնի ԴԱՆ, Թեհրան, 2014 թ.:

մասին ըստ փորձագիտական գնահատականների, ապա պետք է ընդգծել, որ Լիբանանն ընդհանուր առմամբ, և մասնավորապես Բեյրութը, ունի փոքր շուկա: Հիմնականում մասնավոր արտադրություն չկա, արդյունաբերությունը զարգացած չէ, և տնտեսական իրավիճակն ավելի «տուրիստիկ» է[80]:

Բեյրութի հայկական համայնքի քննարկման պարագայում պետք է հաշվի առնել մեկ կարևոր հանգամանք ևս. Ցեղասպանությունից հետո Լիբանան եկած հայերը իրենց հետ բերել են արհեստներ, մասնագիտություններ, որոնք մինչ այդ Լիբանանում գոյություն չեն ունեցել: Հայերը նշանավոր էին ոսկերչությամբ, նկարչությամբ, կաշեգործությամբ: Նմանատիպ արհեստներն ամբողջությամբ գտնվում էին հայերի ձեռքին[81]:

Վերոնշյալներն այն ելակետային հատկանիշներն են, որոնք ազդել են տվյալ քաղաքի հայերի հետագա սոցիալ-տնտեսական կյանքի վրա. մասնավորապես սոցիալական կառուցվածքի պատկերի փոփոխման դինամիկայի վրա:

Համայնքի տնտեսական վիճակը էապես փոխվել է վերջին տասը տարիների ընթացում: Փորձագետների տված տեղեկատվությամբ համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը կրել է լուրջ փոփոխություններ պայմանավորված երկրում եղած ճգնաժամերի, փոփոխվող տեխնոլոգիական զարգացման և այլազգիների անընդհատ ներգաղթով: Համայնքի տնտեսական անկման մեկ այլ գործոն է համարվում սիրիահայերի ներգաղթը, որոնց էական աջակցություն են ցուցաբերում տեղի հայկական բարեսիրական կազմակերպությունները: Հաջորդ գործոնն ըստ փորձագետների գործունեության փոփոխությունն ու նախկինում առաջնային համարվող մասնագիտական շերտի մենաշնորհային դիրքերի զիջումն է:

Փորձագետները նշում են. «*Նախկինում ընդհանրապես ժողո-*

80 Տանաջյան Լ., փորձագիտական հարցազրույց N 2, ՀԱԻ Սփյուռքի հետազոտությունների բաժնի ԴԱՆ, Բեյրութ, 2015 թ.:

81 Տանաջյան Լ., փորձագիտական հարցազրույց N 2, ՀԱԻ Սփյուռքի հետազոտությունների բաժնի ԴԱՆ, Բեյրութ, 2015 թ.:

*վուրդին 80%-ը ուղղակի ձեռային աշխատանքով կը զբաղէին, այսինքն կօշկակարութեամբ, պղնձագործութեամբ, դերձակութեամբ, ոսկերչութեամբ կը զբաղէին, ճաշ կը պատրաստէին: Այսինքն՝ երեք տիպի մարդիկ կային: Մարդիկ, որոնք առանձին կ՛աշխատէին ու կ՛արտադրէին (հնակարկատ, նպարավաճառ): Կայ տակաւին փոքր գործարաններ, ուրտեղ 5 աշխատաւոր կային, որոնք կօշկակարութեամբ եւ ոսկերչութեամբ զբաղած են: Այդ օրերուն կային բարեկեցիկ մարդիկ, ովքեր գործարաններ ունէին եւ զբաղէին երկաթագործութեամբ, գորգագործութեամբ, կտորի գործով, ուտեստեղէնի եւ պահածոյի վաճառքով: Իսկ ուսեալները թիւը քիչ եղած է:*

*Այսօր պատկերը ամբողջապէս տարբեր է: Այդ ձեռային աշխատանքները այսօր վերացած են եւ իրենք իրենց արժէքը կորսնցուցած են, որովհետեւ արդիականացումը այնպիսի տեղ հասցուցած է, որ մարդիկ ձեռքով աշխատելով տեղ չեն հասնիր: Նոր սերունդը ընդհանրապէս աւելի դէպի համալսարանական ուսում եւ վարչագիտական աշխատանքներու մղուած են: Այդ դէպքում ունինք բազմաթիւ բժիշկներ, ճարտարապետներ, ճարտարագէտներ, իրաւաբաններ, ֆինանսական գործի եւ IT-ի մասնագէտներ, ինչպէս նաեւ կան երիտասարդներ, որոնք կը զբաղին հոգեբանութեամբ, թղթակցութեամբ եւ հաղորդավարութեամբ»:*[82]

*«Սկիզբի շրջանին հայերը աւելի արհեստաւոր եղած են եւ գերազանց դիրքերու հասած են: Այսօր արհեստներու ոլորտը պակսած է ժողովուրդներէ ներս, օրինակ՝ կօշկակարութիւնը, դերձակութիւն...: Առաջ մարդիկ դերձակ մօտ կը կարուէին իրենց նախընտրած հագուստները, իսկ այսօր պատրաստ կարող են որեւէ մէկ խանութէ առնել: Նոր սերունդը հակուած է աւելի ուսման եւ աւելի կը մասնագիտանայ իր նախընտրած ծիրէն ներս՝ ըլլայ անիկա երկրաչափութիւն, փաստաբանութիւն, բժշկութիւն, տնտեսութիւն...»*[83]*:*

82 Տանաջյան Լ., փորձագիտական հարցազրույց N 10, ՀԱԻ Սփյուռքի հետազոտությունների բաժնի ԴԱՆ, Բեյրութ, 2015 թ.:

83 Տանաջյան Լ., փորձագիտական հարցազրույց N 17, ՀԱԻ Սփյուռքի հետազոտությունների բաժնի ԴԱՆ, Բեյրութ, 2015 թ.:

Համեմատության մեջ տեսնում ենք, որ երեք համայնքներում էլ կա մեկ գերակա՝ Լոս Անջելեսի և Բեյրութի հայերի շրջանում առավելապես մտավոր աշխատանք կատարողների, իսկ Թեհրանում առավելապես ֆիզիկական աշխատանք կատարողների խումբ: Սա թույլ է տալիս դատել այս համայնքների զարգացվածության և հնարավորությունների տարբերությունների մասին՝ կախված դրանց ձևավորմանը նպաստող «բաց» (Լոս Անջելես) և «փակ» (Թեհրան) միջավայրերից: Ենթադրվում է, որ օտար միջավայրում էթնիկ խմբի սոցիալական առաջադիմությունը կարող է պայմանավորված լինել մի շարք հանգամանքներով՝ կախված ավանդույթներից, արժեքների համակարգից, պետական համակարգից և այլն: Պետք է նշել նաև այն հանգամանքը, որ լոսանջելեսյան միջավայրում կյանքի և առաջընթացի նկատմամբ չափանիշներն ու պահանջները բավականին բարձր են, ինչն էլ դառնում է մոբիլ վարքագծի շարժառիթ, ի տարբերություն Թեհրանի, որտեղ միջավայրի կրոնական և այլ առանձնահատկությունները թելադրում են համեմատաբար համեստ կենսական պահանջներ: Իսկ Բեյրութում համայնքային կառավարման համակարգը և փոքրամասնություններին տրվող լայն հնարավորությունները թույլ են տալիս հայերին ունենալ սոցիալական առաջընթաց և տարբեր ոլորտներում բարձր պաշտոններ զբաղեցնելն ավելի հնարավոր է դառնում:

Հետաքրքիր է դիտարկել սեփականատերերի խումբն առանձին, որն ամեն համայնքում ունի իր յուրահատկությունը: Լոս Անջելեսում գործարարների, սեփականատերերի խումբը մեծամասամբ բարձր որակավորմամբ են հանդես գալիս, իսկ Թեհրանում, Բեյրութում գործարարների մասնագիտական պատրաստվածությունը այնքան էլ շաղկապված չէ կրթության կամ մասնագիտական բարձր պատրաստվածության հետ:

Հաջորդիվ դիտարկենք տվյալ քաղաք տեղափոխված հայերի սոցիալ-մասնագիտական կարգավիճակները: Նախ անդրադառնանք եկվորների սոցիալ-մասնագիտական կազմի առանձնահատկություններին: Ստացված տվյալներից պարզ է դառնում, որ Լոս Անջելես տե-

ղափոխվածների խմբում մեծ թիվ են կազմում մտավոր աշխատանք կատարողները (80,4%) (գծապատկեր 22): Ինչը խոսում է տեղափոխումից հետո ներդրված ռեսուրսների և ունեցած մոտիվացիայի մասին տվյալ միջավայրում հաստատվելու համար: Սակայն պետք է նշել, որ մտավոր աշխատանքների կատարման մի քանի մակարդակներում տեղափոխվածները հիմնականում զբաղեցնում են միջին որակավորմամբ կամ առանց որակավորման մտավոր աշխատանքով: Ներկայումս զբաղեցրած սոցիալական դիրքը և կատարված փոփոխությունները հասկանալու համար կարևոր է պարզել անմիջապես տեղափոխվելուց հետո հայերի զբաղեցրած կարգավիճակները: «Տեղափոխվելուց անմիջապես հետո ինչո՞վ եք զբաղվել» հարցից պարզ է դարձել, որ տեղափոխվողների մեծամասնությունը (69%) աշխատանքային զբաղվածություն չի ունեցել և իր զբաղվածությունը կապել է ուսումնական գործընթացի հետ: Ենթադրվում է, որ, կախված միջավայրից, անհրաժեշտ է եղել սոցիալական ադապտացիայի համար ձեռք բերել որոշակի գիտելիքներ և պատրաստվածություն: Այս խմբի մեջ են մտել թե՛ երիտասարդները, որոնք ուսում են ստացել այնտեղ, թե՛ մեծահասակները, որոնք կարիք են ունեցել իրացնելու լեզվական կամ այլ գիտելիքներ ու հմտություններ հետագա աշխատանքներ նախաձեռնելու համար:




*Գծապատկեր 22. Լոս Անջելես տեղափոխված հայերի սոցիալ-մասնագիտական կարգավիճակները (% հարցվածներից)*

Թեհրանի հայերը մոտ 50–60 տարի առաջ մեծ մասամբ ապրել են շրջաններում: Հայրենադարձության տարիներին մի մասը տեղափոխվել է Հայաստան, մյուս մասն էլ մնացել է Թեհրանում առանց անհրաժեշտ ռեսուրսի: Թեհրանահայերի տեղաշարժը կատարվել է միևնույն երկրի մեջ և որպես հետևանք, հայտնվելով որակապես նոր միջավայրում, բնականաբար մեծ մասը (48%) տեղ է գտել չաշխատող-

ների խըմբում և որևէ զբաղվածություն տևական ժամանակ չեն ունեցել: Ներկայումս դիտարկելով Թեհրան տեղափոխված հայերի սոցիալ-մասնագիտական կարգավիճակները, պետք է ասել, որ հարցվածների մեծամասնությունը տեղ է գտել առավելապես ֆիզիկական զբաղվածության ոլորտում (62,5%)՝ մասնավորապես ըստ որակական տվյալների հատուկ պատրաստվածությամբ ֆիզիկական աշխատանքի ոլորտում (գծապատկեր 23):




*Գծապատկեր 23. Թեհրան տեղափոխված հայերի սոցիալ-մասնագիտական կարգավիճակները (% հարցվածներից)*

Բեյրութում տեղափոխված հայերն ավելի քիչ թիվ են կազմում, հիմնականում տեղափոխությունները եղել են հենց քաղաքի ներսում տարբեր թաղամասերում, ինչպես օրինակ կենտրոնական թաղամասերից դեպի ծայրամասեր: Ըստ քանակական տվյալների տեղափոխված հայերի մեծամասնությունը տեղ է գտել առավելապես մտավոր աշխատանքի ոլորտում (83,3%)՝ մասնավորապես, ըստ որակական տվյալների և դիտարկման արդյունքների՝ սպասարկման ոլորտում (գծապատկեր 24):




*Գծապատկեր 24. Բեյրութ տեղափոխված հայերի սոցիալ-մասնագիտական կարգավիճակները (% հարցվածներից)*

Համեմատության մեջ պետք է ասել, որ երեք համայնքներն էլ այս առումով ունեն իրենց առանձնահատկությունը, որն ազդել է տեղի ունեցող սոցիալական գործընթացների վրա: Անընդհատ ներգաղթող հոսքերը սոցիալական կառուցվածքում առաջ են բերում նոր փոփոխություններ՝ կապված մասնագիտական նոր հատկանիշների և առ-

հասարակ մասնագիտությունների ներմուծման հետ: Այս առումով Թեհրանում հենց այդ փոփոխությունը հանգեցրեց արհեստների զարգացմանը քաղաքում և հայերի տեղավորմանը հենց այդ ոլորտում: Լոս Անջելեսի տարբեր երկրներից ակտիվ հոսքերն առաջ են բերում նրանց ունեցած նախկին սոցիալ-մասնագիտական կարգավիճակի և այդ համայնքում դրա ազդեցության ուսումնասիրության կարևորություն:

Երեք համայնքներն էլ սակայն տարբերվում են միմյանցից իրենց ելակետային հատկանիշներով: Ըստ այդմ՝ սփյուռքում հայերի սոցիալ-մասնագիտական կազմի ուսումնասիրման համար առաջնային խնդիր է դուրս բերել տվյալ համայնքի ներկայիս սոցիալ-ժողովրդագրական կազմը: Դիտարկենք երեք համայնքներում սոցիալական տեղաշարժերի փոխկապվածությունը սեռային պատկանելության ցուցանիշի հետ: Կանանց և տղամարդկանց զբաղվածության միջև եղած տարբերությունները յուրաքանչյուր խմբի ներսում երեք համայնքների հայերի շրջանում դրսևորվում են հետևյալ ձևով (գծապատկեր 25):




*Գծապատկեր 25. Լոս Անջելեսի, Թեհրանի, Բեյրութի հայերի ներկայիս աշխատանքային գործունեության բնույթը՝ ըստ սեռի (% հարցվածներից)*

Բեյրութի հայերի շրջանում առավելապես ֆիզիկական աշխատանք կատարողների մեծամասնությունը տղամարդիկ են, կանայք հիմնականում զբաղված են սպասարկման ոլորտում, ինչպես նաև ընտանեկան ձեռներեցության մեջ: Մտավոր աշխատանք կատարողների մեջ երկու սեռերն էլ ակտիվ են: Ընդհանուր համայնքային կտրվածքով՝ կանայք հիմնականում զբաղեցնում են սպասարկման կամ մտավոր աշխատանքային գործունեության ոլորտները: Տղամարդիկ առավելապես զբաղված են ձեռնարկատիրական, արհեստագործական և առևտրային գործունեությամբ:

Լոսանջելեսաբնակ հայերի շրջանում ավանդական արժեքային տարրերը այնքան էլ ազդեցություն չունեն: Եվ մտավոր, և ֆիզիկական աշխատանք կատարողների մեջ տղամարդկանց և կանանց համամասնությունը միմյանց մոտ է: Երկու սեռն էլ ամերիկյան միջավայրում ունեն լայն հնարավորություններ, քանի որ հավասարապես խրախուսվում է աշխատանքային գործունեության ցանկացած տեսակ:

Թեհրանի հայ համայնքն իր կառուցվածքով և ավանդույթներով առավել պահպանողական է: Վերջինիս ազդեցությամբ էլ կանանց և տղամարդկանց դերերը հստակորեն բաժանված են՝ ըստ աշխատանքային բաժանման ավանդական սկզբունքի: Առավել ծանր կամ ֆիզիկական աշխատանք կատարողների մեջ բարձր ցուցանիշ ունեն տղամարդիկ (76,7%): Մտավոր աշխատանքով զբաղվածների մեջ կանանց և տղամարդկանց համամասնությունը գրեթե հավասարվում է: Մտավոր աշխատանքով զբաղվածների մեջ կանանց և տղամարդկանց զբաղվածության միտումները միմյանցից տարբերվում են. տղամարդիկ հիմնականում բարձր որակավորմամբ մտավոր աշխատողներն են, իսկ կանայք միջին որակավորմամբ: Կանանց մեծամասնությունը աշխատանքային գործունեություն է ծավալում հայկական համայնքային կազմակերպություններում:

Համեմատելով երեք համայնքներում աշխատանքային զբաղվածության մեջ սեռային բաժանումները՝ պետք է նշել, որ օրինաչափորեն ֆիզիկական աշխատանքը երեք համայնքներում դիտարկվում է որպես տղամարդուն հատուկ աշխատանքային տեսակ:

Սոցիալական առաջխաղացման պահանջարկի բավարարման միջոցներից մեկն արտագաղթն է: Դրա հիմնական պատճառներից մեկը ելքի և մուտքի երկրների միջև տնտեսական զարգացման տարբերություններն են: Միգրացիոն վարքագիծը անհրաժեշտ է դիտարկել որպես սոցիալական առաջխաղացման գործընթացի կարևորագույն արտահայտություններից մեկը: Այս առումով տվյալ հասարակության, ինչպես նաև ներհամայնքային միջավայրում ինտեգրման տեսանկյունից հետաքրքիր է դիտարկել արտագաղթի մտադրության և զբաղեցրած սոցիալական կարգավիճակի կապը (գծապատկեր 26):




*Գծապապկեր 26. Լոս Անջելեսի, Թեհրանի, Բեյրութի հայերի արփագաղթի մփադրության և զբաղեցրած սոցիալական կարգավիճակի կապը (% հարցվածներից)*

Համեմատության մեջ տեսնում ենք, որ Լոս Անջելեսում հարցվածների շրջանում առավելապես ֆիզիկական աշխատանք կատարող հայերի գերակշիռ մասը (81,8%) մտադրություն չունի մեկնելու ԱՄՆ-ից: Այստեղ բացի բարձր վարձատրությունից, առկա է նաև այլ պատճառ, որի մասին խոսում են խորին հարցազրույցի տվյալները.

*«Այս աշխատանքը ժամանակավոր բնույթ ունի այստեղ, բարձրանալու հնարավորությունը տեսնում ենք և ապագան սոցիալական, ֆինանսական առումով որոշ չափով պարզ է…»*[84]:

Առավելապես մտավոր աշխատանք կատարողների շուրջ կեսը ևս մտադրություն չունի մեկնելու որևէ տեղ (54,1%): Թեհրանում հարցված հայերի շրջանում մտադրություն չունեն մեկնելու առավելապես մտավոր աշխատանք կատարողների շուրջ կեսը (51,7%): Սա բացատրվում է տվյալ միջավայրում սոցալական աճի դժվարություններով և ինչպես նշում էին հարցվածները, եթե որոշակի առաջընթաց են գրանցում, ապա դա որպես կապիտալ կարող է ծառայել հետագա հաջողությունների համար: Այդպիսի միտում է գրանցվում նաև Բեյրութում, որտեղ ևս մտավոր աշխատողների 46,5%-ը մտադրություն չունի երկիրը լքելու:

Բեյրութում և Թեհրանում առավելապես ֆիզիկական, հատկապես հատուկ պատրաստվածությամբ աշխատողներն իրենց կայուն աշխատանքը գնահատում են որպես երաշխիք հետագա պլաններն իրագործելու համար: Տնտեսական առումով այլ էթնիկական փոքրամասնությունների համեմատ հայերի այս խումբը երկու միջավայրում էլ առավել շահեկան դիրքում են՝ պայմանավորված ունեցած հմտություններով և տարիներ շարունակ ձեռք բերած համբավով:

Մեկ այլ կարևոր ցուցիչ է տվյալ քաղաքում հայերի զբաղեցրած սոցիալական կարգավիճակը՝ ըստ կրթական մակարդակի: Վերջինս այն կարևոր հատկանիշն է, որի հիման վրա դրսևորվում է տվյալ խմբի սոցիալական առաջընթացը: Այսպես՝ պարզելու համար կրթության և զբաղեցրած կարգավիճակի համապատասխանության աստիճանը՝ դիտարկենք սոցիալմասնագիտական խմբերի բաշխվածությունն՝ ըստ կրթական մակարդակի (գծապատկեր 27):

---

[84] Լ. Տանաջյան, խորին հարցազրույց N 15, ՀԱԻ Սփյուռքի հետազոտությունների բաժնի ԴԱՆ, Լոս Անջելես, 2013 թ.:




*Գծապատկեր 27. Լոս Անջելեսի, Թեհրանի, Բեյրութի հայերի աշխատանքային գործունեության բնույթը՝ ըստ կրթության (% հարցվածներից)*

Այսպիսով՝ Բեյրութում առավելապես ֆիզիկական աշխատանք կատարողների մեծամասնությունն ունի միջնակարգ կրթություն: Առավելապես մտավոր աշխատանք կատարողները փոքր ինչ տարբերությամբ բաշխվում են երեք կրթական մակարդակներում էլ: Վերջինս բացատրվում է այն հանգամանքով, որ այս խումբը ներառում է նաև համայնքում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվողներին: Ձեռնարկատերերի գրեթե մեկ երկրորդն ունի միջնակարգ կրթություն, մյուս կեսը գրեթե հավասարապես կիսվում են միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն ունեցողների շրջանում, ինչը կարող է ունենալ երկու հիմնական բացատրություն: Առաջին՝ առկա բիզնես գործունեությունը չի պահանջում հատուկ պատրաստվածություն և բարձրագույն կրթություն, և երկրորդ՝ այն կարող է խոսել ընտանեկան բիզնեսի առկայության և ժառանգաբար փոխանցելիության մասին:

Լոս Անջելեսի հայկական համայնքում երկու աշխատանքային խմբերում էլ առավելապես ֆիզիկական աշխատանք և առավելապես մտավոր աշխատանք կատարողների մեջ մեծ թիվ են կազմում բարձրագույն կրթություն ունեցողները: Այն, որ բարձրագույն կրթություն

ունեցողների մի ստվար մաս զբաղված է ֆիզիկական աշխատանքով կարող է ունենալ հետևյալ պատճառը. նրանք հիմնականում ներգաղթել են տարբեր երկրներից և չեն կարողացել իրացվել և զբաղեցնել իրենց կրթությանը համապատասխան աշխատանք՝ չբավարարելով ամերիկյան բարձրագույն կրթության չափանիշներին: Իսկ մտավոր աշխատանքով զբաղվածների 74,4%-ը օրինաչափորեն ունի բարձրագույն կրթություն: Պետք է նշել, որ բարձրագույն կրթություն ստացած անձինք ամենից շատ զբաղված են մտավոր աշխատանքով, քանի որ տվյալ միջավայրը պայմաններ է ստեղծել, որպեսզի դրսևորվեն իրենց գիտելիքներն ու իրենց կրթությանը համապատասխան սոցիալական կարգավիճակ զբաղեցնեն:

Թեհրանի հայ համայնքում առավելապես մտավոր աշխատանք կատարողների մեջ մեծ թիվ են կազմում բարձրագույն կրթությամբ, ապա միջնակարգ կրթությամբ անձինք: Եթե մի մասը, ստանալով բարձրագույն կրթություն, զբաղեցրել է իր համար նախընտրելի կարգավիճակ, ապա միջնակարգ կրթություն ունեցողները հիմնականում մտավոր աշխատանքային ոլորտում հայտնվել են, որովհետև գործունեություն են ծավալելու համայնքային կազմակերպություններում: Ֆիզիկական աշխատանքով զբաղվածները հիմնականում բաշխվում են միջնակարգ և միջին մասնագիտական կրթություն ունեցողների շրջանում: Միջնակարգ կրթությամբ անձինք տեղափոխվելուց անմիջապես հետո աշխատանք չեն գտել, քանի որ քաղաքում կրթության և աշխատանքի նկատմամբ «քաղաքային» հմտությունների պահանջարկը չի բավարարվել:

Դիտարկված ցուցիչները, այն ելակետային հատկանիշներն են, որոնք ազդել են տվյալ քաղաքի հայերի հետագա սոցիալ-տնտեսական կյանքի վրա. մասնավորապես սոցիալական կառուցվածքի պատկերի փոփոխման դինամիկայի վրա: Նշվածն ավելի արտահայտիչ է արտացոլում սոցիալական խմբերի տարիքային կազմը: Դիտարկենք հարցվածների ներկայիս աշխատանքի կապը տարիքային կազմի հետ (գծապատկեր 28):




*Գծապատկեր 28. Լոս Անջելեսի, Թեհրանի, Բեյրութի հայերի աշխատանքային գործունեության բնույթը՝ ըստ տարիքի (% հարցվածներից)*

Բեյրութի հայերի շրջանում տվյալները խոսում են սոցիալական խմբերի տարիքային կառուցվածքի նշանակալի տարբերությունների մասին: Այսպես՝ առավելապես ֆիզիկական աշխատանքներով զբաղվածների գրեթե կեսը բաղկացած են 50-ից բարձր տարիքի անձանցից, ի տարբերություն մտավոր աշխատանքով զբաղվածների մեջ իրենց մասնաբաժնի (6,3): Սա թերևս բացատրվում է նրանով, որ երրորդ սերնդի անձինք, պահպանելով իրենց կարգավիճակը ֆիզիկական աշխատանքի ոլորտում, իրենց ջանքերն ու միջոցներն ուղղել են հաջորդ սերնդի կարգավիճակների բարձրացմանն ու վերընթաց մոբիլությանը: Որպես առանձին խումբ, պետք է նշել, որ Բեյրութում համեմատաբար կայուն օրինաչափությամբ աճում է ձեռնարկատերերի խումբը և արդեն վերջին երկու տարիքային խմբերում առավել մեծ թիվ են կազմում՝ կապված տարիների ընթացքում ձեռք բերած փորձի, և առաջնային ներդրումների հետ: Նշվածը ցույց է տալիս հայերի կողմնորոշումը դեպի ավելի բարձր կրթական մակարդակ, որը հնարավոր է դարձել միայն երկրորդ և երրորդ սերնդից հետո:

Լոս Անջելեսի հայերի շրջանում աշխատանքային երկու ոլորտներում էլ նկատվում է գրեթե հավասար բաշխում: Եվ առավելապես

ֆիզիկական և մտավոր աշխատանքով զբաղվածների մեջ ավելի մեծ թիվ են կազմում 30–49 տարիքային խումբը, ինչը ենթադրում է տվյալ խմբի առավել ակտիվ լինելու մասին: Ապա հաջորդում է 50 և ավելի տարիքային խումբը, որին նոր միայն հաջորդում են երիտասարդները: Այստեղ կարևոր է այն հանգամանքը, որ աշխատանքային հիմնական տարիքը սկսվում է 30 և ավելի տարիքային խմբերից, երբ արդեն ստացել են որոշակի կրթություն կամ ձեռք են բերել որոշակի հմտություններ սոցիալական կարգավիճակի ձեռքբերման համար: Թեհրանի հայերի շրջանում և՛ ֆիզիկական, և՛ մտավոր աշխատանքի ոլորտներում նկատվում է կուտակում 30–49 տարիքային խմբերում, որը համարվում է հիմնական աշխատանքային տարիքը:

Այսպիսով՝ երեք համայնքներում ապրող հայերի սոցիալ-մասնագիտական կազմի առանձնահատկություններն այն հիմնական բնութագրիչներն են, որոնցով որոշվում է տվյալ երկրում հայերի դիրքը այդ հասարակության մեջ և հետագա զարգացման հնարավորությունները: Տարբեր սեռերի ներգրավվածության միտումները սոցիալական, մասնագիտական կյանքում թույլ է տալիս հաստատել միջավայրային տարբեր պայմանների ազդեցությունը համայնքային կյանքի վրա: Տարիքային կտրվածքը հնարավորություն է տալիս մի քանի սերնդի մեջ տեսնել սոցիալ-մասնագիտական աճի այն տարբերությունները, որոնք ցույց են տալիս անցյալում ու ներկայում մասնագիտական կողմնորոշումներում առկա փոփոխություններն ու դինամիկան: Կրթության և մասնագիտական զբաղվածության համապատասխանությունը թույլ է տվել վերհանել տվյալ միջավայրում կրթության առաջնահերթության և դրա նկատմամբ հայերի դիրքորոշման առանձնահատկությունը: Այս ամենի համատեքստում առաջ է գալիս սոցիալական փոփոխության արձանագրման միջոցով երեք համայնքներում հայերի սոցիալ-մասնագիտական դինամիկայի ընդհանուր և առանձնահատուկ կողմերը դուրս բերելու անհրաժեշտություն:

Ներկայումս երեք քաղաքներում հայերի տնտեսական դիրքը և սոցիալական կազմը ձևավորվել է այդ քաղաքներում հայերի ներկայության տևական ժամանակի ընթացքում նրանց կողմից գրանցված

սոցիալական առանջընթացի, մասնագիտական աճի, տնտեսական ձեռքբերումների արդյունքում: Սոցիալական տեղաշարժերի բնույթը հասկանալու առաջին պայմանը հանդիսանում է այն, թե համայնքի անդամները իրենց կյանքի տարբեր փուլերում ինչպիսի կարգավիճակային փոփոխություններ են ունեցել իրենց գործունեության ոլորտում: Այստեղ ակնհայտ է, որ բարձր տարիքային խմբի մոտ այդ ժամանակահատվածը բավական մեծ է, որի արդյունքում այս խմբի մոտ նկատվում է աշխատանքային գործունեության, սոցիալական աճի համեմատաբար կայուն վիճակ և արդյունք: Ընդհանուր առմամբ, կարող ենք ասել, որ ավագ սերնդի սոցիալական տեղաշարժերի դինամիկան արտացոլում է համայնքի անցյալ իրավիճակը: Ինչ վերաբերում է երիտասարդ սերնդին, ապա կարելի է ֆիքսել նրանց սոցիալական կարգավիճակը որպես աշխատանքային գործունեության սկիզբ, մեկնարկային գիծ: Այն արտահայտում է համայնքի ներկա իրավիճակը, որը հետագայում կարող է ենթարկվել փոփոխության: Վերջինս կարող է ուղեկցվել նոր սոցիալական գործունեության դաշտի որոնմամբ, ինչը նաև կարող է հանգեցնել տարածական տեղաշարժերի: Այդպիսով՝ սփյուռքում հայերի տարբեր սերունդների սոցիալական, տնտեսական կարգավիճակների, մասնագիտական որակավորման մակարդակների քննումը կարևոր նշանակություն ունի հասկանալու նրանց՝ որպես էթնոսոցիալական խմբի, ոչ վաղ անցյալի, ներկայի և հեռանկարի սոցիալական երևույթները: Այդ ամենը կարելի է տեսնել համայնքների ներկայացուցիչների սոցիալական շարժընթացի միջոցով, որն արտահայտում է սոցիալական փոփոխությունների միտումներն ու ուղղությունները:

Ինչպես տեսական դրույթներով հաստատվեց սոցիալական շարժունությունը սոցիալական փոփոխությունների չափման միջոց է: Ներսերնդային և միջսերնդային մոբիլության դիտարկումը ռետրոսպեկտիվ վերլուծության միջոցով հնարավորություն է ընձեռել դուրս բերել համայնքներում կատարված սոցիալ-մասնագիտական փոփոխությունները և ներկայի արդյունքը: Մտավոր և ֆիզիկական ուղղվածության աշխատանքի բնույթի փոփոխությունը ցույց է տալիս տվյալ քաղաքում հայերի ունեցած սոցիալ-մասնագիտական ներուժը: Այս պա-

րագայում որպես ցուցիչ կարող են հանդես գալ անհատի առաջին աշխատանքային գործունեության տեսակը, անհատի առաջին և ներկայիս աշխատանքային բնույթի համեմատությունը ցույց է տալիս սոցիալական մոբիլության ընթացքը մեկ սերնդի կտրվածքով: Ներսերնդային մոբիլության միտումները դուրս բերելու նպատակով առավել նպատակահարմար է դիտարկել նրանց աշխատանքային գործունեության տեսակներն առավել մանրամասն: Այդպես կարող է արտահայտվել ոչ միայն առանձնացված երկու մեծ՝ մտավոր և ֆիզիկական աշխատանքային գործունեության փոփոխությունները, այլ նաև մեկ խմբի ներսում, տարբեր մակարդակներում տեղի ունեցող սոցիալական տեղաշարժերը:

Այս համատեքստում դիտարկենք Բեյրութի հայերի սոցիալ-մասնագիտական խմբերի փոփոխությունները համեմատելով աշխատանքային գործունեության առաջին և երկրորդ փուլերը (գծապատկեր 29):




*Գծապատկեր 29. Բեյրութահայերի զբաղեցրած առաջին և ներկայիս աշխատանքային գործունեությունների շարժընթացը (% հարցվածներից)*

*B–Առանց պատրաստվածության ֆիզիկական աշխատանք կատարողներ,*
*B1–Հատուկ պատրաստվածությամբ ֆիզիկական աշխատանք կատարողներ,*
*A2–Առանց որակավորմամբ մտավոր աշխատանք կատարողներ,*
*A1–Միջին որակավորմամբ մտավոր աշխատանք կատարողներ,*
*A–Բարձր որակավորմամբ մտավոր աշխատողներ*

Աշխատանքային գործունեության առաջին փուլի ժամանակ հայերի գերակշիռ մասը Բեյրութում զբաղվել է առավելապես մտավոր աշխատանքով (62,8%), ինչպես և ներկայիս փուլում (79,3%):

Աշխատանքային գործունեության երկու փուլերում էլ գերակա խումբը մտավոր աշխատանք կատարողներն են: Երկու փուլերի միջև 10% տարբերությունը վկայում է վերընթաց մոբիլության մասին: Եթե դիտարկենք յուրաքանչյուր մակարդակի ներսում աշխատանքային գործունեությունը, ապա երկրորդ փուլում արդեն բարձր որակավորմամբ մտավոր աշխատողների թիվն աճել է, իսկ ֆիզիկական աշխատողների թիվը նվազել է: Կարելի է ասել, որ համայնքում առկա են այն նախադրյալները, որոնք ապահովում են ներսերնդային վերընթաց մոբիլության գծային բնույթը: Բեյրութի հայ համայնքը մշտապես առանձնացել է իր կրթական և մշակութային գործունեությամբ, ինչն էլ բացատրում է Բեյրութի հայերի առավելապես մտավոր աշխատանքին միտված լինելը: Բեյրութում հայկական ներկայության հարուստ կենսափորձը թույլ է տալիս հայերին գրավել ավելի բարձր սոցիալական դիրքեր՝ հիմնվելով ձեռք բերած համբավի և համայնքի ունեցած ռեսուրսների վրա, այդ թվում՝ տարբեր համայնքային կառույցների, կրթական-մշակութային, գիտական կենտրոնների առկայության վրա:

Ներսերնդային սոցիալական մոբիլության արձանագրումը հատկապես առանձնահատուկ երանգավորում է ստանում սեռատարիքային առանձնահատկությունների դուրսբերմամբ: Ուսումնասիրված զանգվածի մեջ կանայք առաջին և ներկայիս աշխատանքի ժամանակ կայուն պահպանել են իրենց սոցիալական կարգավիճակները: Առավելապես մտավոր աշխատանքով զբաղված կանայք պահ-պանել են իրենց դիրքը փոքր-ինչ նվազելով 90,6%-ից 82,7%-ի: Տղամարդկանց շրջանում առաջին և ներկայիս աշխատանքի միջև տատանումն ավելի ակներև է: Ուսումնասիրված արական սեռի ներկայացուցիչներն իրենց աշխատանքի սկզբնական փուլում զբաղվել են առավելապես ֆիզիկական աշխատանքով (63%), իսկ ներկայումս գրանցելով վերընթաց մոբիլություն՝ զբաղեցնում են առավելապես մտավոր աշխատանքի ոլորտը (գծապատկեր 30):




*Գծապատկեր 30. Բեյրութահայերի զբաղեցրած առաջին և ներկայիս աշխատանքային գործունեությունների շարժընթացը՝ ըստ սեռի (% կին, տղամարդ խմբերից)*

Որոշակի սոցիալական կարգավիճակի ձեռքբերման ընթացքում հատկապես կարևոր է հասկանալ տվյալ անհատի ժառանգած սոցիալական կապիտալի դերը նրա կյանքում. տվյալ անհատը շարունակում է իր գործունեությունը ծավալել ժառանգված սոցիալական կապիտալի հենքի վրա, թե սկսում է բոլորովին նոր սկզբնակետից, որն ինքն է իր համար ստեղծում: Պարզ է, որ եթե ներսերնդային մոբիլությունը հնարավորություն է տալիս սահմանել տեղաշարժերի բնույթն ավելի կարճ ժամանակահատվածի համար, ապա նախորդ սերնդի հետ համեմատությունը՝ թույլ է տալիս սահմանել հիմքը, որի վրա ձևավորվել են ներկայիս սոցիալ-մասնագիտական խմբերը և հասկանալ երկու սերունդների միջև եղած առանձնահատկությունները՝ կապված տնտեսական գործունեության հետ: Միջսերնդային մոբիլության արդյունքում տեղի ունեցած սոցիալական փոփոխությունների դուրսբերման նպատակով, դիտարկենք երկու սերունդների զբաղեցրած կարգավիճակները (գծապատկեր 31):




*Գծապատկեր 31. Բեյրութահայերի միջսերնդային մոբիլության պատկերը (% հարցվածներից)*

Բեյրութահայերի նախորդ և ներկայիս սերնդի զբաղեցրած սոցիալ-մասնագիտական ոլորտների համեմատությունը ցույց է հետևյալ փոփոխությունները: Նախորդ սերնդի մոտ նկատում ենք գրեթե կեսից ավելին զբաղված է առավելապես ֆիզիկական բնույթի աշխատանքով, ի տարբերություն ներկայիս սերնդի: Նախորդ սերնդի համեմատությամբ՝ մտավոր աշխատանքով զբաղվածների երեք մակարդակներում էլ գրանցվել է աճ: Ընդ որում մտավոր աշխատանքի առաջին երկու մակարդակներում՝ բարձր որակավորմամբ և միջին որակավորմամբ աշխատողների մոտ համապատասխանաբար գրանցվել է շուրջ 20% և 10% աճ: Նվազել են առավելապես ֆիզիկական աշխատանքային ոլորտներում զբաղվածների թիվը 2 մակարդակներում էլ՝ համալրելով առավելապես մտավոր աշխատողների շարքերը: Ֆիզիկական աշխատանքով զբաղվածների խմբի ներսում երկու սերունդների մոտ էլ առավել մեծ թիվ են կազմում հատուկ պատրաստվածությամբ ֆիզիկական աշխատողները: Առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում ձեռնարկատերերը: Առավելապես մտավոր աշխատողների մեջ այս խումբը բավական կայուն խումբ է. երկու սերունդների կտրվածքով այն պահպանել է կայունությունը՝ նախորդ սերնդի մոտ կազմելով 13%, ապա ներկայիս սերնդի մոտ աճ է գրանցել մինչև 15%: Համայնքում ընդհանուր գործունեության տեսակներից արհեստներն ու ձեռնարկատիրությունը հաճախ կրում են ընտանեկան բնույթ և երիտասարդ սերունդը կրկնում է նախորդ սերնդի տնտեսական վարքագիծը:

Անշուշտ միջսերնդային մոբիլությունը, ընդհանուր առմամբ, առաջադիմական բնույթ է կրում Բեյրութի հայերի շրջանում: Ներկայիս սերունդը զբաղեցնում է ավելի բարձր կարգավիճակ և սոցիալական դիրք, քան նախորդը:

Այժմ դիտարկենք Թեհրանի հայ համայնքի սոցիալական տեղաշարժերի բնույթը (գծապատկեր 32): Թեհրանում հայերի առաջին և ներկայիս աշխատանքային գործունեության փուլերի միջև փոփոխությունները գրեթե աննշան են: Սա կարելի է բացատրել այն հանգամանքով, որ զբաղված լինելով ընտանեկան արհեստներով և ներգրավված լինելով համայնքային կառույցներում, համախմբվածության և սոցիալական ցանցերի միջոցով կանխորոշվում է զբաղվածության բնույթը: Ըստ խորին հարցազրույցի տվյալների՝ անհատի աշխատանքը հիմնականում արդեն իսկ ծանոթ ոլորտից է, որը ընդունված է և հասանելի համայնքային գործունեության շրջանակներում: Այս պարագայում ներսերնդային սոցիալական տեղաշարժը կայուն է և յուրաքանչյուր ոլորտում նկատվում է կայուն դանդաղ աճ: Լինելով ավանդական միջավայրում և չունենալով առաջընթացի լայն հնարավորություններ՝ հայերը նախապես աշխատանքային գործունեությունը ծավալում են առավելապես առանց պատրաստվածության կամ միջին որակավորմամբ մտավոր աշխատողների ոլորտում:




*Գծապապկեր 32. Թեհրանահայերի առաջին և ներկայիս աշխապանքային գործունեությունների շարժընթացը (% հարցվածներից)*

Թեհրանում ձեռնարկատերերի խումբը հիմնականում բաժանված է մեծ ու փոքր ձեռնարկություններ ունեցողների: Փոքր բիզնեսով զբաղվող անձինք ունեն սերնդեսերունդ փոխանցվող սեփական գործը սպասարկման և արհեստագործական, ավտոմեխանիկայի ոլորտներում: Այստեղ երկու սեռերի ներսերնդային մոբիլությունն արձանագրելիս տեսնում ենք, որ ի համեմատ աշխատանքային գործունեության առաջին փուլի մտավոր աշխատանք կատարողների թիվը նվազել է, հասնելով՝ 82,8%-ից մինչև 42,3%: Խմբի ներսում մտավոր աշխատանքով զբաղվողների մեծ թիվ են կազմում հատկապես միջին մասնագիտացմամբ աշխատողները կամ սպասարկման ոլորտի աշխատողները: Տղամարդկանց մոտ աշխատանքային երկու փուլերի սոցիալական կարգավիճակների դիտարկումը ցույց է տալիս ֆիզիկական աշխատանք կատարողների աճ՝ 42,9%-ից հասնելով 73,1% (գծապատկեր 33):




*Գծապապկեր 33. Թեհրանահայերի զբաղեցրած առաջին և ներկայիս աշխապանքային գործունեությունների շարժընթացը՝ ըսպ սեռի (% կին, պղամարդ խմբերից)*

Այժմ զուգահեռներ տանելով տեսնենք, թե ինչպիսի ընթացք է ունեցել միջսերնդային մոբիլությունը (գծապատկեր 34): Թեհրանի հայ համայնքում նախորդ և ներկայիս սերունդների զբաղեցրած դիրքերի միջև կապի դինամիկ պատկերը ցույց է տալիս, որ ներկայիս սերունդը գրեթե նույնությամբ կրկնում է նախորդ սերնդին՝ հիմնական կուտակումներ ունենալով առավելապես ֆիզիկական աշխատանք կատարողների խմբում: Սակայն գծային դինամիկան ցույց է տալիս,

որ երկու սերունդների մոտ էլ բարձր որակավորմամբ մտավոր և հատուկ պատրաստվածությամբ ֆիզիկական աշխատողներն ունեն ամենաբարձր ցուցանիշները: Թեհրանահայերի մեջ գործում է սերնդից սերունդ գործունեության տեսակի ժառանգման ավանդույթը:Այս ավանդույթն ավելի շատ բնորոշում է հատուկ պատրաստվածությամբ ֆիզիկական աշխատողներին, որտեղ ներառվում են տարբեր տեսակի արհեստների գիտակները և այլ անձինք, որոնց շնորհիվ մինչ այժմ պահպանվել է տվյալ միջավայրում հայերի՝ որպես լավագույն արհեստավորների հավաքական կերպարի ընկալումը:




*Գծապատկեր 34. Թեհրանահայերի միջսերնդային մոբիլության պատկերը (% հարցվածներից)*

Դիտարկված համայնքներից, ինչպես արդեն նշվել է, առավել բազմատարր համայնքն ըստ ծագման և քանակական աճի համարվում է Լոս Անջելեսի հայ համայնքը, ինչը ենթադրում է, որ այստեղ հայերը կարող են իրենց աշխատանքային ակտիվությունը ցուցաբերել ինչպես ընդհանուր էթնիկ, այնպես էլ նախկին տարածքային առանձնահատկություններին համապատասխան:

Լոս Անջելեսի հայ համայնքն ըստ ելքի երկրների բաղկացած է տարբեր խմբերից, որոնք պայմանականորեն ամբողջացվել են չորս հիմնական մեծ հոսքերում՝ Հայաստանից, Արևելքի երկրներից, ԱՊՀ-ից, Եվրոպայից և ԱՄՆ տարբեր նահանգներից եկած հայեր: Այս չորս խմբերը տարբերվում են որակապես՝ թե՛ հարաբերություններով և թե՛ սոցիալական մոբիլության ընթացքով: Հետազոտության ընթացքում իրականացված փորձագիտական հարցազրույցից պարզ է դառնում մեկ կարևոր բնորոշում, ըստ որի համայնքը բաժանված է երկու ավելի

մեծ, հիմնական խմբերի՝ ակտիվ համայնքային կյանքով ապրող դասական սփյուռք (մինչև 2000-ական թթ. Արևելքից, ԱՄՆ տարբեր նահանգներից եկած) և նոր սփյուռք (հիմնականում հայաստանցի հայեր), որոնց միջև կապը գրեթե խզված է: Նշված համայնքային խմբերի զբաղվածությունը տարբեր ժամանակներում ցույց է տալիս տվյալ խմբի ակտիվությունը, ինտեգրման աստիճանը և շարժունակության չափանիշները: Ըստ հարցումների տվյալների՝ ստացվել է հետևյալ պատկերը (գծապատկեր 35): Առաջին դիտարկված խումբը Հայաստանից գնացած հայերն են, որոնց մեծ մասն առաջին աշխատանքային գործունեությամբ առավելապես մտավոր աշխատողներ են եղել (68,7%): Անմիջապես տեղափոխվելուց հետո զբաղեցրած աշխատանքային գործունեության մասին տվյալները ցույց են տալիս, որ նախկինում մտավոր աշխատանքով զբաղված մարդիկ ունեցել են կարգավիճակի կտրուկ իջեցում: Նրանց մի մասը կատարել է ֆիզիկական աշխատանք կամ չի ունեցել որևէ աշխատանքային զբաղվածություն առնվազն 2 տարի: Մի որոշ մասը սկսել է զբաղվել իր կրթությամբ, ինչը ներառել է և լեզվի, և այլ մասնագիտության ձեռքբերումը: Հատկանշական է, որ ներկայումս հայաստանցի հայերի մեծամասնությունը կրկին համալրել է մտավոր աշխատանք կատարողների, իսկ չաշխատողների մի որոշ մաս ֆիզիկական աշխատանք կատարողների խումբը:




*Գծապատկեր 35. Լոս Անջելեսի հայերի զբաղեցրած աշխատանքային գործունեության բնույթը այնտեղ տեղափոխվելուց անմիջապես հետո՝ ըստ ելքի վայրի (% հարցվածներից)*

ԱՄՆ տարբեր շրջաններից եկած անձանց խմբում պատկերը հետևյալն է՝ 57%-ը առաջին գործն սկսել է առավելապես մտավոր աշխատանք կատարողների ոլորտում, 43%-ը առավելապես ֆիզիկական

աշխատողներ են եղել: Տեղափոխվելուց հետո գրեթե նույնությամբ պահպանել է աշխատանքային կարգավիճակը: Ներկայիս աշխատաքի ժամանակ նշված թիրախային խմբում տեսնում ենք, որ 40%-ն առավելապես ֆիզիկական աշխատողներ են և 60%-ը՝ առավելապես մտավոր աշխատանքով զբաղվողներ: Ինչպես ցույց են տալիս թվային տվյալները, այնտեղ ծնված հայերը գործունեության երեք փուլերում էլ (առաջին աշխատանքային գործունեություն, տեղափոխվելուց անմիջապես հետո և ներկայիս աշխատանքային գործունեություն) կենտրոնացած են առավելապես մտավոր աշխատանք կատարողների խմբում: Սա բացատրվում է այն փաստով, որ այնտեղ ծնված հայն արդեն իսկ ունի որոշակի սոցիալական սկզբնակետ, որի վրա սկսում է կառուցել իր կյանքի հետագա ընթացքը և իր սոցիալական կապիտալը ստեղծում է ծնողներից ստացած կարգավիճակային հենքի վրա: Արևելքից գնացած հայերի խմբում առկա է հետևյալ իրավիճակը՝ աշխատանքային գործունեության սկզբում նշված խմբի հիմնական մասը (62%) գտնվում է առավելապես մտավոր աշխատանքով զբաղվածների, 38%-ը՝ առավելապես ֆիզիկական աշխատողների մեջ: Պետք է նշել, որ արևելյան երկրների հայ համայնքները համարվում են պահպանողական, որտեղ կանանց աշխատանքային գործունեությունը հիմնականում չի խրախուսվում: ԱՊՀ-ից և Եվրոպայից եկած հայերի խումբն ունի հետևյալ պատկերը. աշխատանքային գործունեության անցնելիս մեծամասնությունը (66.7%) զբաղվել է առավելապես մտավոր աշխատանքով: Տեղափոխվելուց անմիջապես հետո մեծամասնությունը չի ունեցել աշխատանքային զբաղվածություն: Զբաղվածների մեջ մեծ մասը զբաղվել է սպասարկման ոլորտի աշխատանքներով և ֆիզիկական աշխատանքով: Հարցման ժամանակահատվածում նշված խումբը հիմնականում զբաղվել է միջին պատրաստվածությամբ ու առանց պատրաստվածության մտավոր աշխատանքով (58.8%):

Այսպիսով, եթե փորձենք ամբողջացնել համայնքի ներկայիս պատկերը՝ ըստ նրա անդամների ելքի երկրի և զբաղեցրած կարգավիճակի, կստացվի հետևյալ խճանկարային պատկերը: Հայաստանից և Արևելքի երկրներից Լոս Անջելես գնացած հայերի խմբերը հիմնականում ակտիվ են առավելապես մտավոր աշխատանք կատարողների

շրջանում, ԱՊՀ-ից և եվրոպայից եկած հայերի խումբը տեղ է գտել մտավոր աշխատանք կատարողների շարքում, իսկ ԱՄՆ տարբեր մասերից Լոս Անջելես տեղափոխվածները գրեթե հավասարապես զբաղվում են և՛ մտավոր, և՛ ֆիզիկական աշխատանքով: Հատկանշական է այն փաստը, որ այլ վայրերից Լոս Անջելես եկած հայերի երեք խմբերն էլ տեղափոխվելուց անմիջապես հետո սովորողների խումբ են ձևավորել: Ենթադրաբար կրթությունը տվյալ միջավայրում դառնում է սոցիալական մոբիլության կարևորագույն գործոն:

Լոս Անջելեսում ձեռնարկատերերը բավական ազդեցիկ խումբ են: Նրանց հիմնական մասը իրենց սոցիալական կապերի միջոցով իրենց գործունեության ոլորտ են ներգրավում նաև համայնքային այլ ներկայացուցիչների: Այստեղ ձեռնարկատերերն ունեն հատուկ կրթության և մասնագիտացման կարիք ցանկացած տեսակի ձեռնարկատիրության ոլորտում՝ մեծ, միջին, փոքր:

Լոս Անջելեսում հայերի ներսերնդային դինամիկան դիտարկելիս տեսնում ենք, որ մտավոր աշխատողների ոլորտում կա սոցիալական աճ, իսկ առավելապես ֆիզիկական աշխատողների թիվը նվազել է: Խմբերի ներսում՝ բարձր և միջին որակավորմամբ մտավոր աշխատողների թիվը բարձրացել է ի հաշիվ մյուս երեք խմբերի (գծապատկեր 36):




*Գծապատկեր 36. Լոս Անջելեսի հայերի առաջին և ներկայիս աշխատանքային գործունեությունների շարժընթացը (% հարցվածներից)*

Սեռային կտրվածքով դիտարկելիս տեսնում ենք, որ հարցմանը մասնակցած կանանց ֆիզիկական աշխատանքին միտվածությունն ավելի բարձրացել է աշխատանքային գործունեության երկրորդ փուլում (25%-ից մինչև 55,9%), ինչը բացատրվում է տվյալ միջավայրում աշխատանքի ձևերի բաժանման ոչ ավանդական մոտեցումով: Տղա-

մարդկանց մոտ ևս նմանատիպ արդյունք է գրանցվել (20%-ից 48,8%): Այստեղ տեսնում ենք, որ գործունեության երկու փուլերում երկու սեռերի մոտ էլ նույնանման սոցիալական վարքն է գերիշխող (գծապատկեր 37):




*Գծապատկեր 37. Լոս Անջելեսի հայերի զբաղեցրած առաջին և ներկայիս աշխատանքային գործունեությունների շարժընթացը՝ ըստ սեռի (% կին, տղամարդ խմբերից)*

Ներսերնդային մոբիլությունից զատ դիտարկենք միջսերնդային մոբիլության ընթացքը Լոս Անջելեսի հայերի շրջանում: Տվյալներից պարզ է դառնում, որ սոցիալական վարքագծի ավանդույթի միջսերնդային տրանսմիսիան, ի տարբերություն Թեհրանի, այնքան էլ չի գործում, մասնավորապես նախկինում առավելապես ֆիզիկական աշխատողների մեծ խումբը կտրուկ նվազել է: Մտավոր աշխատանքով զբաղվողները գրեթե նույնությամբ պահպանել են նախորդ սերնդի սոցիալական կազմը (գծապատկեր 38):




*Գծապատկեր 38. Լոս Անջելեսի հայերի միջսերնդային մոբիլության պատկերը (% հարցվածներից)*

Ամբողջացնելով վերը նշվածը՝ կարելի է ասել, որ Թեհրանի համայնքում առավել կայունը ֆիզիկական և մտավոր աշխատանքով զբաղվող խմբերն են: Իսկ ավելի բաց և ցրիվ միջավայրում, ինչպիսին է Լոս Անջելեսը, առավել կայունն առավելապես մտավոր աշխատանքով զբաղվողների խմբերն են: Լոս Անջելեսում պայմանները նպաստում են անհատի սոցիալական առաջընթացին՝ նրան տալով լայն հնարավորություններ և միջոցներ՝ ցանկալի կարգավիճակ զբաղեցնելու համար: Սա էլ առաջացնում է անհատների սոցիալական մոբիլության տատանումների հավանականություն: Ավանդական «փակ» միջավայրում՝ Թեհրանում, որպես ազգային կրոնական փոքրամասնություն, հայերի սոցիալական կարգավիճակն ավելի կայուն է: Սերնդեսերունդ փոխանցվող ավանդույթի առկայությունը թույլ է տալիս ենթադրել, որ մի քանի սերնդի սոցիալական վարքագիծը պահպանում է իր կայունությունը և կարող է խախտվել միայն որևէ լուրջ հասարակարգային կամ այլ տեսակի կտրուկ փոփոխության ներգործությամբ: Բեյրութում հայերի կարգավիճակը և միջավայրը ևս հնարավորություն են տալիս սերնդեսերունդ սոցիալական առաջընթաց ապահովել: Նշվածից զատ, որպես ազգային նկարագրի առանձնահատկություն կարելի է համարել այն, որ երեք համայնքներում էլ մտավոր աշխատանքով զբաղվողների խումբը փոքր տոկոսային տարբերությամբ գերակա խմբերից մեկն է: Ինչն էլ խոսում է անկախ միջավայրից կրթության՝ որպես ազգային արժեքի ընկալման մասին: Նույն էթնոսի խմբերը, որոնք գտնվում են տարբեր միջավայրերում, կարող են ունենալ սոցիալական մոբիլության յուրօրինակ ընթացք, որը բնորոշվում է և՛ տվյալ խմբին հատուկ առաջնային սոցիալական հատկանիշներով, և՛ էթնոսոցիալական միջավայրով:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայկական սփյուռքում ներկայումս առաջ եկող մարտահրավերները թելադրում են անընդհատ արձանագրել տեղի ունեցող փոփոխությունների ընթացքը, ուղղվածությունն ու զարգացումը՝ հասկանալու սփյուռքի ներուժն ու հնարավոր փոխակերպումները: Տարբեր միջավայրերում տեղի ունեցող գործընթացները որակապես նոր սփյուռք են ձևավորում, որի շուրջ փաստական տվյալները անհրաժեշտություն են դառնում նոր սփյուռքի հետ առնչվելու և ռազմավարությունների մշակման համատեքստում: Այս աշխատությունը քննարկման դաշտ է բացում հատկապես էմպիրիկ նյութի հիման վրա դասակարգելու սփյուռքում հայերի զբաղեցրած շերտերի հատկանիշները նոր մոտեցմամբ, հաշվի առնելով ոչ միայն նախկինում տեսականորեն այլ հետազոտողների կողմից առաջ քաշված մոտեցումները, այլ հենց դաշտային նյութերի և միջավայրերի առանձնահատկությունները: Վերլուծությունները թույլ են տվել հասկանալ, որ այլազգի միջավայրում էթնիկ խմբի ներսում տեղի ունեցող փոփոխությունները պայմանավորվում են ոչ միայն ազգային առանձնահատկություններով, այլ նաև տվյալ երկրի սոցիալ-տնտեսական ոլորտի փոփոխություններով, հասարակության պահանջարկով և այլն: Վերջինիս հետևանքով էթնիկ խմբում տեղի ունեցող սոցիալական փոփոխությունները կարող են փոխել իրենց ուղղվածությունն ու ինտենսիվությունը:

Խմբի սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչները, ազգային արժեքներն ու հատկանիշները (լեզու, կրոն, մշակույթ և այլն) անմիջական ազդեցություն են ունենում սոցիալ-մասնագիտական շերտերի ձևավորման վրա: Այդ գործոնների ազդեցությամբ ձևավորվում է էթնիկ խմբի նկարագիրը՝ իր սոցիալական և էթնիկական բովանդակությամբ,

որը տվյալ հասարակական համակարգի որևէ շերտում առավելապես գտնում է իր տեղը:

Միջավայրի տարբերությունների ազդեցությունն ակնհայտ է դառնում նույն էթնոսի մի քանի խմբերի համեմատության մեջ տարբեր երկրներում: Էթնիկ խմբում սոցիալական մոբիլությունն արտահայտում է դրա սոցիալական հատկանիշների փոփոխությունը և արդյունքը, ինչպես նաև շարժընթացը:

Ելնելով հետազոտության տվյալներից, ընդհանուր առմամբ կարելի է պնդել, որ սփյուռքում նույն էթնոսի տարբեր խմբեր՝ կախված նախկին ելքի երկրից, մուտքի երկրից զբաղեցրել են տարբեր կարգավիճակներ և մասնագիտական շերտեր, ինչի արդյունքում նաև ցուցաբերել են սոցիալական մոբիլության տարբեր ընթացք:

Իրականացված ուսումնասիրության արդյունքները հաստատեցին նախապես դրված հետազոտական վարկածները՝ վերլուծական նյութ ապահովելով հետագա նմանատիպ խնդրի ուսումնասիրության պարագայում: Աշխատանքը գալիս է հարստացնելու առաջադրված խնդիրներին առնչվող հետազոտական բազան՝ նպաստ բերելով մասնագիտական դաշտում առկա բացթողումների լրացմանը:

Ամփոփելով հայկական սփյուռքի երեք համայնքներում իրականացված հետազոտությունների արդյունքում ստացված տվյալները և վերլուծությունները, առաջ են քաշվել հետևյալ եզրակացությունները.

Հայկական սփյուռքի տարբեր համայնքների որակական հատկանիշները, որոնք բովանդակում են դրա կրոնական, էթնիկական, հոգևոր, մասնագիտական և այլ ուղղվածության փոփոխությունները, չափման միջոց են դառնում տվյալ խմբի գործունեության հնարավորությունների և միջավայրում ինտեգրման համար: Որպես ազգային նկարագրի առանձնահատկություն՝ կարելի է համարել այն, որ երեք համայնքներում էլ մտավոր աշխատանքով զբաղվողների խումբը փոքր տոկոսային տարբերությամբ գերակա խմբերից մեկն է համարվում: Սա թույլ է տալիս պնդել կրթության, որպես ազգային արժեքի, ընկալման մասին՝ անկախ միջավայրից: Տարածական տեղաշարժերը հայկական սփյուռքում անմիջական ազդեցություն ունեն նրա տարբեր

հատվածներում կատարվող էթնոսոցիալական գործընթացների և փոփոխությունների վրա: Վերջիններս ունեն բազմազան ուղղվածություն և պայմանավորված են մի շարք գործոններով՝ կոնկրետ սոցիալ-քաղաքական և տնտեսական միջավայր, խմբի ձևավորման առանձնահատկություններ և այլն: Խմբի ձևավորման առաձնահատկություններն էլ որոշում են համայնքներից յուրաքանչյուրի էթնոմշակութային և սոցիալ-ժողովրդագրական նկարագիրը:

